ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

4 (94). 2017

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

МОДЕРНИЗАЦИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ РА: ЭФФЕКТИВНОСТЬ УПРАВЛЕНИЯ

THE RA ARMED FORCES MODERNIZATION: THE MANAGERIAL EFFICIENCY

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ»

(ԿՈԼԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև
Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի
ստորագրումը.
կանգնած են՝ Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը
և Եվրոպական խորհրդի Նախագահ Դոնալդ Տուսկը,
ստորագրում են ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը
և ԵՄ-ի արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով
գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին.

Բրյուսել, 2017 թ. նոյեմբերի 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (94). **2017**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակահաբեկչության գծով գիտնական-փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Ջ.
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ավետիսյան Վ. Ն.
Գասպարյան Օ. Վ.
Զաքարյան Ա. Բ.
Խաչատրյան Տ. Վ.
Հակոբյան Մ. Հ.
Հովհաննիսյան Գ. Մ.
Ղահրամանյան Ա. Բ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
Յալանուզյան Ա. Կ.
(գլխ. խմբագրի տեղակալ)

Յոլչյան Ն. Ի.
Շահնազարյան Թ. Ն.
Շիրինյան Մ. Ա.
Պողոսյան Բ. Պ.
Սիմոնյան Ս. Վ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Փախչանյան Դ. Բ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախագահ *Սերժ Սարգսյանի* դասախոսությունը Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում 9

Հ. Ս. Քոթանջյան, «Ազգ–բանակ». ՊԱՀՀ-ի կրթական գործընթացի մեկնարկը 18

Մ. Մ. Մարգարյան, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք 21

Ռ. Վ. Աղգաշյան, Ա. Հ. Գրիգորյան, Գ. Ի. Մարգարով, Կիբեռանվտանգության ոլորտում մասնագիտական ներուժի պատրաստումը որպես դրա ապահովման կարևոր միջոց 33

Զ. Դ. Ասատրյան, Ա. Ա. Խրիմյան, Ա. Կ. Յալանուզյան, Երևակայական իրականության տեխնոլոգիաների կիրառմամբ զորքերի պատրաստման որոշ հարցեր ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման համատեքստում 47

Ս. Տ. Չախալյան, ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման համատեքստում «նախնական զինվորական պատրաստության» մակարդակի բարձրացման որոշ հարցեր 59

Ս. Ն. Շահսուվարյան, ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման համատեքստում հայկական զինվորական ժուռնալիստիկայի զարգացման որոշ հարցեր 66

Զ. Ս. Հեռլի, Բարձր ղեկավարության վերահսկողություն և տվյալների վերլուծություն 75

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Կ. Հովհաննիսյան, Ոչ կանոնավոր ռազմական գործողությունների ժամանակ օդածովային գերազանցությամբ հաղթանակի ապահովումը իրաքյան (2003) և սիրիական (2015–2017) պատերազմների օրինակով 88

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Արարատ քահանա Պողոսյան, Հայ Առաքելական Եկեղեցին ազգային-ազատագրական պայքարում. որոշ համամարդկային գաղափարական հարցեր 97

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ. Հարությունյան, Ապստամբական տրամադրությունների և կամավորական շարժման նկատմամբ Վանի հասարակական-քաղաքական շրջանների դիրքորոշման հարցի շուրջ 110

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 123

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ս. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կ. Ս. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Յ. Սայադյան, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ռ. Ա. Սաֆրասյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Սիմոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ս. Սիսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 4 (94)**. 2017**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Аветисян В. Н.*, *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Акопян М. Г.*, *Алексанян А. Дж.*, *Алтунян Г. Р.*, *Варданян А. Г.*, *Гаспарян О. В.*, *Елчян Н. И.*, *Закарян А. Б.*, *Каграманян А. Б.*, *Маргарян В. Г.*, *Мартикян А. М.*, *Мартиросов Л. А.*, *Ованнисян Г. М.*, *Пахчанян Д. Б.*, *Погосян Б. П.*, *Симонян С. В.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Хачатрян Т. В.*, *Шахназарян Т. Н.*, *Ширинян М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

СОДЕРЖАНИЕ

МОДЕРНИЗАЦИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ РА: ЭФФЕКТИВНОСТЬ УПРАВЛЕНИЯ

Лекция Президента *Сержа Саргсяна* в Национальном исследовательском университете обороны 9

Г. С. Котанджян. «Нация – армия». Старт образовательной деятельности НИУО 18

М. М. Маргарян. Цивилизационное измерение политической модернизации как основа для обеспечения стратегического управления . . . . . 21 (31)*

Р. В. Аггашян, А. Г. Григорян, Г. И. Маргаров. Подготовка кадрового потенциала в области кибербезопасности как важное средство ее обеспечения 33 (45)

З. Д. Асатрян, А. А. Хримян, А. К. Яланузян. Некоторые вопросы подготовки войск с применением технологий виртуальной реальности в контексте модернизации ВС РА 47 (57)

С. Т. Чахалян. Некоторые вопросы повышения уровня «начальной военной подготовки» в контексте модернизации ВС РА 59 (65)

С. Н. Шахсуварян. Некоторые вопросы развития армянской военной журналистики в контексте модернизации ВС РА 66 (73)

Дж. С. Херли. Контроль со стороны высшего руководства и анализ данных 75 (87)

ВОЕННЫЕ ИССЛЕДОВАНИЯ

А. К. Оганесян. Обеспечение победы путем достижения превосходства в воздухе и на море во время иррегулярных военных действий на примере Иракской (2003) и Сирийской (2015—2017) войн 88 (95)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

Иерей Арарат Погосян. Армянская Апостостольская Церковь в национально-освободительной борьбе: некоторые общечеловеческие идейные вопросы 97 (108)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

А. А. Арутюнян. К вопросу о позиции общественно-политических кругов Вана в отношении повстанческих настроений и добровольческого движения 110 (120)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян и др. Словарь номера 123 (126)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

Р. В. Агузумцян, кандидат психологических наук, профессор;

Н. У. Аракелян, академик НАН РА;

Л. С. Арзуманян, доктор филологических наук;

Б. Н. Арутюнян, доктор медицинских наук, профессор;

В. М. Арутюнян, академик НАН РА;

Г. Е. Багдасарян, академик НАН РА;

С. А. Галстян, доктор филологических наук, профессор;

С. Г. Галстян, доктор медицинских наук, профессор;

Г. А. Геворкян, академик НАН РА;

К. С. Даниелян, кандидат биологических наук, доктор географических наук;

А. А. Манташян, академик НАН РА;

М. М. Маргарян, доктор политических наук, профессор;

Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА;

Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;

М. М. Мириджанян, доктор медицинских наук, профессор;

К. С. Мосоян, доктор технических наук, профессор;

Р. А. Сафрастян, академик НАН РА,

О. Я. Саядян, доктор географических наук, профессор,

А. Г. Симонян, член-корреспондент НАН РА,

А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (94)**. 2017**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*, *Altunyan G. R.*, *Avetisyan V. N.*, *Ayvazyan L. G.*, *Gasparyan O. V.*, *Hakobyan M. H.*, *Hovhannisyan G. M.*, *Idinyan R. A.*, *Kaghramanyan A. B.*, *Khachatryan T. V.*, *Margaryan V. H.*, *Martikyan A. M.*, *Martirossov L. A.*, *Pakhchanyan D. B.*, *Poghosyan B. P.*, *Shahnazaryan T. N.*, *Shirinyan M. A.*, *Simonyan S. V.*, *Ter-Grigoryants N. G.*, *Vardanyan A. G.*, *Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*, *Zakaryan A. B.*

CONTENTS

THE RA ARMED FORCES MODERNIZATION: THE MANAGERIAL EFFICIENCY

President *Serzh Sargsyan's* lecture at the National Defense Research University 9

H. S. Kotanjian. "Nation – army": NDRU educational process launch . . 18

M. M. Margaryan. Civilizational dimension of political modernization as a basis for ensuring strategic management . . . . . 21 (32)*

R. V. Aghgashyan, A. H. Grigoryan, G. I. Margarov. Developing human resources capacity in the cybersecurity sphere as an important means for ensuring it 33 (46)

Z. D. Asatryan, A. A. Khrimyan, A. K. Yalanuzyan. Some issues of troops preparation via applying virtual reality technologies in the context of the RA Armed Forces modernization 47 (58)

S. T. Chakhalyan. Some issues of increasing the level of "basic military training" in the context of the RA Armed Forces modernization 59 (65)

S. N. Shahsuvaryan. Some issues of the development of the Armenian military journalism within the context of the RA Armed Forces modernization 66 (74)

J. S. Hurley. C-Suite oversight and data analytics 75 (82)

MILITARY STUDIES

A. K. Hovhannisyan. Ensuring the victory by achieving air and maritime superiority during irregular military operations on the example of the Iraq (2003) and Syrian (2015—2017) wars 88 (96)

---

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

Priest Ararat Poghosyan. The Armenian Apostolic Church in the national-liberation struggle: some universal ideological issues 97 (109)

MILITARY HISTORY

A. H. Harutyunyan. To the issue of the stance of the socio-political circles in Van on insurgent moods and volunteer movement 110 (121)

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 123 (128)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

R. V. Aghouzoumtsian, Candidate of Psychological Sciences, Professor;
N. H. Arakelian, Full Member, NAS RA;
L. S. Arzumanyan, Doctor of Philology;
G. Y. Baghdassarian, Full Member, NAS RA;
K. S. Danielyan, PhD in Biology, Doctor of Geography;
S. A. Galstyan, Doctor of Philology, Professor;
S. G. Galstyan, Doctor of Medical Sciences, Professor;
H. A. Gevorkian, Full Member, NAS RA;
B. N. Harutyunyan, Doctor of Medical Sciences, Professor;
V. M. Haroutyounian, Full Member, NAS RA;
A. H. Mantashian, Full Member, NAS RA;
M. M. Margaryan, Doctor of Political Sciences, Professor;
H. H. Matevosyan, Corresponding Member, NAS RA;
E. G. Minasyan, Doctor of Historical Sciences, Professor;
M. M. Miridjanian, Doctor of Medical Sciences, Professor;
K. S. Mossoyan, Doctor of Technical Sciences, Professor;
R. A. Safrastyan, Full Member, NAS RA;
Hov. Y. Sayadyan, Doctor in Geography, Professor;
A. H. Simonyan, Corresponding Member, NAS RA;
H. S. Sissakian, Doctor of Medical Sciences, Professor

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

МОДЕРНИЗАЦИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ РА: ЭФФЕКТИВНОСТЬ УПРАВЛЕНИЯ

THE RA ARMED FORCES MODERNIZATION: THE MANAGERIAL EFFICIENCY

ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ*

Հարգելի՛ գործընկերներ,

Պարոնա՛յք գեներալներ և սպաներ,

Ուրախ եմ գտնվելու Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում: Տասնամյակներ առաջ, երբ մարտի դաշտում մեր կամավորական ջոկատները կենաց-մահու կռիվ էին մղում մեր հայրենիքի համար, երբ օրհասական հարցեր էին նույնիսկ բանակի հանդերձավորումը և թեկուզ ամենապարզունակ զենքով սպառազինելը, որևէ մեկի մտքով չէր անցնում, որ մի օր մենք ունենալու ենք մեկի փոխարեն երեք ռազմական համալսարան: Որևէ մեկը չէր էլ պատկերացնում, որ այդ օրերի դասակի և վաշտի հրամանատարները դառնալու էին գնդապետներ և գեներալներ:

Այսօր մեկնարկում է ավագ սպայական և քաղաքացիական հատուկ ծառայության բարձրագույն և գլխավոր կազմի համար գերատեսչական պիլոտային ծրագիրը: Սա ևս մեկ քայլ է ռազմական կրթության լիարժեք ազգային համակարգի ձևավորման ուղղությամբ: Հասկանալի է, որ սա ընդամենը սկիզբն է, և դեռ ճանապարհ պետք է անցնել այս դասընթացը լիարժեք ակադեմիական մակարդակի ուսուցման վերածելու համար: Ինչպես ասում են՝ ցանկացած ճանապարհ սկսվում է առաջին քայլով:

Մեր բանակը ծնվել է պատերազմի կրակների մեջ: Ձևավորման հենց սկզբից տարերայնորեն կազմավորվող կամավորական ջոկատներին ավելի ուշ միացան խորհրդային բանակի հայազգի բազմաթիվ սպաներ: Մեր այսօրվա գեներալների մեջ կան ինչպես նախկին Խորհրդային Միությունում իրենց ծառայությունը սկսած սպաներ, այնպես էլ ազատագրական շարժման աշխարհազորի ներկայացուցիչներ: Այսպիսով՝ իր ծննդյան օրվանից մեր բանակը եղել և մնում է ժողովրդական բանակ:

Մեզ պարտադրված պատերազմում մեր նորաստեղծ բանակը լուծեց իր առջև դրված խնդիրը և անցած բոլոր տարիների ընթացքում ևս դրված խնդիրները լուծել է հաջողությամբ: Մեր հերոս ընկերներն իրենց կյանքի գնով պաշտպանեցին Արցախն ու Հայաստանը, միաժամանակ դրեցին հայոց հաղթական բանակի հիմքերը: Հասունացել է ժամանակը, իրոք եկել է պահը, երբ մենք պետք է կատարենք նոր և նշանակալի առաջընթաց քայլ:

---

* http://www.president.am/hy/statements-and-messages/item/2017/10/24/president-serzh-sargsyans-lecture-at-NDRU/, 24.10.2017:

Հարգելի՛ ունկնդիրներ,

Մեր բանակն այսօր ուժեղ է և մարտունակ, ունակ է կատարելու իր առջև դրված խնդիրները: Սակայն դա չի նշանակում, թե մեր զինված ուժերը չպետք է կատարելագործվեն և զարգանան:

Մենք այսօր սահմանում ենք նոր՝ անհամեմատ բարձր, նշածող: Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կտրուկ արդիականացումը ժամանակի պահանջն է: Դա նաև թելադրված է ինչպես այսօրվա, այնպես էլ ապագայի մարտահրավերներով:

Ես այսօր խնդիր եմ դնում մշակել բանակի արդիականացման նոր յոթնամյա ծրագիր՝ 2018–2025 թվականների համար: Այդ ծրագիրը պետք է իրականություն դարձնենք համատեղ ուժերով՝ ես, որպես գլխավոր հրամանատար, պաշտպանության նախարարը, Զինված ուժերի հրամանատարական կազմը, մեր զինվորները և ողջ հասարակությունը: Նախարարին հանձնարարում եմ երկամսյա ժամկետում զեկուցել այս ուղղությամբ իր կատարած աշխատանքի մասին: Քննարկումներից և լրամշակումներից հետո այդ ծրագիրը մենք կհաստատենք 2018 թվականի հունվարի 28-ին, այսինքն՝ մեր Բանակի ծննդյան օրը:

Ծրագիրը պետք է լինի այս փուլում մեր պետության գլխավոր խնդիրներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը: Յոթ տարի հետո ներկայումս արդեն իսկ մարտունակ բանակը պետք է հասած լինի որակական նոր՝ բացառիկ մակարդակի:

Արդիականացման առաջին կարևոր ուղղությունը սահուն անցումն է Սահմանադրության փոփոխություններից բխող՝ Զինված ուժերի կառավարման համակարգի նոր պայմանների: «Պաշտպանության մասին» օրենքի նախագիծը, որ այս օրերին քննարկվում է Ազգային ժողովում, լուծում է այդ խնդրի կարևոր, բայց միայն առաջին մասը՝ իրավական ձևակերպումը: Այնուհետև պահանջվելու է մանրակրկիտ աշխատանք՝ ենթաօրենսդրական ակտերի մշակման ու ներդրման և գործնական քայլերը ճիշտ հերթականությամբ իրականացնելու առումով:

Բանակի արդիականացումը վերաբերում է և՛ կազմակերպվածության մակարդակին, և՛ զինատեսակներին, և՛ զինվորականների սոցիալական հարցերին, այսինքն՝ բանակի հետ կապված խնդիրների ողջ համալիրին: Մենք դրանով զբաղվել ենք միշտ, բայց այժմ խնդիր է դրվում արագացնել այդ գործընթացները՝ ապահովելով թռիչքաձև զարգացում: Պետք է շարժվենք առաջանցիկ տեմպերով:

Հաջորդ տարվա բյուջեում, ինչպես գիտեք, նախատեսվում է ռազմական ծախսերի կտրուկ աճ: Աճը, սակայն, միայն մեկ տարով չի սահմանափակվելու, այլ լինելու է շարունակական: Դուք քաջատեղյակ եք, որ վերջին մի քանի տարում կտրուկ բարելավվել են մեր զինատեսակների քանակը և որակը: Այս աշխատանքները շարունակական են լինելու: Տարեցտարի նոր և էական ձեռքբերումներ ենք ունենալու այս ուղղությամբ:

Հարգելի՛ գործընկերներ,

Մենք բոլորս պետք է հստակ գիտակցենք, որ բանակն առանձին և մեկուսի չի կարող զարգանալ, ուստի ժամանակին համընթաց պետք է քայլի մեր ողջ պետությունը: Մենք պետք է ունենանք աշխարհի ամենաարդիականացված բանակներից մեկը: Այսինքն՝ պետք է ունենանք շարունակաբար կատարելագործվող պետություն, որի շնորհիվ նաև արդիականացվում է բանակը: Դա հնարավոր է, և մենք ձեզ հետ, մեր ողջ հասարակության հետ միասին իրականություն ենք դարձնելու այդ նպատակը:

Պետք է բարելավվեն զինվորական ծառայության պայմանները բոլորի համար՝ առաջին գծում կանգնած զինվորից մինչև հրամանատար: Այստեղ մանրուքներ չկան և չպետք է լինեն: Ամեն ինչ կարևոր է՝ սկսած հանդերձանքից, վերջացրած սպայական կազմի բնակարաններով: Սոցիալական ապահովության երաշխիքներն այս հարցում չափազանց կարևոր են:

Կարգապահությունը պետք է լինի ամենաբարձր մակարդակի: Ծնողը զավակ է մեծացնում, բանակ է նրան ուղարկում և պետք է վստահ լինի, որ իր զավակը, զորանոց մտնելով, գտնվում է մի նոր հոգատար ընտանիքում:

Սպան և հրամանատարը նորակոչիկի համար պետք է լինեն ավագ եղբայր և ծնող: Ոչ կանոնադրային հարաբերությունները և անփութությունը պետք է իսպառ բացառվեն: Այդ պատճառով մենք կորուստներ չպետք է ունենանք: Դրանք անտեղի կորուստներ են: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնենք բուժսպասարկման խնդիրներին: Նոր մակարդակի պետք է բարձրացվի այդ ոլորտի աշխատանքը:

Ամիսներ անց Երևանի պետական բժշկական համալսարանում իր դռները կբացի տարածաշրջանում ամենաարդիական վերականգնողական կենտրոնը զինհաշմանդամների համար: Այն պետք է դառնա զինհաշմանդամների բուժման, սոցիալական պաշտպանության և վերաինտեգրման միասնական հասցե:

Այսօր բավական լուրջ առաջընթաց է գրանցվել Հայաստանի բժշկական կենտրոնների վիճակի առումով՝ թե՛ Երևանում, թե՛ մարզերում: Ցավոք, մեր զինված ուժերի կենտրոնական հոսպիտալն այլևս չի համարվում արդիական՝ գերժամանակակից այլ հաստատությունների հետ համեմատ: Կասկածից վեր է, որ սպային, զինծառայողին և նրա ընտանիքին սպասարկող բուժհաստատությունը պետք է լինի լավագույններից մեկը երկրում: Ես հանձնարարել եմ պաշտպանության նախարարին ավարտին հասցնել նոր հոսպիտալի տեխնիկական առաջադրանքի մշակումը և նախագծման աշխատանքները: Վստահ եմ, որ տեսանելի ապագայում մենք սկսելու ենք այդպիսի հոսպիտալի շինարարություն:

Հարգելի՛ ունկնդիրներ,

Մենք կատարեցինք առաջին կարևոր քայլը մեր լավագույն կադրերին դեպի զինվորական մասնագիտություն գրավելու ուղղությամբ: Այլևս իրականություն

է Հայաստանի ամենագեղատեսիլ վայրում, գերժամանակակից պայմաններում գործող Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը: Օրեր անց հենց այնտեղ ենք նշելու մեր մարտական ընկերոջ 60-րդ տարեդարձը: Այսօր եկել է պահը լրջորեն մտածելու Վազգեն Սարգսյանի անվան ռազմական և Մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմաավիացիոն համալսարանների արդիականացման մասին:

Այս ողջ շղթայի յուրաքանչյուր օղակը՝ սահմանի առաջին գծից մինչև թիկունքի խոշոր բուժհաստատություն, պետք է գործի ճկուն, համակարգված, անխափան և արագ: Յուրաքանչյուր օղակ պետք է գործի առավելագույն արդյունավետությամբ:

Բանակն այն տեղն է, որտեղ պետք է լրացուցիչ կրթություն ստանան թե՛ շարքայինը, թե՛ սպան: Բանակը պետք է լինի մարդու շարունակական աճի կարևոր հանգրվան և ոչ սոսկ ընդգրկի հայրենիքը պաշտպանելու, հայրենիքի առջև պարտքը կատարելու ժամանակահատվածը: Զորամասերում պետք է պայմաններ ստեղծվեն զինծառայողների գիտելիքները հարստացնելու համար:

Ես ուզում եմ այստեղ մի փոքրիկ շեղում կատարել և ասել՝ բոլոր այն շահարկումները, որ այս օրերին մենք տեսնում ենք՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու հետ կապված նոր համակարգի անցնելու և տարկետման իրավունքը վերացնելու, ուղղակի անհեթեթություն է: Ժամանակին, երբ մենք փորձում էինք անցնել այս համակարգին՝ ես նկատի ունեմ 15–16 տարի առաջ, էլի նույն շահարկումներն էին, բայց այն ժամանակ մեր խնդիրները մի փոքր այլ էին, և մենք չգնացինք մինչև վերջ: Սակայն այն ժամանակ այս հարցը ուսումնասիրելով՝ մենք տեսանք, որ երբեք որևէ մեկին երկու տարի բանակում ծառայելը կամ երկու տարի, երեք տարի, չորս տարի այլ աշխատանքով զբաղվելը չի խանգարել հասնելու գիտության մեջ ամենաբարձր հաջողությունների: Այնպես որ՝ խնդրում եմ նման առիթի դեպքում այս շահարկումներին ուղղակի շատ կոշտ պատասխանել: Ուզում եմ տեղեկացնել, որ ես էլ անձնապես ուսումնառության ընթացքում ուսումս կիսատ եմ թողել, երկու տարի ծառայել եմ, այնուհետև վերադարձել ու շարունակել եմ: Անկեղծորեն ասած՝ ես մեկ այլ ուսանող էի առաջին և երկրորդ կուրսերում՝ սկզբում, բոլորովին այլ ուսանող էի երկրորդ կուրսից հետո: Եվ քանի որ թեմայից մի փոքր շեղվեցի, ուզում եմ նաև մեկ այլ խնդրի հետ կապված ձեզ դարձյալ խնդրել և ակտիվության կոչ անել՝ կապված այն խոսակցությունների հետ, որ պետք է անցնել պրոֆեսիոնալ բանակի ձևավորման, որ բոլորը պետք է լինեն պայմանագրային և այլն: Նախ՝ մարդիկ, ովքեր խոսում են այդ մասին, բնավ տեղյակ չեն, որ մեր բանակի գրեթե երկու երրորդը, այո՛, պրոֆեսիոնալ, պայմանագրային ծառայողներ են՝ պայմանագրային սպաներ, ենթասպաներ, քաղաքացիական ծառայողներ: Եվ երկրորդ՝ այդ մարդիկ ընդհանրապես չեն հասկանում, թե ի՞նչ է նշանակում պաշտպանական անվտանգություն: Եվ երբ մենք 18 տարեկաններին զորակոչում ենք, դա միայն նրա համար չէ, որպեսզի այսօր նրանք սահմանը պաշտպանեն. մեզ անհրա-

ժեշտ է մոբիլիզացիոն ռեզերվ, և եթե տարիներ շարունակ մենք 18 տարեկաններին չզորակոչենք և զորակոչենք կամ պայմանագրեր կնքենք միայն այն մարդկանց հետ, ովքեր ցանկանում են ծառայել, դա կնշանակի, որ մեր մոբիլիզացիոն ռեզերվի մի մեծ մասը կյանքում զենք չի տեսել և ի վիճակի չէ այդ զենքն օգտագործել: Այսինքն՝ երկու տարվա զորակոչը բազմաթիվ խնդիրներ լուծող գործընթաց է: Նույնիսկ չեմ ուզում այդ խնդիրներին անդրադառնալ: Այնպես որ՝ պետք է ակտիվ լինեք: Հասկանու՞մ եք՝ մարդիկ են խոսում բանակի, անվտանգության մասին, ովքեր, անկեղծ ասած, երևի մի 5–10 էջ էլ չեն կարդացել կամ գործնականում չեն առնչվել այս խնդիրների հետ, իսկ մարդիկ, ովքեր գիտեն, ովքեր տեղյակ են, ովքեր կյանքի փորձ ունեն, ուղղակի, շատ ներողություն բառիս համար, զահլա չունեն նրանց հետ խոսելու կամ վիճելու: Բայց այդպես չի լինի, մենք չենք կարող այդպես զարգանալ:

Ռազմաարդյունաբերական համալիրը ևս լուրջ քայլեր է կատարում՝ արդիականանալու և մեր զինված ուժերը ժամանակակից տեխնիկայով ու սպառազինությամբ հագեցնելու ուղղությամբ: Մշակվել է «Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ծրագիրը», որը, մի կողմից, շատ հավակնոտ է, մյուս կողմից՝ ոլորտի նկատմամբ մեծ հետաքրքրություն արթնացնող, հատկապես՝ երիտասարդների շրջանում:

Ակնհայտ է, որ միայն մեր զինված ուժերի համար միջոցներ արտադրելով՝ մեր ռազմաարդյունաբերությունը մրցունակ չի լինի: Հետևաբար, իմ կողմից դրված խնդիրն է՝ լիարժեք օգտագործել մեր մրցակցային առավելությունները՝ հարուստ ավանդույթները, միջազգային մակարդակով մրցունակ գիտնականների առկայությունը, և դրանց վրա կառուցել ռազմական գիտության և արդյունաբերության վաղվա օրը: Հայաստանը կարող է իր ուրույն տեղը զբաղեցնել ժամանակակից տեխնոլոգիաներ արտադրող և արտահանող երկրների շարքում:

Հարգելի՛ գործընկերներ,

Մեր ժողովուրդը բարձր է գնահատում իր պաշտպանների անձնուրաց ծառայությունը: Կարևոր է, որ ծառայությունն ավարտելուց հետո հայրենիքը նույնպես իր պարտքը հատուցի զինվորականներին: Այո՛, ասել եմ և կրկնում եմ՝ մեր սպայակույտը հայ մտավորական սերուցքի մի նոր և յուրատեսակ խումբ է: Հետևաբար, մեր սպայակազմը պետք է ապրի իր այդ հասարակական դիրքին վայել կյանքով: Մեր սպան պետք է ունենա կյանքի ու աշխատանքի լավագույն պայմաններ և աշխատավարձ, իսկ զորացրվելուց հետո՝ արժանավայել թոշակ:

«Զինվորական ծառայության մասին» նոր օրենքի նախագծով նախատեսվում է լրջորեն վերանայել սպայական անձնակազմի համար բնակարանային խնդրի լուծման հարցը: Փորձը ցույց է տալիս, որ տարիներ շարունակ ձգվող, բազմաթիվ կոռուպցիոն ռիսկեր պարունակող, ավելի շատ ջլատող, քան հարց լուծող բնակարանային հերթագրման ծրագիրն իրեն չի արդարաց-

րել: Դրա փոխարեն կարելի է փորձել անցում կատարել մատչելի հիպոտեկային վարկավորման ծրագրի: Թեև այդ ծրագրի իրականացումը լրացուցիչ ֆինանսական բեռ է ստեղծում մեր պետական բյուջեի համար, հանձնարարել եմ մանրամասն ուսումնասիրել և լուծում տալ խնդրին՝ ծրագրի իրագործման նպատակով: Եվ ես գրեթե վստահ եմ, որ մենք հունվարի 1-ից կարողանալու ենք այս համակարգն արդեն գործադրել:

Մենք նաև պատրաստ ենք լուրջ համաֆինանսավորման աղբյուր գտնել մեր այն սպաների համար, ովքեր կցանկանան միանալ կուտակային կենսաթոշակային ծրագրին՝ ի լրումն առկա զինվորական թոշակի՝ իրենց ծերության համար ապահովության պաշար ձևավորելու նպատակով: Նախնական հաշվարկը թույլ է տալիս ակնկալել, որ իր աշխատավարձի 5 տոկոսը հիմնադրամում հավաքող սպան 65 տարեկանից հետո ստանալու է ամսական այնքան թոշակ, որքան իր զորացրման պահին զբաղեցրած պաշտոնին հավասար հաստիքում ծառայող սպայի աշխատավարձն է:

Ընթացիկ տարվա հունվարի 1-ից գործունեությունը սկսեց Զոհված և հաշմանդամություն ունեցող զինծառայողների հիմնադրամը: Տա Աստված, որ այդ հիմնադրամը երբեք անհրաժեշտ չլինի, բայց իրականությունը մի փոքր այլ է: Այս ծրագրով մենք լուծում ենք մինչև օրս մեր ամենախոցելի խումբը հանդիսացող՝ զոհված և հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին ֆինանսական օգնության խնդիրը: Դա մեր ազգային երախտագիտության դրսևորումն է մեր հերոսներին: Հիմնադրամը մինչև օրս գործող ամենաթափանցիկ և հաշվետու ընթացակարգերն է որդեգրել: Պետք է խթանենք նաև այս հիմնադրամին կամավոր վճարումները:

Այս տարի մենք ամբողջությամբ լուծում ենք նաև զոհված զինծառայողների անօթևան ընտանիքների և 1-ին կարգի հաշմանդամների բնակարանային խնդիրները: Ինչպես հիշում եք, հայտնի ժողովի ժամանակ այդպիսի խնդիր դրվեց, և պաշտպանության նախարարը դեկտեմբերի վերջին կզեկուցի բոլորին, որ այս խնդիրն այդ պահի դրությամբ ամբողջովին լուծված է: Այս քաղաքականությունը շարունակվելու է:

Հարգելի՛ ունկնդիրներ,

Մենք մինչև հիմա պահպանել ենք ռազմական հավասարակշռությունը տարածաշրջանում: Պահպանելու ենք այսուհետ ևս: Չենք ներքաշվելու քանակական մրցավազքի մեջ, գերադասելու ենք որակական լուծումները:

Փողն, իհարկե, կարևոր է, բայց ավելի կարևոր է խելքն ու ունակությունը: Մենք փողը ծախսելու ենք խելամտորեն, շարունակելու ենք այս երկուսի՝ փողի և խելամտության համադրումը:

Այն, ինչ անհրաժեշտ է մեր զինված ուժերի համար, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, առկա են և միշտ լինելու են: Բանակի համար ոչինչ չենք խնայելու: Ես դա խոստանում եմ:

Արդի բանակը, սակայն, առաջին հերթին հենց դուք եք՝ սպայակազմը:

Առանց սպայակազմ՝ բանակ լինել չի կարող: Միայն սպաներից կազմված ստորաբաժանումներ կարող են լինել, բայց միայն զինվորներից բաղկացած ստորաբաժանումներ չեն կարող լինել: Առավելագույնը մի քանի ժամվա ընթացքում միանգամից հրամանատար է ջոկվում: Սա բոլորը պետք է գիտակցեն: Սա չի նշանակում, որ մենք թերագնահատում ենք մեր զինվորներին: Բոլորը պետք է գիտակցեն, որ հիմնական գործող անձը, բանակ ձևավորողը սպան է:

Այս բոլոր բարեփոխումները կիրականան, եթե միայն ինքներս գտնենք փոխվելու և մեր շուրջը փոփոխության ձգտում սերմանելու կարողությունը: Սա էլ չափազանց կարևոր հանգամանք է: Երեկ ես ոստիկանությունում հանդիպում եմ ունեցել և այդ հանդիպման ժամանակ կրկնել եմ այն, ինչ տարիների ընթացքում ասում եմ՝ եթե որևէ կառույցի, որևէ ստորաբաժանման, որևէ հիմնարկի միջին և ստորին օղակները տեսնեն, որ այդ կառույցի, ստորաբաժանման, հիմնարկի ղեկավարությունը իրականության մեջ պայքարում է հոռի երևույթների դեմ, որ նրա համար անընդունելի են այդ, երբ տեսնեն, որ ղեկավարությունը ձգտում է նորին, միշտ ձգտում է փոփոխվել այս արագ փոփոխվող աշխարհում, ապա այնտեղ գործերը կստացվեն: Բայց երբ ներքևներում, միջին օղակներում տեսան, որ միայն իրենցից պահանջում են, այն էլ ձևական, իսկ ղեկավարությունը դա չի անում՝ ոչ մի բան էլ չի ստացվելու: Եվ ես չէ, որ ձեզ պետք է ասեմ՝ չէ՞ որ, բանակում օրենք կա՝ արա՛ այնպես, ինչպես ես: Եթե հրամանատարը չի կարողանում կրակել, նա չի կարող ենթակային սովորեցնել ճիշտ կրակել: Սա ակնհայտ է:

Օրինապաշտ, հայրենասեր, հմուտ սպան ոչ միայն հաղթանակի, այլև մեր առօրյայի կռողն է: Ուստի, առաջին հերթին կոչ եմ անում հենց ձեզ. աչալուրջ լինել ձեր պարտականությունների կատարման ընթացքում, արմատախիլ անել կոռուպցիոն յուրաքանչյուր դրսևորում, ճանապարհ հարթել երիտասարդ սպաների առաջընթացի և անցնցում սերնդափոխության համար:

Մեր զինված ուժերում պետք է ամրապնդվեն փոխադարձ հարգանքի և միասնության վրա հիմնված հարաբերությունները: Մեզ պետք է մեկ ընտանիքի շունչ ունեցող բանակ, և դրա հիմնական պատասխանատուները բոլոր մակարդակների հրամանատարներն են:

Հարգելի՛ գործընկերներ,

Տարօրինակ կլիներ, եթե չանդրադառնայի Հայաստանի շուրջ ձևավորվող ռազմավարական իրավիճակին: Ընդհանուր իրավիճակը գնահատում եմ կայուն, սակայն այդ կայունությունը փխրուն է և լի բազմաթիվ անկանխատեսելի հանգամանքներով: Մեր սահմաններից ոչ շատ հեռու ծավալվում են լրջագույն ռազմաքաղաքական գործընթացներ, որոնց մենք ուշի-ուշով հետևում ենք: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ իմ սկզբունքային մոտեցումները վերջերս ներկայացրել եմ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ամբիոնից: Այնտեղ ասածներս այժմ նորից այստեղ կրկնելու կարիքը չեմ տեսնում:

Ցանկանում եմ, այնուամենայնիվ, ընդգծել մի քանի հանգամանք: Առաջին՝ այս փուլում մենք Արցախում ռազմական խնդիր լուծելու կամ դնելու նպատակ չունենք: Արցախի քաղաքացիական բնակչությունը հակառակորդի անխտրական կրակից պաշտպանելու խնդիրը մենք հիմնականում արդեն լուծել ենք և լուծել ենք վաղուց: Խնդրի խաղաղ կարգավորումը, ի թիվս այլ պայմանների, պետք է իսպառ բացառի որևէ ռազմական սպառնալիք Արցախի խաղաղ բնակչության հանդեպ: Երկրորդ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, իսկապես, չունի ռազմական լուծում: Ուստի, հնարավոր չէ մեկ ձեռքով կրակել, իսկ մյուսով բանակցել այդ լուծումը գտնելու նպատակով: Կա՛մ բանակցում ենք, կա՛մ էլ՝ կրակում: Երկուսին էլ մենք պատրաստ ենք:

Բանակցությունները պետք է տեղի ունենան զենքի լռության շնորհիվ ձևավորվող փոխադարձ վստահության պայմաններում: Կարճաժամկետ տակտիկական կամ քարոզչական առավելություն ստանալով՝ կողմերից ոչ մեկը որևէ էական հարց իր համար չի լուծում: Ընդհակառակը, սադրանքները պարզապես անհնարին են դարձնում լուրջ բանակցությունները:

Այստեղ էլ ուզում եմ մի փոքրիկ շեղում կատարել թեմայից և ասել, որ ինձ համար անկեղծորեն շատ տարօրինակ իրավիճակ է ստեղծվել, երբ ժնևյան բանակցություններից հետո ադրբեջանական կողմը մի հատուկ չարությամբ փորձում է շեշտել, որ ես ինչ-որ պայմանավորվածություններ եմ խախտել: Անկեղծորեն տարօրինակ է, և ես մեր հաջորդ հանդիպմանը շատ անհամբեր սպասում եմ, որպեսզի իմ գործընկերոջը հարցնեմ, թե ինչն է նրանց զայրացրել: Ընդ որում, խոսում են մարդիկ, ովքեր, փաստորեն, ընդհանրապես տեղյակ չպետք է լինեն մեր խոսակցությանը, որովհետև մենք երկուսով ենք խոսել, և եթե մենք պայմանավորվածություն ենք ունեցել որևէ մեկին չասելու, ապա ինչպես են իր օգնականները, կամ, չգիտեմ, տեղակալները և այլն, թեմային ծանոթացել: Ձեզ հավատացնում եմ՝ մեր խոսակցությունից ես կես բառ անգամ որևէ տեղ չեմ ասել: Իսկ ի՞նչ եմ ասել Շվեյցարիայի հայ համայնքի հետ հանդիպմանը՝ ես ասել եմ, որ որևէ հայ ղեկավար չի կարող փաստաթուղթ ստորագրել, որը խաթարելու է Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը: Սա՝ մեկ: Երկրորդ՝ ես ասել եմ, որ Ղարաբաղն Ադրբեջանից դուրս պետք է լինի: Եվ երրորդ՝ ասել եմ, որ Ադրբեջանի նախագահն էլ է մտահոգված իր զինվորների անվտանգությամբ և զոհվելով: Այսինքն՝ այստեղ որևէ նոր բան կա՞: Ես կրկնել եմ այն, ինչ 20 տարի ասում եմ, ինչ 25 տարի մենք խոսում ենք: Այսինքն, եթե որևէ մեկին թվում էր, թե եթե մենք Ժնևում բանակցել ենք, ասել ենք և հայտարարություն ենք ընդունել, որ լարվածությունը պետք է թուլանա՝ դա չի նշանակում, որ Ղարաբաղի անկախության ձգտումն էլ պետք է թուլանա: Անկեղծ ասած, ինձ համար շատ տարօրինակ է:

Մենք վրեժի և կոլեկտիվ պատժի գործողություններ չենք իրականացրել, չենք իրականացնում և չենք էլ իրականացնելու: Սակայն ամեն մի ռազմական կորստի դիմաց լինելու է հակառակ կողմի զինվորականների դեմ ուղղված հատուցման գործողություն:

Իմ այս շեշտադրումների երրորդ խումբը մեր գաղափարախոսության մասին է: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը էթնիկական և կրոնական բնույթ չի կրում: Մենք որևէ խնդիր չունենք ո՛չ ադրբեջանցի ժողովրդի, ո՛չ էլ առավել ևս մահմեդական կրոնի հետ: Մենք վստահ ենք, որ ադրբեջանցի ժողովուրդը խաղաղություն է ցանկանում, պարզապես այդ ցանկությունը պետք է ճիշտ հունի մեջ գցել:

Արցախի ազատագրական շարժման ամենաառաջին իսկ օրվանից մենք ամեն ինչ արել ենք այդ պահին գործող օրենքի և միջազգային իրավունքի շրջանակներում: Մենք իսկապես մեր առջև խնդիր ենք դրել բոլոր գործողություններն իրականացնել այն ժամանակվա գործող ԽՍՀՄ օրենքին և միջազգային իրավունքին համապատասխան: Չգիտեմ՝ ինչքանով մենք պետք է շնորհակալ լինենք մեր ավագ ընկերներին, ովքեր կարողացել են այդ ճիշտ գաղափարը ներարկել մեզ: Եվ հենց այս պատճառով մենք հստակորեն ասում ենք, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը, կոնֆլիկտը տարբերվում է նախկին Խորհրդային Միության տարածքում եղած բոլոր կոնֆլիկտներից՝ ոչ միայն այն պատճառով, որ այս կոնֆլիկտների ծագումնաբանությունն է տարբեր, այլ առաջին հերթին այն պատճառով, որ ամեն ինչ արվել է օրենքին և իրավունքին համապատասխան:

Հարգելի՛ ունկնդիրներ,

Պատմության ընթացքում և նոր ժամանակաշրջանում մենք դիմակայել ենք ամենաանհավատալի պայմաններում և շարունակել ենք մեր ընթացքը: Պատերազմի սկզբնական շրջանում մի արտասահմանցի ինձ հարցրեց՝ իսկ ինչի՞ վրա եք հույսներդ դրել: Պատասխանեցի, որ մենք շատ բարեկամներ ունենք, բայց բացի ինքներս մեզնից և Տեր Աստծուց, ուրիշ ոչ մեկի վրա մենք հույս չենք դնում:

Այդ վստահությամբ մենք այսօր էլ շարունակում ենք կառուցել ժամանակակից պետություն, որը լինելու է ամուր և մրցունակ, ունենալու է բարձր տեխնոլոգիաներով և գերարդիական սպառազինությամբ զինված բանակ: Եվ դուք հատուկ դերակատարում ունեք այս տեսլականը կյանքի կոչելու գործում:

Ուզում եմ, որպեսզի բոլորդ գիտակցեք՝ այն ժամանակը, որ հատկացնում եք գիտելիք ձեռք բերելուն՝ ամենակարևոր ժամանակահատվածն է մարդու համար, և այդ ժամանակահատվածը պետք է արդյունավետ օգտագործել՝ անկախ նրանից, թե ինչպիսին է գիտելիք մատուցողի որակը. ես այստեղ որևէ վատ բան չեմ ուզում որևէ մեկին ասել: Բայց դա ժամանակ է, որ դուք պետք է գիտելիք կուտակեք: Առանց գիտելիքի՝ չկա առաջընթաց:

Շնորհակալ եմ ուշադրության համար և բոլորիդ հաջողություն եմ մաղթում:

«ԱԶԳ–ԲԱՆԱԿ». ՊԱՀՀ-Ի ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵԿՆԱՐԿԸ*

Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ, գեներալ-լեյտենանտ, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր (ՀՀ), ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի հրավիրված առաջատար պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ

Մեծարգո՛ պարոն Նախագահ,
Հարգելի՛ պարոն Նախարար,

Պարոնա՛յք գեներալներ, սպաներ և քաղաքացիական հատուկ ծառայողներ, հյուրեր,

2016 թ. հունվարի 28-ին այս դահլիճում կայացավ Պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի հանդիսավոր բացումը՝ հանրապետության Նախագահի առաջնորդությամբ: Դրան մասնակցում էին պաշտպանության նախարարության ու Զինված ուժերի ղեկավարության ներկայացուցիչներ, մեր ամերիկյան ու ռուսաստանյան խորհրդատուներ և դեսպաններ: Այն ժամանակ գործում էր միայն համալսարանի գիտահետազոտական բաղադրիչը՝ ի դեմս Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի: Այսօր կայանում է համալսարանի կրթական բաղադրիչի հանդիսավոր մեկնարկը:

Հանրապետության անվտանգային քաղաքագիտության համար սույն կարևոր իրադարձությունը հնարավոր է դարձել շնորհիվ նախկին Պաշտպանության նախարար, գործող Նախագահ պարոն Սարգսյանի, որի հովանավորությամբ 2003 – 2004 թվականներին մշակվեց և փուլայնորեն իրագործվում է Հայաստանի պետական «խելացի ուժի» այս գործիքի կայացումը:

Համալսարանի բացումից անցած ժամանակահատվածը կարելի է գնահատել որպես արգասաբեր:

Ավելի են սերտացել և ոլորտների առումով ընդլայնվել մեր կապերը գերազանցության գլխավոր կենտրոնների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի ու Հարվարդի համալսարանի, Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի հետ: Այդ համագործակցությունը դրսևորվել է ինչպես նրանց մեթոդաբանական աջակցությամբ, այնպես

* Զեկուցում ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կրթական գործունեության մեկնարկը ազդանշող հանդիսավոր նիստում (24.10.2017):

էլ մեր երիտասարդ գիտնականների տարաժամկետ ստաժավորումների ձևով:

Դրա արդյունք է Հայաստանի կիբեռռեսուրսների կառավարման համակարգի երկու անկյունաքարային փաստաթղթերի մշակումն ու փորձաքննությունը: Դրանցից առաջինը կիբեռանվտանգության ազգային ռազմավարության նախագիծն է, որը պաշտոնապես ներկայացվել է ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությանը:

Մյուսը Հայաստանի կիբեռռեսուրսների կառավարման ազգային համակարգի նախագիծն է: Դրանում առաջարկվում է միջգերատեսչական խորհրդատվական մարմնի՝ տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների գծով ղեկավարների խորհրդի ձևավորում: Խորհրդի կազմում նախատեսվում է ներգրավել գերատեսչությունների ղեկավարների պրոֆիլային տեղակալներին և ոլորտի մասնավոր հատվածի առավել հեղինակավոր ներկայացուցիչների: Հայաստանի և Արցախի դեմ պատերազմի վերսկսման մեծ հավանականության պայմաններում առաջնային խնդիր է տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների և կիբեռռեսուրսների միջգերատեսչական կառավարման համակարգում որպես գլխամասային գերատեսչություն պաշտոնապես ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների գծով ղեկավարների խորհրդի նախագահությունը հանձնելով պաշտպանության նախարարության ներկայացուցչին:

Տվյալ ուղղությամբ մեր համալսարանի հետագա զարգացման տրամաբանական քայլ կլինի գործող կենտրոնի կերպափոխմամբ Ազգային կիբեռռեսուրսների կառավարման ռազմավարության ինստիտուտի ստեղծումը: Այն կդառնա Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի և ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի հետ կիբեռոլորտում հաշվեկշռված հարաբերությունների պահպանման, ինչպես նաև ԱՄՆ-ի գերազանցության պետական գլխավոր և մասնավոր կենտրոնների հետ արգասաբեր առնչությունների զարգացման միակ հնարավոր պետական հարթակը:

Գիտահետազոտական ոլորտում առանձնանում է «Ազգ–բանակ» հայեցակարգի մշակումը: Կարևոր արգասիքներից են նաև տարածաշրջանային անվտանգության դինամիկայի ռազմավարական գնահատումները և դրանց հիման վրա Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությանը ներկայացվող առաջարկությունները: 22 վերլուծական զեկուցագրերում Հայաստանի անվտանգային շահերի տեսանկյունից ուսումնասիրվել են Հարավային Կովկասում ու հարակից տարածաշրջաններում ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Իսրայելի, ՀԱՊԿ-ի, Եվրասիական տնտեսական միության, ՆԱՏՕ-ի, Եվրամիության, Վրաստանի ու Ադրբեջանի դերակատարությունը, ինչպես նաև քրդական գործոնը և Սիրիական ճգնաժամը: Առանձնակի ուշադրության է արժանի տիեզերական հեռադիտական միջոցների՝ որպես քաղաքական-դիվանագիտական զսպման գործիքարանի կիրառման վերա-

բերյալ առաջարկությունը: Հրապարակվել են նաև քրդական գործոնի և Իրանի տարածաշրջանային քաղաքականության վերլուծություն բովանդակող կոլեկտիվ մենագրությունները:

ՊԱՀՀ-ի կրթական գործառույթներն իրականացնում է Ռազմավարական պաշտպանական անվտանգային կրթության ազգային ինստիտուտը: Դրա գործունեությունը կազմակերպված է արևմտյան մոդելով՝ գիտելիքի ստեղծում և տեղափոխում լսարան: Ինստիտուտը մշակել է գերատեսչական վերապատրաստման փորձնական դասընթացի «ՀՀ պաշտպանական համակարգի բարեփոխումների ռազմավարական ուղենիշները» ծրագիրը: Այն ստեղծվել է պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքների հաշվառմամբ իրագործվող պաշտպանական բարեփոխումների ամբողջ ծավալն ընդգրկող, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի ավելի քան քսան համարներում հրապարակված փորձագիտական-վերլուծական նյութերի հիման վրա: Դրանց մի մասը ամփոփվել է ԱՈՀԻ-ի հրատարակած «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները» երկհատոր գիտափորձագիտական–ուսումնական ձեռնարկում:

Նախատեսվում է այս դասընթացի արդյունքների հաշվառմամբ 2018 թ. իրականացնել միջգերատեսչական ձևաչափով վերապատրաստման ծրագիր, ինչպես նաև անհրաժեշտ հիմքեր ստեղծել միջգերատեսչական ձևաչափով մեկամյա մագիստրոսական ծրագրերի իրականացման համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՔ

Մ. Մ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ

Քաղաքական արդիականացումը մի բազմաչափ գործընթաց է, որն ապահովում է քաղաքական համակարգի հաստատությունների ժողովրդավարական կառավարման որակական զարգացումը: Այդ առումով քաղաքական արդիականացման գլխավոր ուղղություններն են՝ իր խորհրդանիշներով ու արժեքներով ճկուն քաղաքական համակարգի ձևավորումը, վարչական մեքենայի արդյունավետ գործառումը, պետութենաշինության մշակույթի զարգացումը և ազգային անվտանգության համակարգային ապահովումը: Սակայն ժողովրդավարացման ալիքների շրջանակներում բոլոր պետությունները՝ Սոմալիից մինչև Շվեյցարիա, արդիականացել են այն տարբերությամբ, որ ժամանակի և տարածության մեջ տեղի ունեցող փոփոխությունների որակական բնույթն ու արդյունքները նրանց քաղաքական համակարգի համար եղել են խիստ տարբեր[1]: Հենց այդ նկատառումներով էլ փաստենք, որ քաղաքական արդիականացումն ունի սոցիո- և էթնոմշակութային արժեքային կողմնորոշիչներ:

Համընդհանրացման և նոր տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացման շրջանակներում որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք որոշիչ տեղ և դեր ունի արդիականացման քաղաքակրթական չափումը, որը, մի կողմից, ենթադրում է պետական իշխանության ժողովրդավարացում և ըստ այդմ՝ ազգային անվտանգության ապահովման համակարգի զարգացում, մյուս կողմից՝ մեծացնում է կառավարող և ընդդիմադիր ընտրանու պատասխանատվությունը: Արդիականացման քաղաքականության իրացման արդյունավետ գործիքների ու մոտեցումների ստեղծմամբ ռազմավարական կառավարումը հնարավորություն է տալիս քաղաքակրթական չափման բնականոն արդիականացումը դարձնելու կառավարման ամենօրյա գործընթացի բաղկացուցիչ՝ այդ գործընթացի ձևական բնույթը վերածելով գործառականի: Որպես այդպիսի գործիքներ ծառայում են՝ նպատակակենտրոն կառավարումը և ցուցանիշների հաշվեկշռված համակարգը:

---

[1] Տես *Ս. Хантингтон.* Третья волна. Демократизация в конце XX века. Пер. с англ. М., 2003; *նույնի՝* Политический порядок в меняющихся обществах. Пер. с англ. В. Р. Рокитянского. М., 2004:

Այս դիտանկյունից ՀՀ-ում «Ազգ–բանակ» գաղափարի հայեցակարգային կիրառման համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ ռազմավարական կառավարումը, ազգի համախմբման համար ստեղծելով բարենպաստ պայմաններ, նաև նպաստում է, որ կառավարող ընտրանին դրսևորի անհրաժեշտ քաղաքական կամք և մեծացնի «վերևից» իրականացնող շարունակական բարեփոխումների արդյունավետությունը:

1.1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԲԱԶՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքական արդիականացման՝ որպես ժողովրդավարական բարեփոխումների համալիրի հիմքում դրված է քաղաքական կառավարման ընդհանուր մոդելի կիրառության հիմնավորման գաղափարը: Այս մոդելի հաստատման և արդյունավետ գործառության համար ենթադրվում է **ավանդական (փակ)** հասարակությունից անցում դեպի **արդիական (բաց)** հասարակություն, որը գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալական շարժունակության, արժեքային և նորմատիվ համակարգերի վերակառուցման կամ արմատական փոփոխության արդյունք է[2]:

Արդիականացման գաղափարախոս Շ. Էյզենշտադտը դեպի արդիական հասարակություն անցում է համարում փոփոխության այն գծային գործընթացները, որոնք իրենց հեղափոխականացնող բնույթով հանդերձ հաստատվել են Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում դեռ 17–19-րդ դարերում, ապա՝ 19–20-րդ դարերում տարածվել Հարավային Ամերիկայում, Ասիայում, Աֆրիկայում[3]: 1950-1960-ական թվականներից՝ ապագաղութացմամբ պայմանավորված, քաղաքական արդիականացումը բազմակողմանիորեն ուսումնասիրվում է որպես քաղաքական համակարգի հաստատութենական-սահմանակարգային բարեփոխումների մի այնպիսի ամբողջություն, որը ենթադրում է քաղաքական փոփոխությունների, կայունության, անվտանգության և օրինականության բազմաչափ փոխպայմանավորվածություն:

Ըստ Ս. Հանտինգտոնի՝ «Արդիականացումը ներառում է ինդուստրացումը, ուրբանացումը, գրագիտության, կրթվածության, բարեկեցության և սոցիալական հոգսի աճող մակարդակը, ինչպես նաև ավելի բարդ ու բազմակողմանի մասնագիտական կառուցվածքներ: Սա գիտական և ինժեներական գիտելիքների ծավալման ցնցող արդյունք է, ... արդի հասարակությունները կարող են իրար ավելի նման լինել, քան ավանդականները, երկու պատճառով: Նախ. արդի հասարակությունների միջև ավելի մեծ փոխազդեցությունը կարող է չծնել ընդհանուր մշակույթ, սակայն այն հեշտացնում է տեխնոլոգիաների, գյուտերի և կազմակերպվածքի փոխանցումը մի հասարակությունից մյուսին մի այնպիսի արագությամբ և աստիճանով, որոնք ավանդական

[2] Տես *Մ. Մարգարյան*, Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր: Ե., 2004, էջ 6:

[3] Տես *Ш. Эйзенштадт*. Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций. Пер. с англ. А. В. Гордона, под ред. Б. С. Ерасова. М., 1999, сс. 13–14:

աշխարհում հնարավոր չէին: Երկրորդ. ավանդական հասարակությունը հիմնված էր գյուղատնտեսության վրա, մինչդեռ արդի հասարակությունը հիմնվում է արդյունաբերության վրա, որը կարող է արհեստներից վերաճել դասական ծանր արդյունաբերության, իսկ այնուհետև՝ գիտութենահենք տեխնոլոգիաների և արտադրությունների»[4]:

Հենց այդ համակարգային փոփոխությունների համալիրն էլ դրդեց արդիականացումն ուսումնասիրելու 1950-ական թվականներին նոր անկախացած պետություններում տեղի ունեցող զարգացումների տարաբնույթ արդյունքների հետազոտման միջոցով: Այս համատեքստում Հնդկաստանի «անգլիականացումը» և Հնդկաչինի «գալիացումը» դիտվեցին որպես արդիականացմամբ պայմանավորված փոփոխությունների տարբեր ձևաչափեր, որոնց տիրույթներում ձևավորվեց **«արևմտացում»** *(westernization)* երևույթը[5]:

Արդիականացման գործընթացում բազմաչափ փոփոխությունները մարմնավորող **ավանդականի–արդիականի** երկձյուղումները դիտարկելու համար առավել ուշագրավ է Թ. Փարսոնսի առաջարկած **«տիպային փոփոխականների»** հայեցակարգային սխեման՝ իրավիճակի հստակեցման համար արդիականացման դերակատարի արած հինգ երկձեղական ընտրությունների հետևյալ շարքով՝ **հուզագրգռմունք–հուզագրգիռային անտարբերություն (աֆեկտիվություն–աֆեկտիվ չեզոքություն), կոլեկտիվություն–անհատականություն (կոլեկտիվիզմ–ինդիվիդուալիզմ), տարանջատվածություն–համընդհանրություն (պարտիկուլյարիզմ–ունիվերսալիզմ), որակ–արտադրողականություն, փոխթափանցություն–ինքնատիպություն (դիֆուզայնություն–յուրահատկություն)**[6]:

Արդեն 1950-ական թվականներին գաղութատիրության լուծը թոթափած երկրներին բազմաչափ փոփոխության կառավարման համար ըստ սույն մոտեցման առաջարկվեց արագացված տեմպերով ավանդականից ազատականության միջոցով արդիականության անցնելու մի գծային մոդել, որտեղ ԱՄՆ-ն ու Արևմտյան Եվրոպան ներկայանում էին արդիականությանը բնորոշ հատկանիշների հիման վրա բնականոն եղանակով նորարարացող երկրներ[7]: Այսպիսով՝ *կայացման վաղ շրջանում արդիականացման տեսությունը ոչ այնքան ակնկալվող բազմաչափ փոփոխությունների կանխատեսման ու մեկնաբանության այսպես կոչված «մաքուր» գիտական տեսություն էր, որքան զարգացած Արևմուտքի գաղափարական, աշխարհաքաղաքական և քաղաքակրթական նկրտումները խաղային տրամաբանությամբ ներ-*

[4] Տես *Ս. Հանտինգտոն*. Столкновение цивилизаций. Пер. с англ. Т. Велимеева, Ю. Новикова. М., 2003, сс. 94–95:

[5] Տես *Վ. Иноземцев*. Демократия и модернизация: к дискуссии о вызовах XXI века. М., 2010, сс. 202–203:

[6] Տես *Т. Парсонс*. О социальных системах. Под ред. В. Ф. Чесноковой и С. А. Белановского. М., 2002, с. 97:

[7] Տես «Модернизация и политика в XXI веке». Отв. ред. Ю. С. Оганисьян. Ин-т социологии РАН. М., 2011, с. 112:

կայացնող ռազմավարական նախագիծ: Ավելին. հետահայաց վերլուծությունը հնարավորություն է տալիս արդիականացումը դիտելու որպես «սառը պատերազմի» ժամանակ նորանկախ երկրների քաղաքական համակարգը ապակայունացնող խաղային գործողությունների **կառուցվածքային–գործառական համալիր:**

Այս նկատառումներով Շ. Էյզենշտադտը արդիականացման տեսության կիրառման սկզբնական շրջանում հիմնավորեց ժամանակակից հասարակությունների որակական բնութագրիչների ուսումնասիրության համար մեթոդաբանական հիմք ծառայող երկճյուղումների հետևյալ շարքը. **ազատություն ընդդեմ անձնիշխանության (ավտորիտարություն), կայունություն ու ժառանգորդություն,** պետութենաշինության մշակույթի հաստատութենական կայացում **ընդդեմ հեղափոխական փոփոխությունների**, **ժամանակակից սոցիալական ռացիոնալություն՝** ընդդեմ ավանդույթների, կրոնական կամ միստիկական փորձի[8]: Այս ամենից էլ ածանցվում է արդիականացումը որպես սոցիալ-հոգեբանական և քաղաքակրթական գործընթաց դիտելու անհրաժեշտությունը, քանի որ զարգացմանը կաշկանդող «հնացած» երևույթները կարելի է հաղթահարել, եթե վերափոխման դերակատարները, հատկապես՝ ընտրանիները, հանդես գան որպես ռազմավարական կառավարման ջատագովներ:

Այսպիսով՝ քաղաքական արդիականացումն ըստ էության հանգեցվեց կառավարման այնպիսի ընդհանուր մոդելի կիրառմանը, որի էությունը ցանկացած երկրի ավանդական արժեքային համակարգի գծային արդիականացումն է (միայն դեպի ազատականացում), այսինքն՝ անցումը դեպի արևմտյան չափանիշներով ռացիոնալ հասարակություն: Աֆրոասիական և լատինաամերիկյան պետություններում նմանօրինակ արդիականացումը ցույց տվեց, որ ավանդական սոցիալական կառույցների և մտածելակերպի բախումները իրականում հանգեցնում են իշխանական հարաբերությունների կոռումպացման, բյուրոկրատական կամայականությունների, խնամիականության, բնակչության աղքատության աճման, հետևաբար՝ օտարման և եզրահանման: Որպես արդյունք՝ արդիականացման հիմնադրույթները ենթարկվեցին խիստ քննադատության՝ հատկապես **ավանդույթ–արդիություն** երկճյուղման համատեքստում[9]: Հիմք ընդունվեց քաղաքական զարգացման լատինաամերիկյան և աֆրիկյան պետությունների փորձը, քանի որ դրանք զինվորականության կատարած բազմաթիվ պետական հեղաշրջումներից հետո ընկղմվել էին քաղաքական զարգացման (բաշխման, շարժունակության, մասնակցության, նույնականացման, օրինականացման) ճգնաժամների մեջ, իսկ սահմանադրական կարգի վերականգնման համար մղված երկարատև պայքարն սպասված արդյունքը չէր տալիս:

Փաստորեն, նոր ձևավորված ռացիոնալ արժեքային կողմնորոշիչները հանգեցրել էին «սպասումների հիասթափության», ինչն էլ արդիականացող հա-

[8] Տես *Շ. Էյզենշտադտ*, Նշ. աշխ., էջ 13–14:

[9] Տես *Ս. Хантингтон*. Третья волна. ..., с. 7:

սարակություններին ստիպեց վերագնահատել ավանդականը և հարց դնել, թե ո՞վ են իրենք: Հարցին տրված պատասխանը ներառեց ռացիոնալը և իռացիոնալը ներդաշնակող այնպիսի նախատիպային արժեքներ, ինչպիսիք են ընդհանուր ծագումը, լեզուն, կրոնը, պատմությունը, սովորույթները և հանրային հաստատությունները:

Քաղաքական արդիականացման տրամաբանությունը արմատապես փոխվեց, երբ 1974 թ. Պորտուգալիայում «մեխակների հեղափոխության» հետևանքով պետությունը բռնեց ժողովրդավարացման ուղին՝ բռնապետ Ա. Սալազարի վարչակարգի տապալմամբ և ժողովրդավարացման «երրորդ ալիքի» մեկնարկմամբ[10]: Տեսաբանները, հստակեցնելով քաղաքական արդիականացման իրավաքաղաքական մեխանիզմները, կարևորեցին հանրաքվեի միջոցով իրագործվող սահմանադրական փոփոխությունները: Ստացված արդյունքների հիման վրա 20-րդ դարի 70–80-ական թվականներին (արդիականացման երկրորդ փուլ) սկսեցին առաջնային համարվել այն սոցիալ-տնտեսական ու քաղաքական կառուցվածքային փոփոխությունները, որոնք կարող են կատարվել ոչ միայն ըստ արևմտյան ժողովրդավարացման մոդելի:

Արդիականացումն ընդհանուր առմամբ ներկայացնելով որպես զարգացման համընդհանուր ուղղություն՝ տվյալ ժամանակի տեսաբանները (Գ. Ալմոնդ, Դ. Փաուել, Լ. Փայ, Ս. Հանտինգտոն և ուրիշներ) համոզվեցին, որ հասարակության զարգացումը պայմանավորված էր կապիտալիստական հասարակարգի, տնտեսության և տեխնոլոգիաների զարգացմամբ, ընդհանուր կենսամակարդակի բարձրացմամբ և անվտանգության հիմնախնդիրների լուծման մրցունակ ռազմավարության մշակմամբ ու իրականացմամբ:

Հենց մրցունակ ռազմավարության տեսակետից էլ քննադատվեց և վերահմաստավորվեց 1970–1980-ական թվականներին Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում «ժամանակակից հասարակություն» կառուցելու նպատակով ծավալված, սակայն ակնկալված ժողովրդավարություն չհաստատած փոփոխությունների ձևական ռազմավարությունը: Նախ. կասկածի տակ դրվեց գծային փոփոխությունների (միայն ազատականացում) նպատակահարմարությունը, ապա՝ «արևմտացման» ձևաչափը, քանի որ տարբեր քաղաքակրթական չափումներ ունեցող պետություններում (Թուրքիա, Եգիպտոս, Հնդկաստան) ավանդական և արդիական հաստատությունների համադրումը հանգեցրել էր միայն տարբեր արդյունքների: Այս ամենի հիման վրա էլ *քաղաքական արդիականացումը սահմանվեց որպես մի այնպիսի զարգացում, երբ իրագործվում են հաստատութենական նորամուծություններ՝ ռեսուրսների մոբիլիզացմամբ, քաղաքացիների սոցիալականացմամբ և մրցունակ անվտանգային ռազմավարության մշակմամբ:*

Ակնհայտ է, որ քաղաքական արդիականացումը ներառում է, մի կողմից, քաղաքական շուկայի առաջարկի և պահանջարկի փոփոխականները՝ պայ-

[10] Տես *Larry Diamond.* The State of Democratization at the Beginning of the 21st Century (http://blogs.shu.edu/diplomacy/files/archives/04_diamond.pdf):

մանավորված քաղաքական իշխանության իրականացման մշակույթով, իսկ մյուս կողմից՝ ներքին հաստատութենական կառուցվածքային բարեփոխումները կամ որակական կերպափոխումները՝ թելադրված քաղաքական համակարգի ժողովրդավարացման տրամաբանությամբ: Այս մոտեցումը ելակետ դարձավ, որպեսզի 1980–1990-ական թվականներին ստեղծվեն քաղաքական փոփոխություններ ենթադրող ժողովրդավարացման մի շարք մոդելներ, որոնք կապված են Ա. Պշևորսկու, Ֆ. Շմիտերի, Գ. Օ'Դոննելի, Խ. Լինցի, Ս. Հանտինգտոնի և ուրիշների անունների հետ: Այս համատեքստում քաղաքական արդիականացումը **«անցում–համախմբում»** հարացույցի շրջանակներում ուսումնասիրվում է **արտաքին** (Ս. Հանտինգտոն) և **ներքին** (Խ. Լինց) գործոնների հիման վրա:

Փաստորեն, քաղաքական արդիականացումը՝ որպես համալիր ամբողջություն, ենթադրում է նոր ձևավորված քաղաքական համակարգի հարահոս հարմարում շարունակական ժողովրդավարական բարեփոխումների տրամաբանությամբ: Ուստի քաղաքական համակարգի ժողովրդավարացումը ենթադրում է ոչ միայն արժեքների բնականոն արդիականացում համաձայն արևմտյան ձևաչափի, այլև սոցիոմշակութային և էթնոմշակութային արժեքների զուգամիտում: Այս նկատառումներով հայ քաղաքագետ Հ. Ս. Քոթանջյանը, արդիականացման նկատմամբ կիրառելով քաղաքակրթական մոտեցում, նշում է, որ արդիականացումը կարևոր նշանակություն ունի էթնոազգային երևույթների զարգացման գործում, քանի որ այն արմատապես փոխում է ազգի կամ էթնիկական խմբի գործառության պայմանները[11]:

Այս ելակետային մոտեցմամբ ի մի բերենք քաղաքական արդիականացմանը բնորոշ հայեցակարգային առանձնահատկությունները, որոնք են՝ 1) նախկին կրոնական կամ ցեղային հայրենասիրության և համերաշխության փոխարինում ժողովրդավարական քաղաքական համակարգով, 2) նոր քաղաքական արժեքների հիմնավորում, արդիականացող ընտրախավի և նորաստեղծ պետության իշխանության օրինականություն, 3) իշխանության ապակենտրոնացում, 4) այն քաղաքական ենթակառուցվածքների զարգացում, որոնք կազմակերպվում են արդի քաղաքական պահանջների բերումով, 5) քաղաքական գործընթացների փոխկապված կազմակերպում, 6) կառավարային իշխանության բաժանում և արդյունավետ օգտագործում տնտեսական աճման, տնտեսական ռեսուրսների մոբիլիզացման ապահովման նպատակով, բարիքների և արժեքների բաժանում զանգվածային պահանջներին և սպասելիքներին համապատասխանությամբ: Այս գործընթացը սովորաբար իրագործվում է վեց փուլով. 1) ազգային ինքնության հիմաստավորում և կազմակերպական մարմնավորում, 2) ազգային անկախության համար պայքար, 3) հետանկախ շրջանում դերերի և դիրքերի վերաբաշխում ու վերադասավորում, 4) «խնամակալ» վարչակարգի հաստատում, 5) անձնիշխանական

[11] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները: Ե., 2010, էջ 265:

համակարգի թուլացում, 6) ընդդիմության հաղթանակ օրինական ճանապարհով:

Փաստորեն՝ քաղաքական արդիականացումը մի մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է արժեքների ու շահերի իր համակարգի, քաղաքական գիտակցությանը համապատասխանող ընտրությունների և քաղաքական ու քաղաքացիական հաստատությունների հաստատմամբ: Այս նկատառումներով էլ զարգացած և զարգացող պետությունների բազմաչափ փոփոխությունների համեմատական ուսումնասիրությունների հետ մեկտեղ նոր մարտահրավերների հաշվառմամբ կատարվեց արդիականացման տեսության վերանայում: Հենց այս պատճառով էլ նպատակահարմար է քաղաքական արդիականացումը դիտել որպես՝ **տնտեսական առաջընթացի նախապայման, անցումային հասարակություններին բնորոշ քաղաքականություն, ժողովրդավարական համախմբումը խթանող զարգացման մոդել, փոփոխությունների գործընթաց, ազգ-պետության ցանցային գործունեության կազմակերպման ձև, զանգվածային շարժունակություն և մասնակցություն**[12]:

Այս համատեքստում բազմաչափ փոփոխությունների իրագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել, որպեսզի քաղաքական շուկայի բնականոն արդիականացումն ուղեկցվի իշխանության իրականացման և համագործակցության մշակույթի զարգացմամբ, կապիտալի օրինականացմամբ և մարդկայնացմամբ: Եթե «նոր ժողովրդավարների» առաջին սերունդը բազմաչափ փոփոխություններ էր առաջարկում միայն ազատականացման սկզբունքով, ապա շուկայական հետազոտություններով պարզված՝ քաղաքական ծառայությունների պահանջարկը «անցում–համախմբում» հարացույցի գործառման շրջանակներում փոխեց առաջարկի որակը: Վերջինս ենթադրում է քաղաքական ապրանքի որակի այնպիսի փոփոխականներ, որոնք, բացի ազատականացումից, պայմանավորված լինեն պատմական ավանդույթներով, սոցիալ-քաղաքական խորհրդանիշներով, ներքին և արտաքին ուժերի հաշվեկշռով, ինչպես նաև դերակատարների վարքում ժողովրդավարական արժեքների բնականոն ներդրման անհրաժեշտության գիտակցմամբ[13]: Սույն մոտեցումը հնարավորություն է տալիս քաղաքական արդիականացումը որպես համալիր դիտարկելիս կարևորելու քաղաքական շուկայում առաջարկի և պահանջարկի փոփոխականները:

Այսպիսով՝ քաղաքական արդիականացման տեսության զարգացումը անհրաժեշտ է ուսումնասիրել ըստ համախմբագիտության և շուկայագիտության այն մոդելների, որոնք ձևավորվել են ժամանակակից արևմտյան քաղաքական հաստատությունների կայացման փորձի հիման վրա: Այս համատեքստում

[12] Տես *Մ. Մարգարյան*, Նշ. աշխ., էջ 7–8:

[13] Տես *Д. Нежданов, О. Русакова*. «Политический рынок» как системообразующая метафора современного политического дискурса. «Полис. Политические исследования», 2011, № 4 (124):

հատկանշական է Ճապոնիայի փորձը, որի կարգախոսն էր «Waken Yosei»՝ ճապոնական ոգի և արևմտյան տեխնիկա[14]:

Ուսանելի է նաև իր ավանդական արժեքների գերակայությամբ արդիականացող Թուրքիայի «խորքային պետության» ստեղծման փորձը: Ավանդականի և արդիականի համադրումը որպես **«երկրորդ սերնդի բնաշխարհիկացման* երևույթ»** հնարավորինս մերժեց զուտ արևմտյան կողմնորոշում ունեցող առաջին սերնդի փորձը: Եթե առաջին սերունդը հրապուրվեց աշխարհաքաղաքական արժեքներով, ապա երկրորդ սերունդը չխզեց կապը իր ազգային արժեքների հետ և չօտարվեց հասարակությունից, իսկ երրորդ սերունդը, իրականացնելով մրցակցային կառավարում, օրինականացնում և մարդկայնացնում է ոչ միայն իշխանական հարաբերությունները, այլև ազգային կապիտալը:

Սկսած 1990-ական թվականներից բնաշխարհիկացումը ոչ արևմտյան քաղաքակրթություններում դարձել է մրցակցային ռազմավարական կառավարման օրակարգի գերակա բաղադրիչը. իսլամական հասարակություններում առանցքային գաղափարներն էին իսլամի վերածնունդը և վերաիսլամացումը, Հնդկաստանում՝ արևմտյան արժեքների նկատմամբ ընտրողական վերաբերմունքը և հանրային քաղաքականություն հինդուիստական արժեքների վերադարձը, Արևելյան Ասիայի պետություններում՝ կոնֆուցիականության քարոզումը, որը ընտրախավերն ուղեկցում էին իրենց պետությունների հզորացման գաղափարի ակտիվ քննարկումներով: Բնաշխարհիկացման տրամաբանության առումով արժեքավոր են Լի Կուան Յուի (1923–2015) և Սոլոմոն Բանդարանաիկեի (1899–1959) օրինակները. նրանք, ստանալով լավագույն արևմտյան կրթություն, իշխանության գալու ճանապարհին ամբողջությամբ բնաշխարհիկացան՝ փոխելով ինչպես հագուստները, այնպես էլ անունները և բոլոր առանցքային արժեքների վերաբերմամբ հայացքները[15]:

Վերը շարադրվածից ակնհայտորեն երևում է, որ մրցակցային ռազմավարական կառավարմանը նպատակամղված քաղաքական արդիականացման համար պատասխանատու ընտրախավերը պետք է ազգային ինքնության պահպանման, ըստ արդյունքի կառավարման և անվտանգ ապագայի ապահովման նպատակով հաշվի առնեն այդ գործընթացի քաղաքակրթական չափումը:

1.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում քաղաքական արդիականացումը քաղաքականության դերակատարների, նոր արժեքներ կրողների ու արտացոլողների և իշխանության հաստատությունների միջև քաղաքական փոխազդեցությունների մի ընդար-

[14] Տես *С. Хантингтон*. Столкновение цивилизаций, с.105:

* *Բնաշխարհիկացում* (անգլ. *indigenization)*՝ որևէ բան ավելի ազգային դարձնելու գործողություն որևէ ծառայության, գաղափարի ևն հարմարեցում տեղական մշակույթին, հատկապես՝ կառավարչական համակարգում, գործունեության ոլորտում ավելի մեծ թվով տեղաբնիկների ներգրավմամբ (տես “Oxford English Dictionary” (www.oed.com.2016), ինչպես նաև՝ “Merriam-Webster Dictionary” (https://www.merriam-webster.com/dictionary/indigenise)). – *Խմբ.*:

[15] Տես նույն տեղում, էջ 132–136:

ծակ ու բարդ խճանկար է: Նրանք գործում են ըստ այն դերերի և գործառույթների, որոնք թելադրում են հայոց մշակութաքաղաքակրթական արժեքային համակարգը, ավանդույթները, կրոնադավանական միջավայրը, ազգի մտահայեցողությունը, պատմական զարգացման առանձնահատկությունները, հանրային ու ազգային շահերը և այլն: Այդ է պատճառը, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները:

Առաջին. նրա մասնակիցների միջև նպատակների ու քաղաքական գործողությունների քննարկումների անբավարարությունը: Քաղաքական արդիականացման բախումնայնության պատճառներից մեկն այն է, որ ձևավորվող քաղաքական ուժերը տարբեր կերպ են ընկալում ժողովրդավարության արժեքները, երբեմն էլ բարեփոխումներում անձնական (մեկուսախմբային) շահերը գերակայում են հանրային շահերի նկատմամբ:

Երկրորդ. քաղաքացիական վերահսկողության համակարգի անբավարար զարգացածությունը, որի պատճառը քաղաքացիական հասարակության գերազանցապես ձևական հաստատութենական և ոչ գործառութային կայացումն է:

Երրորդ. հաստատութենական կարգի ու քաղաքական դերերի որոշակի չափով համատեղվածությունն ու եզրահանված փոխակերպումը: Քաղաքական կյանքի մասնակիցների բազմազանությունը թվացյալ է, քանի որ իրական դերն ու քաղաքական գործառույթները բավական սահմանափակ են: Որպես հաստատում նշենք, որ քաղաքական կուսակցությունները, որոնց թիվը յոթանասունից ավելի է, իրենց հնարավորություններով պայմանականորեն են արտահայտում քաղաքացիական հասարակության շահերը: Արտախորհրդարանական կուսակցությունները ներկայանում են ոչ այնքան որպես քաղաքացիական հասարակության հետ իշխանության կապն իրականացնող հաստատություններ, որքան՝ քաղաքական գործչի շուրջ խմբված համախոհների (և ոչ միայն համախոհների) միավորումներ:

Չորրորդ. քաղաքական արդիականացման մասնակիցների շրջանում առկա «սպասումների հիասթափությունը», որը ժողովրդավարների «առաջին սերընդի» կատարած վաուչերային մասնավորեցմանը հաջորդած աղքատության, կոռուպցիայի դրսևորումների և արդարության պակասի, նաև հաղորդակցության համակարգի ցանցային ձեռնածությունների հետևանք է:

Հինգերորդ. քաղաքական արդիականացման հիմքում դրված ակտիվ քաղաքական ոճը՝ կազմված հասարակությանը պարտադրված նորամուծություններից: Դրանով քաղաքականության սուբյեկտների վարքը դառնում է ավելի կանխատեսելի:

Վեցերորդ. քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, ինքնություն, օրինականություն) ճգնաժամների հաղթահարման ձգձգում, ինչի հետևանքով հակընտրանին հանդես է գալիս որպես ոչ թե քաղաքական ընդդիմախոս, այլ հակամարտային շարժում: Այդ պատճառով կառավարող ընտրանու և հակընտրանու միջև ծավալված բանավեճը տեղի է ունենում ոչ թե ռացիոնալ, այլ զգացմունքային և խորհրդանշական հիմունքով:

Նշված առանձնահատկություններից ակնհայտ է դառնում, որ քաղաքական

արդիականացման ասպարեզում հայ հասարակությունը բախվել է «վազող արդիականացման» հավերժական հայկական խնդրին: Սա արդիականացման մի այնպիսի երևույթ է, որն արթնացնում է, թվում էր, թե վաղուց մոռացված, սակայն իրականում խոր արմատավորված և ընդամենը «նիրհող» ավանդական արժեքային շերտերը ինչպես գիտակցականի ոլորտում, այնպես էլ որոշակի սոցիալ-քաղաքական «կենցաղի» բնագավառում (տեղային հեղինակություններ, էթնիկական, կլանային ու խնամիական սահմանակարգերի վերարտադրում և հզորացում, բնակչության ինտեգրման համընդհանուր հոգևոր և հաստատութենական հիմքերի քայքայվածություն): Ընդ որում, ակնհայտ է, որ հասարակության արդիականացումը ներքուստ աններդաշնակ է և կրում է բազում կառուցվածքային ճեղքվածքներ, ինչը հանգեցնում է «փոխհամաձայնեցված ձևական ժողովրդավարության» հաստատման:

Այստեղից էլ՝ ծագում է քաղաքական արդիականացման հոգեբանական և բարոյական իրավահաջորդության հիմնախնդիրը, որն ընկալվում է որպես «օտարերկրյա կամ համամոլորակային ազդեցություն»[16]: Այս իմաստով անհրաժեշտ է կարևորել հայ հասարակության վրա տեղեկատվական հեղափոխության հակասական ազդեցությունը: Մի դեպքում՝ բնակչության բարձր կրթական մակարդակը նպաստում է մասնակցության քաղաքական մշակույթի արագ, սակայն հիմնականում՝ մակերեսային, հաստատմանը: Մյուս դեպքում՝ սոցիալական վարքի արևմտյան մոդելի արժեքները բնակչության մի զգալի մասի համար վերացական արժեքներ են, քանի որ չկան անհատի **գործունյա-ակտիվ կողմնորոշում,** իրատեսական լավատեսության հոգեբանություն ու **ձեռնարկատիրական-նախաձեռնողական ավանդույթներ**:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացումը տարանջատական մշակույթի ազդեցության հետևանքով բազմաթիվ խոչընդոտների է բախվել ոչ միայն քաղաքական մասնակցության մակարդակի աճման, այլև սոցիալ-պատմական տեքստի համակարգային զարգացման անհրաժեշտության բերումով: Վերջինիս չլինելու պատճառով առանձին եզրահանված խմբերի ինքնարտահայտումը տեղի է ունեցել այսպես կոչված եզրահանված արդիականացմանը ձգտող «ընտրախավային խմբերի» տեսքով: Որպես արդյունք՝ իրական բազմակարծության փոխարեն ՀՀ-ում արագ տեմպերով ձևավորվել և ձևավորվում են ընտրյալ մեկուսախմբերը, որոնք ձեռնածությունների են ենթարկում «Հանրային շահը համընդհանուրի բարիքն է» քաղաքակրթիչ կարգախոսը:

Մեր կարծիքով՝ քաղաքական արդիականացման հեռանկարները որոշվում են այն հանգամանքով, թե ի վիճակի է վարչակարգը լուծելու ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրահատուկ ազգային բնույթի հետևյալ խնդիրները.

[16] Տես *Brian Levy, Francis Fukuyama.* Development Strategies. Integrating Governance and Growth. Policy Research Working Paper 5196, January 2010 (http://siteresources.worldbank.org/EXTGOVANTICORR/Resources/3035863-1286395629347/Levy_and_Fukuyama_WPS5196.pdf):

- տնտեսական կապիտալը օրինականացնելու և մարդկայնացնելու նպատակով այն դուրս բերել քաղաքական վերահսկողությունից, ինչը խաղաղության և համագործակցության մշակույթի զարգացման շնորհիվ կնպաստի ազատ մրցակցային դաշտի արդյունավետ գործառմանը,
- մարդկանց ինքնահաստատման, ինքնադրսևորման, ինքնիրացման ճանապարհով ստեղծել բաց սոցիալական կառուցվածք,
- քաղաքական և քաղաքացիական հաստատությունների միջև բաց քաղաքական մրցակցություն ապահովող երկխոսության ծավալման միջոցով իշխանության համար պայքարում ձևավորել տարբեր ուժերի փոխադարձ անվտանգություն,
- ներդրել տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգ:

Հայաստանի առջև ծառացել է պատմական խնդիր՝ հղկել քաղաքական արդիականացման «քառանկյուն անիվի» եզրագծերը և անցում կատարել դեպի բնականոն զարգացում: Տվյալ զարգացման մոդելը ակնհայտորեն չի լինի ամբողջությամբ ո՛չ արևմտյան՝ ազատական, ո՛չ արևելյան՝ մեկուսախմբային-տարանջատական: Այն, լինելով հայկական՝ սինթետիկ, հնարավորություն կտա բնականոն կերպով արդիականացնելու կառավարումը և հայկական քաղաքակրթությանը բնորոշ ոգեղենության, արարչականության, կենսասիրության և հանրային համախմբման զարգացմամբ ապահովելու ազգային անվտանգությունը:

ЦИВИЛИЗАЦИОННОЕ ИЗМЕРЕНИЕ ПОЛИТИЧЕСКОЙ МОДЕРНИЗАЦИИ КАК ОСНОВА ДЛЯ ОБЕСПЕЧЕНИЯ СТРАТЕГИЧЕСКОГО УПРАВЛЕНИЯ

М. М. МАРГАРЯН, доктор политических наук, профессор, заведующая кафедрой политического управления и публичной политики Академии государственного управления РА

РЕЗЮМЕ

Цивилизационное измерение политической модернизации дает возможность рассматривать стратегическое управление как ключевой механизм отказа от механической вестернизации и осуществления модернизации на основе собственной цивилизационной идентичности. Данный подход позволяет в рамках концепции «Нация–армия» создать благоприятные условия для консолидации нации, а также предполагает, что правящая элита проявит волю для эффективной реализации продолжительных реформ «сверху».

Предлагаемая модель развития не будет ни полностью западной – либеральной, ни восточной – корпоративно-патриархальной. Это позволит естественным образом модернизировать национальную иден-

тичность с созданием синтетической модели модернизации, развитием таких компонентов Армянской Цивилизации, как духовность, созидательность, жизнеспособность и общественная консолидация.

CIVILIZATIONAL DIMENSION OF POLITICAL MODERNIZATION AS A BASIS FOR ENSURING STRATEGIC MANAGEMENT

M. M. MARGARYAN, *Doctor of Political Sciences, Professor, Head, Chair of Political Governance and Public Policy*, *Public Administration Academy of the Republic of Armenia*

SUMMARY

The civilizational dimension of political modernization makes it possible to consider the strategic management as a key mechanism for renouncing mechanical Westernization and implementing modernization based on its own civilizational identity. Said approach allows us to create favorable conditions for the nation's consolidation within the framework of the "Nation–Army" concept, as well as it presumes that the ruling elite will manifest the will for effective implementation of long-term reforms "from above".

The proposed development model will neither be completely Western – liberal, nor Eastern – corporate-patriarchal. This will make it possible to naturally modernize the national identity, thus creating a synthetic model of modernization, and developing such components of the Armenian Civilization as spirituality, creativity, viability and social consolidation.

ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴՐԱ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ

Ռ. Վ. ԱՂԳԱՇՅԱՆ, տեխնիկական գիտությունների թեկնածու, ՀԱՊՀ-ի պրոռեկտոր, Ա. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնի պետ, Գ. Ի. ՄԱՐԳԱՐՈՎ, տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀԱՊՀ-ի «Տեղեկատվության անվտանգություն և ծրագրային ապահովում» ամբիոնի վարիչ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակներում կիբեռտարածության նորամուծական օգտագործումը հանգեցրել է մարդկանց ամենօրյա գործունեության կերպափոխման՝ ձևավորելով տեղեկութային հասարակություն, որը բնութագրվում է տեղեկատվական տեխնոլոգիաների բարձր մակարդակի զարգացմամբ և մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում դրանց զանգվածային օգտագործմամբ: Ամենուրեք՝ էլեկտրոնային առևտրից մինչև շարժական կապն ու բարդ ցանցային համակարգերը, ակնհայտ է տեղեկատվական ենթակառուցվածքներից կախման սրընթաց աճումը:

Հետագա տարիներին այդ օրինաչափությունը նոր տեխնոլոգիաների զարգացման և մեր ամենօրյա կյանք ներթափանցման համեմատ միայն կաճի[1]: Մասնավորապես՝ Հայաստանում ևս տեղեկատվական ոլորտը, որը հռչակված է որպես զարգացման գերակա ուղղություն, դառնում է պետության տնտեսության անկապտելի բաղադրատարր, ակտիվ կերպով ներգործում է ազգային անվտանգության քաղաքական, տնտեսական և հատկապես՝ պաշտպանական բաղադրիչների վրա: Ըստ այս միտումների՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) կազմում 2017 թ. սեպտեմբերին «քոմփյութերային համակարգերի և ինֆորմատիկայի», «ռադիոտեխնիկայի և կապի համակարգերի» ու «կիբեռնետիկայի» ֆակուլտետների միավորմամբ ստեղծվել է Տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների և էլեկտրոնիկայի ինստիտուտ (ՏՀՏԷԻ), որը կոչված է գործունեության տարբեր ոլորտներն ապահովելու համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետներով:

[1] Տես *T. N.Theis, H. S. P.Wong.* The End of Moore's Law: A New Beginning for Information Technology. «Computing in Science & Engineering», 2017, Vol. 19, N 2:

Տվյալ ոլորտում տեխնիկատեխնոլոգիական մակարդակով պատրաստման հետ մեկտեղ կարևոր է ռազմավարական՝ փիլիսոփագաղափարական, մակարդակով պատրաստումը: Դրանով կապահովվի մասնագետի կարողությունը հաղթահարելու մասնավորության սահմանափակությունը և կոնկրետ պրոբլեմները տեսնելու ու լուծելու ընդհանուրի համատեքստում: Այս գործում իր էական ներդրումն ունի ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը (ՊԱՀՀ): ՊԱՀՀ-ը առանձնակի կարևորություն է տալիս տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների ու կիբեռռեսուրսների՝ ՀՀ ազգային անվտանգության վրա ունեցած ազդեցության վերլուծությանը, ազգային կիբեռկարողությունների զարգացմանն ու տեղեկատվական ռեսուրսների կառավարմանն ուղղված վերտեխնոլոգիական ռազմավարական հետազոտությունների կատարմանը և հետազոտահենք կրթության կազմակերպմանը:

Համալսարանը ԱՄՆ-ի անվտանգային ոլորտի առաջատար պետական գիտակրթական կազմակերպության՝ Պաշտպանական ազգային համալսարանի հետ հաստատել է սերտ ակադեմիական կապեր, որոնց կարևոր ուղղություններից է համագործակցությունը ՏՀՏ և կիբեռանվտանգության ոլորտներում: Մասնավորապես՝ ԱՄՆ-ի ՊԱՀ-ի մեթոդաբանական աջակցությամբ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ում մշակվել են ոլորտի երկու անկյունաքարային ազգային փաստաթղթերի՝ կիբեռանվտանգության ռազմավարության և կիբեռռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգի (ՏՀՏ գծով ղեկավարների) հայեցակարգի նախագծերը: Այս փաստաթղթերը հնարավորություն են տալիս ոլորտի պրոբլեմները դիտելու համակարգված ձևով՝ որպես մեկ ամբողջություն և ըստ այդմ առաջարկելու փոխհամաձայնեցված լուծումներ:

Զգալի տեխնոլոգիական նվաճումներով պայմանավորված տեղեկութացման հետ մեկտեղ առաջ են գալիս մեծ ռիսկեր, տեղի է ունենում անձի, պետության և հասարակության տեղեկութային անվտանգության* համար նոր սպառնալիքների ձևավորում[2]:

Տեղեկույթի չթույլատրված օգտագործումը, փոփոխակումը, ոչնչացումը կամ հրապարակումը, ինչպես նաև տեղեկատվական համակարգերում դրա մշակման ու հաղորդման խախտումները զգալի նյութական և բարոյական վնաս են պատճառում տեղեկատվական փոխգործության բոլոր մասնակիցներին[3]:

---

* **Տեղեկութային անվտանգություն**՝ ազգային անվտանգության բաղադրիչ, որը բնութագրում է այն վիճակը, որի դեպքում ապահովվում են տեղեկատվության բնագավառում մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պահպանումը, տեղեկատվական միջոցների ու կապուղիների պաշտպանվածությունը, ինչպես նաև տեղեկատվական աղբյուրների մատչելիությունը (տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների հայերեն–ռուսերեն–անգլերեն բացատրական մեծ բառարան, Ե. 2015, էջ 76): Տեղեկութային անվտանգությունը ներառում է տեղեկատվական անվտանգությունն ու կիբեռանվտանգությունը:

[2] Տես *I. Lloyd.* Information Technology Law. Oxford University Press, 2017, P. 584:

[3] Տես *T. R. Peltier.* Information Security Policies, Procedures, and Standards: Guidelines for Effective Information Security Management. CRC Press, 2016, P. 297:

Կիբեռտարածությունում գործառման քաղաքականության վերլուծությամբ պարզվել է, որ տեխնոլոգիաներից աճման կախման հետևանքով դրա խոցելիությունն արտահայտվում է ենթակառուցվածքի ու դրա պաշտպանության հետ կապված համակարգային ռիսկերի տեսքով[4]: Որքան հասարակությունն ավելի ու ավելի է կիբեռտարածությունը դիտում որպես իր ենթակառուցվածքի կենսականորեն կարևոր բաղադրատարր, այնքան մեծ պատասխանատվություն է կրում դրա պաշտպանության համար:

Կիբեռանվտանգության[*] ապահովման պրոբլեմները հետզհետե դառնում են ավելի բարդ ու նշանակալից, ինչի հետևանքով մշտապես գտնվում են պետական և առևտրային կառույցների ուշադրության կենտրոնում: Ընդսմին կիբեռանվտանգության ապահովման ոլորտում հետազոտական ու պրակտիկ գործունեության կարևորագույն ուղղություններից են համարվում կադրային ներուժի զարգացումն ու կատարելագործումը[5]: Ըստ էության՝ կիբեռանվտանգության ապահովման պրոբլեմը հնարավոր չէ լուծել առանց տեխնոլոգիական զարգացման նոր մակարդակի անցնելու, գիտության դերը վերականգնելու, ինչպես նաև ընդհանուր, պրոֆեսիոնալ ու բարձրագույն մասնագիտական կրթության որակը բարելավելու:

ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՑԵԱԿԱՆ ԼՍԱՐԱՆԸ

Գործնականում բոլոր ժամանակակից կազմակերպություններն ու ձեռնարկություններն իրենց գործունեության ընթացքում օգտագործում են ավտոմատացված ցանցային տեղեկատվական համակարգեր, որոնք պահանջում են կիբեռանվտանգության պարտադիր ապահովում: Կիբեռանվտանգության ոլորտի մասնագետին գործատուները ներկայացնում են բավական ընդգրկուն ու խիստ պահանջներ: Անհրաժեշտ են նոր սերնդի կադրեր, որոնք ունակ լինեն արագորեն հարմարվելու կիբեռանվտանգության դեմ ուղղված մշտապես փոփոխվող սպառնալիքներին և օժտված լինեն բարձր մակարդակի մասնագիտական իրազեկվածությամբ[6]: Ընդսմին կիբեռանվտանգության ոլորտում պահանջվում են նոր գիտելիքներ, կարողություններ ու

[4] Տես *G. Dhillon, R. Syed, F. de Sá-Soares.* Information Security Concerns in IT Outsourcing: Identifying (in) Congruence Between Clients and Vendors. «Information & Management», 2017, Vol. 54, N 4:

[*] **Կիբեռանվտանգություն՝** տեղեկութային անվտանգության կարևոր բաղադրիչ, մի վիճակ, որի դեպքում կիբեռտարածությունը և դրանում եղած տեղեկույթը, տեղեկատվական համակարգերը և ենթակառուցվածքները, կատարվող տեղեկատվությունը, տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաներն ու դրանք օգտագործող սուբյեկտները պաշտպանված են կիբեռհարձակումներից:–*խմբ.:*

[5] Տես *N. S. Safa, R. Von Solms.* An Information Security Knowledge Sharing Model in Organizations «Computers in Human Behavior». 2016, V. 57:

[6] Տես *S. Wang, Y. Qu, L. Zheng, Y. Xiao, H. Shi.* Exploration of Information Security Education of University Students. «International Conference on Intelligent and Interactive Systems and Applications». Springer, 2017, PP. 476–480:

հմտություններ, ի հայտ են գալիս նոր մասնագիտություններ: Դրա հետ կապված՝ ծագում է անհրաժեշտություն ընդլայնելու կիբեռանվտանգության գծով կրթական ծրագրերի անվանացանկը և պատրաստումն իրագործելու համալիր կերպով՝ հումանիտար, բնագիտական ու տեխնիկական ոլորտներում եղած պրոբլեմների ընդգրկմամբ:

Ազգային և միջազգային մակարդակներում տեղեկութային ապահովումը հիմնվում է կիբեռտարածությունում գոյություն ունեցող ռիսկերի նկատմամբ զգոնության ցուցաբերման վրա և ենթադրում է այդ ոլորտում այս կամ այն աստիճանի կրթության տրամադրում գործնականում բոլոր խավերին: Ընդսմին կրթության տվյալ համակարգի հասցեական լսարանը կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ չորս հիմնական խմբերի[7].

- աշակերտներ և ուսանողներ,
- տեղեկութային անվտանգության մասնագետներ,
- ղեկավարներ,
- լայն հասարակայնություն:

Միանգամայն պարզ է, որ յուրաքանչյուր հասցեական խմբի համար կրթական խնդիրներն ունեն իրենց յուրահատկությունը և կարող են նկարագրվել հետևյալ կերպ.

- կիբեռանվտանգության ոլորտում պրակտիկ գործունեությանը պատրաստ անձանց շրջանի ընդլայնում՝ ի հաշիվ առարկայական ոլորտի նկատմամբ հետաքրքրության աճման և ձևական (ֆորմալ) կրթության տարբեր մակարդակներում տեղեկութային անվտանգության գծով մասնագետների պատրաստման,
- տեղեկութային անվտանգության գծով առկա մասնագետների, ներառյալ՝ հետազոտողները, վերլուծաբանները, նախագծողները և ծառայություններ մատուցողները, մրցունակ որակավորման կատարելագործում ու բարձրացում և միասնական գիտելիքի հիմքի վրա տվյալ ոլորտը կառավարող հատուկ պաշտոնյաների՝ ՏՀՏ գծով ղեկավարների պատրաստում,
- կիբեռանվտանգության ռիսկերի մասին հասարակական իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ ինչպես առանձին անձանց, այնպես էլ կազմակերպություններին այն հիմնական տեղեկությունների տրամադրմամբ, թե ինչպես կարելի է կիբեռտարածությունում իրեն ավելի լավ պաշտպանել:

Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր հասցեական խմբի համար նախատեսված կրթությանը ներկայացվող պահանջները, համապատասխանաբար կիրառվող կրթական տեխնոլոգիաները պետք է հարաբերակցվեն յուրահատուկ կրթական խնդիրների, ինչպես նաև կիբեռտարածությունում նրանց գործակցության և պատասխանատվության մակարդակների հետ:

[7] Տես «Information Security Education for a Global Digital Society: 10th IFIP WG 11.8 World Conference, WISE 10, Rome, Italy, May 29-31, 2017, Proceedings». Ed by *M. Bishop, L. Futcher, N. Miloslavskaya, M. Theocharidou.* Springer, 2017, P.169:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻՆ

Յուրաքանչյուր հասցեական խմբի համար բարձրորակ կրթության հասնելու և վերը ձևակերպված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է շահագրգիռ կողմերի ակտիվ աջակցությունը, ընդսմին որպես նման կողմ են հանդես գալիս այն մեծաթիվ կազմակերպությունները, որոնք կրթական գործունեության հաջողություններից ստանում են ռեալ կամ միջնորդավորված օգուտներ[8]: Ընդ որում, վերը նշված յուրաքանչյուր խնդրի համար կա շահագրգիռ կողմերի որոշակի խումբ, և այդ կողմերի հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատումը և պահպանումը կրթական կազմակերպությունների այն հիմնական ռազմավարություններից է, որոնք կիբեռանվտանգության ապահովման համընդհանուր նախաձեռնության համար ունեն վճռական նշանակություն:

Քանի որ շահագրգիռ կողմերը կարող են ունենալ միանգամայն անկախ ու տարբեր՝ երբեմն իրար հակասող, նպատակներ, խնդիրներ ու մեթոդներ, ապա կրթական կազմակերպության համար համագործակցության լավագույն եղանակներից է փոխզիջման և համաձայնության ձեռքբերումը: Կիբեռանվտանգության ոլորտում արագ փոփոխվող իրողություններին համապատասխանությունն ապահովելու համար կրթական ծրագրերն ու դրանց առարկայական բովանդակությունները պետք է մշակվեն և պարբերաբար թարմացվեն շահագրգիռ կողմերի հետ վիճակագրորեն ընդհանրացված հետադարձ կապի հաշվառմամբ[9]:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ներկայումս բուհերի առաջարկած կրթական ծրագրերը ոչ լիովին են համապատասխանում կազմակերպությունների մասնագիտական պահանջներին: Եվ պատահական չէ, որ աշխարհում աճում է պրոֆիլային համալսարանների նկատմամբ ուշադրությունը, և ըստ այդմ այնտեղ, այդ թվում՝ պահանջարկ վայելող մասնագիտությունների գծով կրթական ծրագրերի համար կատարվում են ավելի մեծ ներդրումներ[10]:

Այս համատեքստում ՊԱՀՀ-ի Ազգային անվտանգության քաղաքականության և տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիաների կենտրոնում մշակվել է ՏՀՏ ոլորտն ու կիբեռռեսուրսները կառավարող հատուկ պաշտոնյաների՝ ՏՀՏ-ղեկավարների պատրաստման «Տեղեկատվական տեխնոլոգիաների և կիբեռռեսուրսների ռազմավարական կառավարում» մագիստրոսական ծրագիրը, որի գործարկումը նախատեսված է 2019 թ. աշնանը: Այն մշակվել է ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվության և կիբեռտարածության քոլեջի փորձագետների հետ համագոր-

[8] Տես *G. Margarov, E. Mitrofanova, R. Gevorgyan.* Designing Effective Online Surveys for Engineering Study Programs Development Based on Feedback from Stakeholders. «Proceedings of IEEE Global Engineering Education Conference (EDUCON)», Athens, Greece, 2017, PP. 239-247:

[9] Տես նույն տեղում:

[10] Տես *R. Hunter, M. Coleman*. Competing for Top Talent: Build the Talent Platform. “Gartner”, 09 June 2016:

ծակցությամբ: Ծրագիրը խարսխվում է «հետազոտության արգասիքների վրա հիմնվող կրթության» և «կրթությունից՝ արտադրություն» համակարգային մոտեցումների վրա, որոնք ներառում են տվյալ խնդրի լուծման մեթոդաբանական, կազմակերպական, բովանդակային և տեխնոլոգիական կողմերը:

ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐ

Վերջին ժամանակներս, երբ տեղի է ունենում ակտիվ անցում ամբողջ կյանքում անընդհատ կրթության հայեցակարգի, աշխույժ կերպով քննարկվում և հետզհետե ճանաչում են ստանում կրթության երեք հիմնական մոդելները՝ ձևական, ոչ ձևական (ոչ ֆորմալ), ապաձևական (ինֆորմալ)[11]: Ըստ էության այդ մոդելները բավականաչափ լավ են համապատասխանում կիբեռանվտանգության ոլորտում եղած կրթական պրակտիկային: Այս մոդելների և վերը նշված հասցեական խմբերի ու դրանց համապատասխանող կրթական խնդիրների բաղդատմամբ կարելի է առանձնացնել կիբեռանվտանգության ոլորտում իրագործվող կրթության երեք հիմնական մոդելները.

- կազմակերպված ուսումնավարժեցում՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխանող որակավորումների շնորհմամբ (ձևական կրթություն),
- մասնագետների որակավորման բարձրացում և վերապատրաստում (ոչ ձևական կրթություն),
- հանրային իրազեկում և տեղեկույթի տարածում (ապաձևական կրթություն):

Բնականաբար, կրթության նշված մոդելները պետք է սերտորեն գործակցեն՝ որոշակի գործառութային վերածածկումներով, որպեսզի կիբեռանվտանգությունն ապահովվի համազգային մակարդակով: Այս առումով գերադասելի է միասնական կազմակերպական ղեկավարումը և այն բարձրագույն ուսումնական հաստատությունների տեխնիկական աջակցությունը, որոնցում իրականացվում է կիբեռանվտանգության ոլորտի՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման պետական ծրագիրը:

Սպասվում է, որ հետագայում կիբեռտարածությունում եղած ռիսկերը ավելի կաճեն երկու հիմնական գործոնների բերումով.

- ավելի մեծ կախվածություն տեղեկատվական կառուցվածքներից, ինչը կիբեռհարձակումների համար ստեղծում է ավելի նպաստավոր պայմաններ,
- տեխնոլոգիաներում տեղի ունեցող արագ փոփոխություններ, ինչի պատճառով կրթությունը պետք է առաջ անցնի կիբեռանվտանգության ռիսկերից:

Քանի որ տեղեկատվական ենթակառուցվածքի լանդշաֆտը, տեղեկույթի ստացման և օգտագործման եղանակները մշտապես փոփոխվում են, կիբեռանվտանգության ոլորտում ամենաարդիական կրթական պահանջմունքնե-

[11] Տես *H. L. Ainsworth, S. E. Eaton*. Formal, Non-Formal and Informal Learning in the Sciences.Canada, 2010, P. 48 (https://files.eric.ed.gov/fulltext/ED511414.pdf):

րի բավարարմանը աջակցելու համար թվում է նպատակահարմար անընդհատ մշտազննումը՝ մոտեցումների և առարկայական բովանդակության պարբերական շտկմամբ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԵՑՈՒՄ՝ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՄԲ

Մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների տարածման հետևանքով ամեն մի կրթված մարդու համար անհրաժեշտություն է դառնում ոչ միայն այդ տեխնոլոգիաներին, այլև դրանց անվտանգ օգտագործման հիմունքներին տիրապետելը: Այս առումով կարելի է առաջարկել դպրոցական ծրագրերում, ինչպես նաև գործնականում բոլոր, առաջին հերթին՝ ինժեներական, մասնագիտություններով բուհական կրթական ծրագրերում համապատասխան բաժինների կամ առարկաների ներառումը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ռեալ աշխարհն ավելի ու ավելի է կապակցվում կիբեռտարածության հետ, ինչի հետևանքով տարաբնույթ տեղեկատվական համակարգերի պաշտպանության, պահպանման և մեկուսացման համար պահանջվում են կիբեռանվտանգության ոլորտի ավելի մեծ թվով բարձր որակավորում ունեցող մասնագետներ:

Մասնավոր և պետական հատվածների ժամանակակից կազմակերպությունների մեծ մասը կիբեռանվտանգության ոլորտում որոշումների ու ռազմավարությունների գնահատման, նախագծման, մշակման և ներդրման համար ունի լավ պատրաստված մասնագետների պահանջարկ: Ներկայումս նման մասնագետների պահանջարկը ավելի արագ է աճում, քան համապատասխան ուսումնական հաստատությունների առաջարկը: Այդպիսի մասնագետների պակաս առաջին հերթին զգում են հենց իրենք՝ պրոֆիլային ուսումնական հաստատությունները, ինչի հետևանքով էլ ամբողջ հասարակության մեջ առաջանում է նրանց էական պակասուրդ: Այդ բացը լրացնելու համար անհրաժեշտ է թվում առանցքային շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակել և ձեռնարկել կիբեռանվտանգության նկատմամբ վաղ հետաքրքրության խթանմանն ուղղված մի շարք միջոցներ: Բացի այդ, կրթության կազմակերպման և կառավարման համապատասխան կառույցները պետք է քննարկեն կիբեռանվտանգության ոլորտի մասնագետների պատրաստման համակարգի ընդլայնման հեռանկարները:

Բարձրագույն կրթության համակարգի՝ որպես ձևական մասնագիտական կրթության հիմնական օղակի առջև կանգնած է այդ մասնագետների պատրաստման որակի բարելավման հրատապ խնդիրը, որն է՝ բուհում տվյալ մասնագիտական իրազեկվածության ձևավորման մանկավարժական պայմանների կազմակերպման հաշվին ուսումնավարժեցման կատարելագործումը: Բարձրագույն կրթությամբ նման մասնագետների պատրաստման ժամանակ պետք է կարևոր համարել ՀՀ-ում եղած հետևյալ պրոբլեմները.

- կիբեռանվտանգության գծով ապագա մասնագետների ցածր մակարդակի մինչբուհական պատրաստականությունը, քանի որ տեղեկութաբանության դպրոցական դասընթացում միայն հիշատակվում են տեղեկույթի պաշտպանության որոշ հարցեր,

- տվյալ ուղղությամբ պատրաստման համար ընդունվողների ընտրազատման լավ մշակված համակարգ չլինելը, քանի որ ընդունելության ժամանակ պետք է հաշվի առնվեն ոչ միայն մաթեմատիկայի ու ֆիզիկայի բնագավառներում ընդունվողի ունեցած գիտելիքները, այլև տեղեկույթի պաշտպանության ոլորտին առնչվող նրանց բարոյահոգեբանական որակները,
- պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման մակարդակի ոչ լրիվ համապատասխանությունը ժամանակակից պահանջներին, ինչը կիբեռանվտանգության ոլորտում բազային կրթություն և աշխատանքի գործնական փորձ չունենալու հետևանք է,
- հատուկ գիտակարգերի գծով պարապմունքների անբավարար նյութատեխնիկական ապահովումը, որը գործնականում չի ներառում տեղեկույթի պաշտպանության անհրաժեշտ հատուկ տեխնիկական ու ծրագրային միջոցները՝ դրանց բավականաչափ բարձր գների պատճառով:

Համալսարաններում տվյալ ոլորտի մասնագետների բարձր որակի պատրաստում ապահովելու համար պետք է իրացնել հետևյալ հիմնական սկզբունքները.

- գործնական խնդիրների իրագործման, ինչպես նաև դասախոսական գործունեության մեջ առաջատար մասնագետների ներգրավման համար շահագրգիռ կողմերի հետ ակտիվ գործակցություն ինչպես կրթական ծրագրերի բովանդակային մասի մշակման, այնպես էլ դրանց արտադրական բազայի վրա համատեղ նախագծերի կատարման ժամանակ,
- կրթական գործընթացի կողմնորոշում դեպի մասնագիտական միջավայրի դինամիկ փոփոխություններ և համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին,
- կիբեռանվտանգության դեմ ուղղված ժամանակակից սպառնալիքների պայմաններում պաշտպանության միջոցների օգտագործման գործնական հմտությունների ձևավորում,
- այնպիսի կրթական միջավայրի ստեղծում, որը նպաստեր նորամուծական գործունեությանը մասնակցության շարժառիթավորման համակարգի ձևավորմանը:

Կրթական գործընթացի արդյունավետության մեծացման հեռանկարային ուղիներ կարող են լինել տարբեր մեթոդաբանական լուծումները, որոնց թվում հարկ է առանձնացնել կոմպետենտային և նորամուծական մոտեցումները:

Կոմպետենտային մոտեցումը հիմնվում է համակարգային և միջգիտակարգային համադրության վրա, որը կատարվում է անձնային ու գործունեական կողմերի հաշվառմամբ[12]: Այս մոտեցումը կողմնորոշված է դեպի տեղեկատվա-

[12] Տես *C. Day.* Competence-Based Education and Teacher Professional Development «Competence-Based Vocational and Professional Education». Ed. by M. Mulder. Springer, 2017, PP. 165–182:

կան անվտանգության միջավայրի հետազոտում, ընդսմին այդ միջավայրը դիտվում է որպես մեկ համակարգ, այն է՝ առանձին բաղադրատարրերի համախումբ ներկայացնող որոշակի ամբողջություն: Հարկ է նշել, որ ոչ միայն ձևավորման ընթացքը, այլև բուն կոմպետենտությունը կարելի է ներկայացնել որպես գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համադրություն:

Կոմպետենտային մոտեցումն ուժեղացնում է կրթության գործնական կողմնորոշվածությունը՝ շեշտելով կարևոր ու հրատապ խնդիրների լուծման ժամանակ գիտելիքի գործնական իրացման փորձի ու հմտության դերը: Այս հիմքի վրա կատարվում է բարձրագույն կրթության թեքում դեպի ժամանակակից աշխատաշուկա, ինչն ուղեկցվում է շրջանավարտների մասնագիտական, անձնային ու սոցիալական նշանակալիության մեծացմամբ և աճող դինամիկության ու անորոշության պայմաններում աշխատանքին նրանց հարմարվողականության մակարդակի բարձրացմամբ, ինչպես նաև նոր կրթական հարացույցի՝ ամբողջ կյանքում կրթության նկատմամբ նրանց պատրաստությամբ: Դրա հետ մեկտեղ համալսարանը ներկայիս փուլում ոչ միայն կատարում է արհեստավարժ մասնագետի ձևավորման գործառույթ, այլև դառնում է նորամուծական գաղափարների գեներացման մի յուրահատուկ կենտրոն:

Գիտահետազոտական ու նորամուծական գործունեության զարգացումը կարելի է դիտել որպես կրթության հիմնարարության հենք և կադրերի պատրաստման անքակտելի բաղադրիչ: Ըստ էության, դա տնտեսության արդիականացման և ենթակառուցվածքների զարգացման գործին բուհերի ռեալ մասնակցության հիմքն է, որն ապահովվում է ի հաշիվ տարբեր ձեռնարկությունների, կազմակերպությունների ու հիմնարկների համար բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստմամբ:

Վերջին տարիներին համալսարանները ակտիվ կերպով ձեռնամուխ են եղել *նորամուծական գործունեության* հայեցակարգի մշակմանն ու ներդրմանը և նորամուծական ենթակառուցվածքի (նորամուծական կենտրոններ, հետազոտական լաբորատորիաներ և այլն) ձևավորմանը: Ընդ որում, կարևոր տեսակի սոցիալական գործընկերություն է դառնում նախագծերում ուսանողների, ասպիրանտների, դասախոսների ներգրավվածությունը, որը հնարավորություն է տալիս տարբեր ձեռնարկությունների ու կազմակերպությունների հետ համագործակցությամբ ստեղծելու կարևոր սոցիալական նշանակություն ունեցող նորամուծական նախագծեր:

Ընդհանուր առմամբ համալսարանների հետազոտական ու նորամուծական գործունեության զարգացման հայեցակարգի գլխավոր նպատակն է կրթության որակի մշտական բարելավումն ի հաշիվ նոր տեխնոլոգիաների մշակման և տնտեսության տեխնոլոգիական արդիականացման համար համալսարանի կրթական ներուժի օգտագործման: Ընդսմին մասնագետների պատրաստման որակի բարձրացումը հնարավոր է կատարել կրթական

գործունեության նկատմամբ նորամուծական մոտեցման կիրառման միջոցով՝ հետազոտություններում ոչ միայն դասախոսների, այլև ուսուցման հենց սկզբից ակտիվություն ցուցաբերած ուսանողների շարժառիթավորիչ ներգրավմամբ:

Դասախոսը պետք է շահագրգռված լինի իր մասնագիտական ձեռնհասության մակարդակի բարձրացման, անձնային ներուժի՝ որպես արժեքային կողմնորոշումների, ինքնահարգման, ինքնազարգացման, ինքնիրացման պահանջմունքների համախմբի զարգացման, ինչպես նաև հետազոտական ու պրակտիկ գործունեության մեջ ուսանողների ներգրավման գործում[13]:

Ուսումնական գործընթացի տեխնիկական ապահովումը կիբեռանվտանգության ոլորտի մասնագետների որակյալ պատրաստման ապահովման առաջին և հիմնական պայմանն է, քանի որ տեղեկույթի պաշտպանության ժամանակակից տեխնիկական միջոցներով և հավաստագրված մասնագիտական ծրագրային ապահովմամբ լաբորատորիաների վատ զինվածությունը խոչընդոտում է ոչ միայն գործնական խնդիրներին ուսուցման կողմնորոշվածության ապահովմանը, այլև արգելակիչ ազդեցություն է գործում հետազոտական ու նորամուծական աշխատանքի կազմակերպման՝ որպես զարգացման առաջադիմական ուղու վրա: Ընդ որում, մասնագետների պատրաստման որակի վրա ազդող կարևոր գործոններից է լաբորատորիաներում համացանցին միանալու առանձնացված, մեծ արագագործությամբ կապուղու առկայությունը:

ՏՀՏԷԻ-ի կազմում գործող տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի հիմքի վրա շուրջ քսան տարի կատարվում է տեղեկատվական անվտանգության մասնագիտացմամբ բակալավրների ու մագիստրոսների պատրաստում, որը ներառում է տեղեկույթի պահպանման, մշակման ու բաշխված տեղեկատվական համակարգերով հաղորդման ժամանակ նրա անվտանգության ապահովման գաղտնագրային, ծրագրային, ապարատային, վերլուծական և կազմակերպահրավական մեթոդների ու միջոցների համախումբը: Ընդ որում, կրթական ծրագրերի բովանդակությունների միջև եղած տարբերությունն այն է, որ բակալավրները պետք է որպես կանոն առանձնանան լայն սպեկտրով իրենց մասնագիտական իրազեկվածությամբ, իսկ մագիստրոսները նաև դրա խորությամբ՝ զուգակցված հետազոտական ուղղվածությամբ: Կարևոր է նշել, որ այս երկու կրթական ծրագրերը (բակալավրների և մագիստրոսների համար) ստացել են միջազգային ծրագրային հավաստագրում՝ կրթության որակի բոլոր եվրոպական չափանիշներին դրանց համապատասխանությունը հաստատող վկայականների շնորհմամբ:

[13] Տես *M. Huda, N. Sabani, M. Shahrill, K. A Jasmi, B. Basiron, M. I. Mustari*. Empowering Learning Culture as Student Identity Construction in Higher Education. Student Culture and Identity in Higher Education. IGI Globa l, 2017, PP. 160–179:

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Թեև կիբեռանվտանգության գծով մասնագետների պատրաստումը կատարվում է արդեն մի քանի տասնյակ տարի, տվյալ գործունեության ոլորտը դեռևս գտնվում է զարգացման սկզբնական փուլում, և դրա ոչ բոլոր առումներն են առայժմ լիովին որոշված:

Համապատասխան մասնագիտական կոմպետենցիաներով օժտված մասնագետների պահանջարկի հիման վրա մարդկային կապիտալի արդյունավետ առաջանցիկ պլանավորումը հնարավորություն կտա որոշակի առումով լուծելու կիբեռանվտանգության գծով կադրերի անբավարարության պրոբլեմը: Ըստ այդմ հնարավոր կլինի ոչ միայն ճիշտ պլանավորել մասնագետների պատրաստումը, այլև օպերատիվ կերպով պարզել նրանց պահանջարկը ու կատարել որակավորման նպատակային բարձրացում ու վերապատրաստում: Կիբեռանվտանգությունը՝ որպես մասնագիտական գործունեության համեմատաբար նոր ոլորտ, առայժմ չունի հստակ կերպով ձևակերպված պաշտոնեական հրահանգագրերի և յուրաքանչյուր աշխատանքային տեղի համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ընդհանուր նկարագրություն:

Նպատակահարմար է տեսանելի ապագայում այս ոլորտի համար մշակել որակավորումների ճյուղային շրջանակների ինչ-որ մի նմանակ, ինչն զգալի չափով կօգնի մասնագետների ընթացիկ կոմպետենցիաների հիման վրա ավելի հստակ կերպով կազմելու նրանց որակավորման բարձրացման ու վերապատրաստման ծրագրերը: Բնականաբար, նման շրջանակը պետք է լինի ինչպես համակողմանի՝ բոլոր հնարավոր պաշտոնների ընդգրկմամբ, այնպես էլ առավելագույնս ճկուն ու դինամիկ՝ հիմնական շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապի հիման վրա բովանդակության կանոնավոր թարմացում ենթադրող:

Թեև կիբեռանվտանգության գծով լրացուցիչ մասնագետների պահանջարկի գոյության փաստն ստացել է համընդհանուր ճանաչում, այդուհանդերձ դեռևս չկա կոնկրետ տեղերում մասնագետների անհրաժեշտ թվի որոշման ընդունված մեթոդաբանություն: Այս առումով անհրաժեշտ է մշակել կադրերի պահանջարկի հաշվարկման ու կանխատեսման մեթոդիկա՝ ըստ որակավորումների ընթացիկ ճյուղային շրջանակի: Նման մեթոդիկայի մշակումը կարող է հիմնվել արդյունաբերության տարբեր ճյուղերում աշխատուժի պահանջարկի կանխատեսման և կիբեռանվտանգության ոլորտի յուրահատուկ պրոբլեմների ազդեցության հետազոտությունների արդյունքների վրա:

Կիբեռանվտանգության ոլորտի բարձր որակավորմամբ մասնագետները պետք է ապահովված լինեն կանոնավոր կերպով իրենց մասնագիտական որակավորումը բարձրացնելու հնարավորությամբ, ինչը կերաշխավորի գիտելիքներով, կարողություններով, տեխնիկական հմտություններով, ռեսուրսներով օժտվածությունը և իր դերի կատարման նկատմամբ վստահությունը: Տվյալ գծով մասնագետների պահանջարկի աճման համեմատ որակավորումների ճյուղային շրջանակի թարմացումը կօգնի ոչ միայն ճիշտ պլանա-

վորելու նրանց որակավորման բարձրացումը և վերապատրաստումը, այլև ճշգրիտ կերպով ձևակերպելու ձևական կրթությանը ներկայացվող պահանջները՝ նպատակաուղղված աշխատաշուկայի փոփոխվող պահանջարկի բավարարմանը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՈՒՄ

Արդի հասարակությունում մարդկանց ճնշող մեծամասնությունն իր ծառայողական գործառույթները կատարելու և անձնական պահանջմունքները բավարարելու նպատակով ամեն օր առնչվում է տեղեկատվական ենթակառուցվածքի հետ: Սակայն, եթե չկա կիբեռտարածությունում ռիսկերի մասին բավարար պատկերացում, ապա վարքային որոշումները և անտեսանելի սպառնալիքները կարող են բացասաբար ազդել համընդհանուր ենթակառուցվածքի անվտանգության վրա, ինչպես նաև ֆիզիկական վնաս պատճառել ռեալ աշխարհում: Անհատական մակարդակով քարտի վրա է դրված տեղեկատվական ենթակառուցվածքում յուրաքանչյուր առանձին օգտատիրոջ խոցելիությունը: Այն մարդը, որը չի հասկանում և չի կատարում կիբեռանվտանգության վերաբերյալ եղած հիմնական գործնական հանձնարարականները, ենթակա է մեծ անձնական ռիսկի, օրինակ՝ անձնական տվյալների հափշտակման, վարկի անկման և այլն: Այս առումով անհրաժեշտ է աշխատել, որպեսզի լայն հասարակայնությունը ձեռք բերի տեղեկատվական տարածությունում առկա ռիսկերի մասին գիտելիքներ, և նպաստել անվտանգության ռեսուրսների ու գործիքների օգտագործմանը, որպեսզի տեղեկատվական ենթակառուցվածքից հասարակության աճող կախման պայմաններում ռիսկերը հնարավորինս նվազեցվեն:

Համացանցից օգտվող բոլոր մարդիկ պատասխանատվություն են կրում ընդհանուր տեղեկատվական տարածության անվտանգության համար և պետք է տեղեկացված լինեն համապատասխան ռիսկերի ու խոցելիությունների մասին: Յուրաքանչյուր մարդ, իր տեղում պաշտպանելով իր և ուրիշների անձնական տեղեկույթը, հարձակումներից իր համակարգերի պաշտպանությունն ամրապնդելով և հարձակումների համար դրանց օգտագործման հնարավորությունը նվազեցնելով, օգնում է բոլորի համար ավելի անվտանգ տեղեկատվական տարածության ստեղծմանը:

Շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ անհրաժեշտ է մշակել հասցեական տեղեկատվական նյութեր և արդյունավետ մեխանիզմներ՝ սպառողների լայն շրջանին դրանք հասցնելու համար: Ընդսմին տեղեկատվական նյութերը պետք է ստեղծվեն տարբեր ձևաչափերով՝ հասարակական իրազեկվածության այնպիսի հասանելի միջոցների ու մեթոդների հաշվառմամբ, ինչպիսիք են հատուկ դասընթացները, թեմատիկ մրցույթները և չսահմանված միջոցառումները:

Հաճախ տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվողները գործ են ունենում անվտանգության ապահովման իրենց հասանելի տարբեր գործիքների ու ռեսուրսների հետ՝ չիմանալով, թե համացանցում անվտանգությունն

ապահովելու համար ո՛ր գործիքն ընտրել կամ գաղտնիության ի՛նչ կարգավորում օգտագործել: Անհրաժեշտ է լայն հասարակայնությանը մատչելի ձևով ներկայացնել նման գործիքների և ռեսուրսների արդյունավետ գործնական օգտագործման վերաբերյալ հանձնարարականները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կիբեռանվտանգության գծով մասնագետների պատրաստումը ժամանակակից տնտեսության և ընդհանուր առմամբ հասարակության կայուն զարգացման ապահովման հիմքերից մեկն է: Ընդսմին կիբեռանվտանգության ոլորտում կրթության կազմակերպման հիմնավորված ռազմավարությունը, որում հաշվառված լինեն մասնագետների պատրաստման որակի վրա ազդող բոլոր գործոնները, կարող է էապես նվազեցնել կիբեռանվտանգության ռիսկերի ներգործությունը և որոշ չափով նպաստել տնտեսական զարգացման ու տեղեկատվական ենթակառուցվածքում հարմարունակ գործակցության մակարդակի բարձրացման տեմպերի արագացմանը:

ПОДГОТОВКА КАДРОВОГО ПОТЕНЦИАЛА В ОБЛАСТИ КИБЕРБЕЗОПАСНОСТИ КАК ВАЖНОЕ СРЕДСТВО ЕЕ ОБЕСПЕЧЕНИЯ

Р. В. АГГАШЯН, кандидат технических наук, проректор НПУА,
А. Г. ГРИГОРЯН, начальник Центра политики национальной безопасности и информационно-коммуникационных технологий ИНСИ НИУО МО РА,
Г. И. МАРГАРОВ, кандидат технических наук, профессор, начальник кафедры Информационной безопасности и программного обеспечения НПУА

РЕЗЮМЕ

Подготовка специалистов по информационной безопасности остается одной из основ устойчивого развития современной экономики и общества в целом. При этом целевую аудиторию системы образования в области информационной безопасности можно условно разделить на четыре основные группы: школьники и студенты; специалисты; руководители; широкая общественность. В соответствии с этим можно выделить основные модели: организованное обучение с присвоением квалификации в соответствии с национальной рамкой квалификаций (формальное образование); повышение квалификации и переподготовка специалистов и руководителей (неформальное образование); общественное осведомление и распространение информации (информальное образование).

В качестве перспективных путей повышения эффективности образовательного процесса могут применяться компетентностный и инновационный подходы. Подобные подходы применяются в удовлетворяющем всем Европейским критериям качества образовательном

процессе в НПУА по подготовке бакалавров и магистров по специальности «Информационная безопасность» на базе кафедры Информационной безопасности и программного обеспечения, а также в исследовательско-образовательной деятельности НИУО МО РА в сфере стратегического управления информационными технологиями и киберресурсами и переподготовки соответствующих кадров в тесном научно-методологическом контакте с Национальным университетом обороны США.

DEVELOPING HUMAN RESOURCES CAPACITY IN THE CYBERSECURITY SPHERE AS AN IMPORTANT MEANS FOR ENSURING IT

R. V. AGHGASHYAN, PhD in Technical Sciences, Vice-Chancellor, NPUA,
A. H. GRIGORYAN, Head, Center for National Security Policy and Information-Communication Technologies, INSS, NDRU, MOD, RA,
G. I. MARGAROV, PhD in Technical Sciences, Professor, Head, Chair of Information Security and Software, NPUA

SUMMARY

Training information security specialists remains one of the sustainable development principles of the modern economy, and society in general. At the same time, the target audience of the education system in the sphere of information security may be conditionally divided into four main groups: schoolchildren and students; specialists; chief executives; the general public. In accordance with this, the following basic models can be singled out: organized training with conferment of qualification in compliance with the national framework of qualifications (formal education); advanced training and retraining of specialists and chief executives (non-formal education); public awareness and dissemination of information (informal education).

Expert and innovative approaches may be applied as perspective ways of increasing the efficiency of the educational process. In the National Polytechnic University of Armenia, similar approaches are applied in the educational process, meeting all the European quality criteria for training bachelors and masters in the specialty of "Information Security" on the basis of the Chair of Information Security and Software. It also regards the research and educational activities of the NDRU, MOD, RA, in the sphere of information technologies and cyber resources strategic management, and the retraining of an appropriate staff in close academic and methodological contact with the US National Defense University.

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԶՈՐՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ՀՀ ԶՈՒ-Ի ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահրատարակչական կենտրոնի ռազմագիտական խմբագրման բաժնի պետ – գլխավոր խմբագրի տեղակալ,
Ա. Ա. ԽՐԻՄՅԱՆ, ֆիզիկայի մագիստրոս, «Մոնիտիս ՍիԶեյէսՍի» ընկերության արտադրանքի կառավարման գծով ղեկավար,
Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտահրատարակչական կենտրոնի պետի – գլխավոր խմբագրի տեղակալ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի առաջադրած՝ ԶՈՒ-ի արդիականացման խնդրի կարևոր բաղկացուցիչներից մեկը զինծառայողների անընդհատ կրթության ու ինքնակատարելագործման համար նպաստավոր պայմանների ստեղծումն է. «Բանակն այն տեղն է, որտեղ պետք է լրացուցիչ կրթություն ստանան թե՛ շարքայինը, թե՛ սպան: .... Զորամասերում պետք է պայմաններ ստեղծվեն զինծառայողների գիտելիքները հարստացնելու համար»[1]:

Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը նշել է, որ «Ազգ–բանակը» այն հասարակությունն է, որում սպան գերազանցությամբ է կատարում ռազմական կառավարչի իր գործառույթը՝ լինելով «բանիմացության, առաջնորդության, ինքնավստահության մարմնացում»[2]: Այդպիսի սպա ունենալը նշանակում է էապես մեծացնել պաշտպանության համակարգի բազմամակարդակ կառավարման արդյունավետությունը, զինվորական մասնագիտությունը դարձնել ավելի գրավիչ և, կարծում ենք՝ ամենակարևորը, մեր բանակի՝ որպես մեր պետության, մեր ազգի անվտանգության երաշխավորի ապագան վստահել հուսալի կադրերի: Դրան հասնելու միակ ճանապարհը մասնագիտական կրթության ու դաստիարակության բարձր որակի ապահովումն է ամենաարդիական ու մշտապես կատարելագործվող, պահանջներից առաջանցիկության սկզբունքով մշակվող ու ներդրվող տեխնոլոգիաների կիրառմամբ[3]: Ընդ որում, բանակում լրացուցիչ կրթության առաջատար ոլորտը,

---

[1] Տես սույն համարում հրապարակված «Նախագահ Սերժ Սարգսյանի դասախոսությունը Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում», էջ 9–17:

[2] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում» 29.10.2016, «ՀԲ», 2016, հմ. 4:

[3] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը Հայաստան–Սփյուռք համա-

որում փորձնական պիլոտային ծրագրերով արդեն ներգրավված են տարբեր զորամասերի զինծառայողներ, տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների բնագավառն է[4]:

Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում ՀՀ ԶՈՒ-ում երևակայական (վիրտուալ) իրականության (ԵԻ) տեխնոլոգիաների[*] կիրառմամբ կրթության կազմակերպման հնարավորության ուսումնասիրությունը: ԵԻ-ն հետզհետե ավելի լայն տարածում է ստանում մարտական պատրաստման ու կրթության ասպարեզներում[5]: ԵԻ-ի տեխնոլոգիաների հիման վրա ստեղծված կրթական ծրագրերը խթանում են սովորողի մտածողությունը, զարգացնում ստեղծագործական ունակությունները և հարուցում իմացական շարժառիթավորում, ուսման նկատմամբ հետաքրքրություն[6]:

ԵԻ-ն ոչ միայն տեղեկատվահաղորդակցային, այլև հոգեբանական տեխնոլոգիաների արգասիք է. ինչ նպատակով էլ որ այն ստեղծված լինի, ԵԻ-ի տեխնոլոգիաներից օգտվողի («ԵԻ-ում գտնվողի») առաջ ծառանում են բազմաթիվ հոգեբանական պրոբլեմներ՝ երևակայական միջավայրին ընտելացում, իր գործողությունների և զգայական վիճակների համարժեքության ապահովում, ԵԻ-ի փոփոխմամբ իր հոգեկանի վրա ներգործելու հնարավորություն և այլն[7]: Հետևաբար, զորքերի պատրաստման նպատակով ԵԻ-ի կիրառումն ունի նաև հոգեբանական կողմ:

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային ճանաչողության տարբեր ոլորտներում ի հայտ են գալիս օբյեկտներ, որոնք նկարագրելու համար հարկ է լինում ներմուծելու «երևակայական օբյեկտ», «երևակայական իրականություն» հասկացությունները,

---

հայկական 6-րդ համաժողովի շրջանակում սեպտեմբերի 18-ին կայացած «Ազգ–բանակ. հավաքական ներուժի զարգացման մոդել» խորագրով անցկացված նիստի ընթացքում», 18.09. 2017 (http://www.mil.am/hy/news/4953):

[4] Տես նույն տեղում:

[*] «Երևակայական իրականության տեխնոլոգիաներ» ասելով հասկանում ենք ոչ միայն բուն երևակայական, այլև այսպես կոչված «լրացված», կամ «ընդլայնված», իրականության *(augmented reality)* ստեղծման տեխնոլոգիաները: Լրացված իրականությունը սովորական իրականությունն է, որին ծրագրավորման միջոցներով ավելացված են երևակայական օբյեկտներ (տես, օրինակ, *А. Скрынникова*. Все, что нужно знать про VR/AR-технологии. «Rusbase», 28.06.2017 (https://rb.ru/story/vsyo-o-vr-ar/)):

[5] Տես, օրինակ, *Federica Pallavicini, Nicola Toniazzi, Luca Argenton, Luciana Aceti, Fabrizia Mantovani*. Developing effective virtual reality training for military forces and emergency operators: from technology to human factors. September 2015 (https://www.researchgate.net/profile.pdf):

[6] Տես *В. В. Селиванов, Л. Н. Селиванова*. Виртуальная реальность как метод и средство обучения. «Образовательные технологии и общество». 2014, № 3 (http://cyberleninka.ru/article/n/virtualnaya-realnost-kak-metod-i-sredstvo-obucheniya):

[7] Տես *А. Е. Войскунский, Г. Я. Меньшикова*. О применении систем виртуальной реальности в психологии. «Вестник Московского университета», серия 14 «Психология», 2008, № 1 (http://cyberleninka.ru/article/n/o-primenenii-sistem-virtualnoy-realnosti-v-psihologii):

ընդսմին ԵԻ-ն կարող է լինել հոգեբանական, ֆիզիկական, տեխնոլոգիական և այլն[8]: Այսպես. որոշ հետազոտողներ հոգեբանական ԵԻ են համարում, օրինակ, բուդդայականության հոգևոր պրակտիկայում առաջացող «գիտակցության մակարդակները»[*], ֆիզիկական են այսպես կոչված երևակայական մասնիկները[**], իսկ տեխնոլոգիական ԵԻ-ի օրինակ է համակարգչի միջոցով ստեղծված երևակայական իրականությունը:

Ըստ Ն. Նոսովի՝ երևակայական իրականությունը, անկախ իր տեսակից, ունի հետևյալ հատկությունները.

ա) *ծագվածություն (порожденность)*. երևակայական իրականությունն ինքնուրույն կեցություն չունի, այլ ծագած է մեկ այլ իրականությունից, որն էլ ապահովում է նրա ամբողջականությունն ու լրիվությունը,

բ) *ժամանակակցություն (актуальность)*. ԵԻ-ն գոյություն ունի, քանի դեռ ծնող իրականությունն արարում է նրան, և դադարում է գոյություն ունենալուց, հենց որ այդ արարումը դադարում է,

գ) *ինքնավարականություն (автономность)*. ԵԻ-ն ունի իր ժամանակային համակարգը, տարածությունը և օրինաչափությունները,

դ) *փոխգործականություն (интерактивность)*. ԵԻ-ի օբյեկտներն ունակ են փոխազդելու ծնող իրականության օբյեկտների հետ[9]:

Ստորև երևակայական իրականություն ասելով կհասկանանք մարդ–մեքենա փոխազդեցության այն տեխնոլոգիան, որն ապահովում է օգտատիրոջ ընկղմումը եռաչափ գործակցական տեղեկութային միջավայրի մեջ: Այդպիսի ԵԻ-ն սահմանվում է իր հիմնական հատկությունների միջոցով, որոնք են՝

---

[8] Տես, օրինակ, *Е. Е. Зинченко*. Виртуальная реальность: от онтологии до технологии. Магистерская диссертация. Уральский федеральный университет, Институт социальных и политических наук. Екатеринбург, 2015, сс. 83–88 (http://elar.urfu.ru/bitstream/10995/34709/1/m_th_e.e.zinchenko_2015.pdf):

[*] Հետազոտող Ն. Նոսովը գրում է, որ «իրականության որոշակի մակարդակում գտնվող բուդդայականի համար աստիճանակարգության ավելի բարձր մակարդակների իրականությունները.... ոչ մի կերպ տրված չեն նրան իր զգայություններում, ապրումներում, ըմբռնումներում, պատկերացումներում: Դրանք չեն մտնում նրա կյանք, և նա դրանց մասին գիտի միայն ուրիշ մարդկանց պատմածից: Իսկ երբ ինքն է անցնում հաջորդ մակարդակ, ապա դրան համապատասխանող իրականությունը դառնում է զգալի, տեսանելի, գոյությամբ՝ անկասկած. այն, ինչի մասին նա միայն լսել էր, դառնում է տրված և՛ զգայություններում, և՛ պատկերացումներում» (տես *Н. Носов*. Виртуальная психология. М., 2000, с. 29: Մեջբերվում է ըստ՝ *Ե. Զինչենկոյի*, Նշ. աշխ., էջ 28):

[**] Երևակայական է այն մասնիկը, որն առաջանում է վակուումում տարրական մասնիկների բախման կամ տրոհման ժամանակ, ունի կյանքի շատ կարճ տևողություն, սկզբունքորեն դիտելի չէ (չհայտնաբերվող է) և կատարում է փոխազդեցության կրողի դեր: Երևակայական մասնիկի կյանքի տևողության ընթացքում խախտվում է էներգիայի պահպանման օրենքը, ընդսմին այդ տևողությունը որոշվում է էներգիայի և ժամանակի միջև անորոշությունների առնչությամբ: Երևակայական են կոչվում սկզբունքորեն չդիտելի լինելու պատճառով (տես, օրինակ, «Виртуальная частица». «Ядерная физика в Интернете» (http://nuclphys.sinp.msu.ru/enc/e028.htm)):

[9] Տես *Ե. Զինչենկո*, Նշ. աշխ., էջ 29–30:

1) ծրագրավորման միջոցներով իրական օբյեկտներին առավելագույնս մոտ եռաչափ պատկերների ու մոդելների* ստեղծման հնարավորության ապահովումը,
2) շարժունակություն ապահովելու կարողությունը՝ հնարավորությունը. սուբյեկտը կարող է ԵԻ-ում տեղաշարժվել, տարբեր կողմերից դիտել օբյեկտները, թափանցել դրանց մեջ և այլն,
3) իրական ժամանակի բանելակարգում տվյալների ցանցային մշակման ապահովումը, օրինակ՝ սուբյեկտի շարժումները, դիցուք՝ գլուխը թեքելը, փոխում են առարկաների պատկերները,
4) ծրագրավորման միջոցներով «ներկայության երևույթի» (զգացողության) ստեղծումը. սուբյեկտը ձեռք է բերում ԵԻ-ի առարկաների կամ երևակայական սուբյեկտների հետ փոխազդեցության պատիր[10]:

ԵԻ-ում «ընկղմվելու» ամենատարածված և պարզ միջոցը մարդու գլխին ամրացվող հատուկ սարքն է՝ «սաղավարտը» (ակնոցը), որն աշխատում է հետևյալ սկզբունքով. աչքերի առջև տեղադրված էկրանին ցուցադրվում է եռաչափ (*3D* ձևաչափով) տեսանյութ: Սարքի պատյանին ամրացված հոլակը և արագացումաչափը հետևում են գլխի (մարմնի այլ մասերի ամրացված տվիչների դեպքում՝ նաև մարմնի) շարժումներին և տվյալները փոխանցում հաշվիչ համակարգին, որը էկրանին ցուցադրվող պատկերը փոխում է տվիչների ցուցմունքներին համապատասխան: Պատկերի մեծ աստիճանի հստակությունն ու մշտապես կիզակետում գտնվելն ապահովելու համար օգտագործվում են հատուկ պլաստիկ ոսպնյակներ[11]:

Երևակայական իրականության գաղափարը նոր չէ: Երևակայական աշխարհներ ստեղծելու, մարդու զգայարանները խաբելու հնարները (տեխնիկան) միշտ հետաքրքրել են նկարիչներին, աճպարարներին, բեմադրիչներին, կինոռեժիսորներին: Հենց նրանց ստեղծած երևակայական աշխարհներն են, որ ժամանակակից երևակայական իրականության նախատիպն են, ինչպես, օրինակ, 18–19-րդ դդ. մոնումենտալ համայնապատկերները: Պատկերակերտման այդ ավանդույթը 20-րդ դարում խթանեց արվեստի այնպիսի երևույթների առաջացումը, ինչպիսիք են ֆուտուրիստական թատրոնը, եռաչափ ֆիլմերի արտադրությունը, «Այմեքս» *(IMAX՝ Image Maximum)* լայնաֆորմատ կինեմատոգրաֆիական համակարգի վրա հիմնված կինոցուցադրման (կինոթատրոնի) տեխնոլոգիայի ստեղծումը և այլն: Արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ԱՄՆ-ի օդուժը ինքնաթիռների

* Իրականին մոտ լինելը ապահովվում է ոչ միայն արտաքին նմանությամբ, այլև տվյալ օբյեկտի հատկությունների նմանակմամբ: Օրինակ՝ ջուրը նետված գնդակի դեպքում հաշվի են առնվում նաև ջրի և գնդակի խտությունների տարբերությունները, այնպես որ ԵԻ-ում գնդակը կլողա, ինչպես իրականում:

[10] Տես *Կ. Կ. Սելիվանով, Լ. Ն. Սելիվանովա*, Նշ. աշխ.:

[11] Տես, օրինակ, “Virtual legality: Virtual Reality and Augmented Reality – Legal Issues”. “dentons.com”, 20 February 2017, PP. 4–5 (https://www.dentons.com/en/insights/articles/2017/february/20/virtual-legality):

վթարների կանխման վարժանքներում կիրառում էր լայնէկրան ֆիլմերի տեխնոլոգիան, որն ստեղծման թվականին (1939) կոչվում էր Վիտառամա *(Vitarama)*, իսկ 1950-ականների կեսին՝ Սինեռամա *(Cinerama)*[12]:

1960 թ. կինեմատոգրաֆիստ Մորտոն Հայլիգն ստեղծում է հատուկ սարքավորանք՝ բազմաթիվ մուտքերով, որոնք նախատեսված էին ստերեոսկոպիկ պատկերներ, բազկաթոռի շարժում, ձայն, ջերմաստիճանի փոփոխություն, հոտեր և քամի ստեղծելու (նմանարկելու) համար: 1962 թ. նա այդ սարքավորանքն արտոնագրում է որպես «Սենսոռամա» *(Sensorama)* մոդելարկիչ *(simulator)*, որը նախանշանակված էր մարդու զգայություններն այնպես նմանարկելու համար, որպեսզի ստեղծվի իրականության պատրանք[13]:

20-րդ դարի ընթացքում գիտության և տեխնիկայի տարբեր ոլորտներում զուգահեռաբար կատարվում են բազմաթիվ հայտնագործություններ, որոնք ի վերջո հանգեցնում են երևակայական իրականության տեխնոլոգիաների ստեղծմանը: 1963 թ. էլեկտրոնիկայի և համակարգչի մասնագետ Իվան Սադեռլենդը *(Ivan Sutherland)* ստեղծում է փոխգործական նկարչության «Սկետչ-փադ» *(Sketchpad)* համակարգը, որը բաղկացած էր կատոդային ճառագայթման խողովակի հիման վրա ստեղծված էկրանից, լուսարձակող «մատիտից» և կառավարման վահանակից: Հաջորդ մի քանի տարիների ընթացքում Սադեռլենդն ստեղծում է մարդու գլխին ամրացվող մի «սաղավարտ», որն օժտված էր եռաչափ *(3D)* պատկերների համակարգչային էկրանով: 1967 թ. սարքը փորձարկվում է ուղղաթիռի օդաչուների վարժանքներում: 1970-ական թվականների վերջերից այդ սարքերը («սաղավարտները») կիրառվում են նաև զինվորական օդաչուների պատրաստման համար:

1987 թ. Ջարոն Լանիերը *(Jaron Lanier)* առաջարկում է «երևակայական իրականություն» տերմինը: 1989 թ. հունիսի 7-ին նրա և Թոմաս Զիմերմանի ստեղծած «ՎՊԼ Ռիզերչ *(VPL Research)*» ընկերությունը ԱՄՆ-ի հանրությանը ներկայացնում է իր արտադրած առաջին առևտրային ԵԻ-ի համակարգերը և այդ օրը հռչակում որպես «Երևակայական իրականության օր»: 1990-ականներին և 21-րդ դարում ԵԻ-ի տեխնոլոգիաները հաջողությամբ կիրառվում են գիտական հետազոտությունների, ժամանցի, վարժանքների և բազմաթիվ այլ ոլորտներում[14]: Մասնավորապես՝ մարտական պատրաստման (ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական վարժանքների) ոլորտում երևակայական իրականության տեխնոլոգիաները կիրառվում են երեք հիմնական ուղղություններով:

1) Ընթացակարգային վարժանքներ. ուշադրությունը բևեռվում է տարբեր ընթացակարգերի կատարման հմտությունների զարգացման վրա, օրինակ՝ ռազմական ինքնաթիռների վարման, արտակարգ իրավիճակներում բժշկական օգնության ցուցաբերման հմտությունների ուսուցանում և այլն:

[12] Տես *Henry E. Lowood*. Virtual reality. “Encyclopedia Britannica” (https://www.britannica.com/technology/virtual-reality):

[13] Տես նույն տեղում:

[14] Տես նույն տեղում:

2) Բարդ իրավիճակների (ճգնաժամների) կառավարման վարժանքներ, որոնց նպատակը մարտական իրադրությանը մոտ և բնական ու տեխնածին աղետները նմանարկող պայմաններում թիմային աշխատանքի և որոշումների կայացման հմտությունների ուսուցանումն է:

3) Զգացմունքների և ստրեսի կառավարման վարժանքներ, որոնք նախատեսված են զինծառայողների, հետվնասվածքային ստրեսի համախտանիշով տառապողների համար և այլն[15]:

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԶՈՐՔԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. ՀՀ ԶՈՒ-ում ԵԻ-ի տեխնոլոգիաները արդեն կիրառվում և կատարելագործվում են ինչպես հայրենական, այնպես էլ այլ երկրների արտադրության մի շարք վարժասարքերում, որոնք նախատեսված են հիմնականում *ընթացակարգային վարժանքների* համար: Դրանցից են «L-39» ուսումնական ինքնաթիռի, «Իգլա» ԶՀՀ, «Ֆագոտ» և «Մետիս» հակատանկային կայանքների անձնակազմերի, «ԱԿ-74» ավտոմատով հրաձգության, թիրախների խոցման ու հրաձգության ամերիկյան լազերային «Մայլս» վարժասարքերը և այլն[16]:
2. ԵԻ-ի տեխնոլոգիաների զարգացման հեռանկարային ուղղություն է դրանց կիրառումը *բարդ իրավիճակների (ճգնաժամների) կառավարման վարժանքներում:* Ինչպես հայտնի է, նման վարժանքների նպատակը զինծառայողների պատրաստումն է մարտական իրադրությունը հնարավորինս ճիշտ նմանարկող պայմաններում ծագող մեծ աստիճանի ստրեսի հաղթահարմանը, երբ մարդկանց մեծ մասի շարժումային հմտություններն ու կառավարելու ուղեղի կարողությունը թուլանում են, ինչի հետևանքով կտրուկ կերպով նվազում է նրանց գործունեության արդյունավետությունը: Վարժանքները մարտադաշտի պայմաններին առավելագույնս համապատասխանեցնելու համար կառուցվում են որոշակի տեսակի զորավարժարաններ: Օրինակ՝ Իսրայելի ԶՈՒ-ն վարժանքների համար օգտագործում է լիբանանյան շիական գյուղի ամբողջական մանրակերտը: Այն կառուցել է մի գերմանական ընկերություն, և այդտեղ վարժանքներ են կատարում ոչ միայն Իսրայելի, այլև ՆԱՏՕ-ի անդամ մի շարք պետությունների ԶՈՒ-երի ստորաբաժանումները[17]: Սակայն նման

[15] Տես *Ֆ. Պալավիչինի, Ն. Տոնիազի, Լ. Արգենտոն, Լ. Աչետի, Ֆ. Մանտովանի*, Նշ. աշխ.:

[16] Տես, օրինակ, «Մարտական պատրաստություն. բանակի մարտունակության հիմքը»: «Հայ զինվոր», 2017, հմ. 39 (http://www.hayzinvor.am/49841.html), ««Ֆագոտ» և «Մետիս» հակատանկային զենքերի հայկական վարժասարքերը (ֆոտո)», «Ռազմ.info», 04.10.2013 (https://razm.info/22100), «Ամերիկյան մասնագետների կողմից անցկացվում են ժամանակակից վարժասարքերի շահագործման վարժանքներ», «Hotnews.am», 15.07.2016 (http://hotnews.am/armenia_news/protection/699--.html), «Բանակը գոհ է արդյունքներից», «armef.news», 18.10.2016 (http://armef.com/hy/news/tekhnologianer/banaky-goh-e-ardyunqneric/):

[17] Տես *Judah Ari Gross*. With eyes to Hezbollah, IDF unveils “Lebanese village” training center. “The Times of Israel”, 29.05.2017 (https://www.timesofisrael.com/with-eyes-to-hezbollah-idf-unveils-lebanese-village-training-center/):

զորավարժարանները թանկ են, իսկ դրանց թողունակությունը (միաժամանակ վարժեցվող զինծառայողների թիվը)՝ փոքր: Այստեղ է, որ երևակայական իրականության տեխնոլոգիաները առաջարկում են արդյունավետ լուծում՝ հնարավորություն ընձեռելով ստեղծելու ուսուցման համապիտանի միջավայր:

Օրինակ՝ ԱՄՆ-ի բանակի զինծառայողները Իրաքում և Աֆղանստանում պատերազմի փորձի հաշվառմամբ վարժանքներ են կատարում երևակայական իրականության զորավարժարաններում: Դրանք դատարկ մեծ հանգարներ են: Զինծառայողի հանդերձանքն է հատուկ ակնոցը, ականջակալները, վարժանքի համար նախատեսված հատուկ ավտոմատները, որոնք միավորված են մեկ միասնական տեղեկութային համակարգում: Զինվորները ԵԻ-ի ակնոցով և ականջակալներով տեսաձայնային տեղեկույթ են ստանում ըստ մշակված սցենարի, օրինակ՝ պարեկության կատարում իրաքյան Ֆալուջա քաղաքի երևակայական մոդելում, ընդսմին երևակայական իրականության մեջ են ընկղմված ստորաբաժանման բոլոր զինծառայողները: Նրանք կարող են տեսնել միմյանց և գործել որպես առանձին ջոկատ: Բոլոր մարտիկները գտնվում են հատուկ հարթակների վրա, որոնք հնարավորություն են տալիս տեղում քայլելու և վազելու, ինչը ԵԻ-ն է՛լ ավելի է նմանեցնում իրականությանը: Երբ մարտիկը շարժվում է, ծրագիրը փոխում է ԵԻ-ում նրա ունեցած դիրքը, և որպես արդյունք՝ մարտիկի համար երևակայական գործողությունները թվում են մեծ աստիճանի հավաստիությամբ[18]:

Տարբեր պետությունների (ԱՄՆ, Ռուսաստան, Հարավային Կորեա և այլն) բանակներում ԵԻ-ի տեխնոլոգիաները կիրառվում են օդադեսանտային պատրաստման համար: Փակ շինության մեջ զինվորները առաստաղից կախված են բացված պարաշյուտի փոկերը նմանարկող և հատուկ տվիչներ ունեցող գոտիներով, որոնք ամրացված են նրանց ձեռքերին ու ոտքերին: Ձգելով այդ փոկերը՝ զինվորները կարող են կառավարել «պարաշյուտը»: Միևնույն ժամանակ ԵԻ-ի ակնոցը ստեղծում է զորէջքի սցենարով նախատեսված իրականություն: Այսպիսով՝ կտրուկ կերպով նվազում է ուսուցման ընթացքում վնասվածք ստանալու ռիսկի աստիճանը և

[18] Տես, օրինակ, “Fort Hunter Ligget Military Training (plus VR sim)”, 19.10.2016 (https://www.youtube.com/watch?v=u_oyU6dQvCE&feature=youtu.be&t=1m17s); *Joyce M. Conant*. Augmented reality may revolutionize Army training, “U.S.ARMY”, 08.08.2017 (https://www.army.mil/article/191942/augmented_reality_may_revolutionize_army_training); *Sean Gallagher*. Heads up: Augmented reality prepares for the battlefield. “arsTechnica”, 25.05.2017 (https://arstechnica.com/information-technology/2017/05/ heads-up-augmented-reality-prepares-for-the-battlefield/); *Sarah Sicard*. Infantry Marines Can Now Train For Combat Without Ever Leaving The Barracks. “Task & Purpose”, 02.08.2017 (http://taskandpurpose.com/infantry-marines-can-now-train-combat-without-ever-leaving-barracks/); *Adam Stone*. How Virtual Reality Is Changing Military Training. “Insights”, 13.07.2017 (https://insights.samsung.com/2017/07/13/how-virtual-reality-is-changing-military-training/):

ուսման արժեքը[19]: Անշուշտ, ԵԻ-ի հարթակները չեն կարող լիովին փոխարինել իրական պայմաններում կատարվող վարժանքները, բայց այդ տեսակի վարժանքների համադրությունը ուսուցումը հասցնում է նոր որակի:

3. Զարգացած պետություններում ԶՈՒ-ի պատրաստման գործում կիրառվում են մարտական իրավիճակներ մոդելավորող այնպիսի վարժասարքեր, որոնք զինծառայողներին հնարավորություն են տալիս ձեռք բերելու ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև զարգացնելու արտակարգ իրավիճակներում *վարքի (զգացմունքների և ստրեսի) կառավարման* ունակություններ[20]: Օրինակ՝ ԱՄՆ-ի ԶՈՒ-ում իրագործվում է «Երևակայական միջավայրներում ստրեսակայունություն» *(STRIVE՝ Stress Resilience In Virtual Environments)* նախագիծը, որի նպատակն է Իրաքում ու Աֆղանստանում մղված պատերազմների փորձի հաշվառմամբ նմանարկված իրադրություններում ստրեսի հաղթահարման հմտությունների ձևավորման միջոցով զինծառայողների համար բարձրացնել մարտական ստրեսի շեմը[21]:

Այդ նպատակով վարժասարքերում ստեղծվում է այնպիսի ԵԻ, որն ունակ է ազդելու տեսողության, լսողության, շոշափելիքի, համի և հոտառության զգայարանների վրա: Տվյալ սարքերը հնարավորություն ունեն մոդելավորելու մարտական իրավիճակներին բնորոշ այնպիսի ստրեսածին գործոններ (արյունոտ տեսարաններ, պայթյունի ձայն, վիրավորների ճիչ, տհաճ (վտանգավոր) հոտեր և այլն), որոնք անմիջական հոգեխոցիչ ազդեցություն են գործում զինծառայողի հոգեկանի վրա: Պարապմունքների ժամանակ վարժասարքերի կիրառումը նպատակ ունի ձևավորելու զինծառայողների հոգեկան և վարքային կայունություն ապահովող այնպիսի մեխանիզմներ, որոնք նրանց տալիս են իրենց ուժերի նկատմամբ վստահություն, նպաստում են այդ գործոնների նկատմամբ դիմադրողականության մեծացմանը, ինչն էլ ապահովում է տագնապների, վախերի հետ կապված ստրեսների բացասական ազդեցությունը հաղթահարելու կամ չեզոքացնելու բավարար հոգեկան ներուժ, գիտելիքներ ու հմտություններ:

---

[19] Տես "Korean startup releases VR simulators for military training", 19 July 2016 (https://www.youtube.com/watch?v=Et5BsV0U1Lw); *Logan Nye*. New virtual reality lets operators simulate jumps into combat. "We are the Mighty", 19.05.2017 (http://www. wearethemighty.com/articles/virtual-reality-lets-operators-simulate-jumps-into-combat):

[20] Տես *T. R. Witcher.* Virtual Reality Games Fuel a Military Training Revolution, 08.02.2017 (https://www.govtechworks.com/virtual-reality-games-fuel-a-military-training-revolution/); *Simon Parkin.* How VR is training the perfect soldier: from sniper to tank drivers, virtual reality is changing the way we prepare for war, 31 December 2015 (https://www.wareable.com/vr/how-vr-is-training-the-perfect-soldier-1757); "Virtual Reality in the Military" (https://www.vrs.org.uk/virtual-reality-military/):

[21] Տես *J. Galen Buckwalter, Albert Rizzo, Bruce John, Brad Newman, Josh Williams, Thomas Parsons.* STRIVE: Stress Resilience in Virtual Environments. University of Southern California, Institute for Creative Technologies, 2015 (http://ict.usc.edu/pubs/STRIVE-%20Stress%20Resilience%20in%20Virtual%20Environments-%20A%20Pre-Deployment%20VR%20System%20for%20Training%20Emotional%20Coping%20Skills%20and%20Assessing%20Chronic%20and%20Acute%20Stress%20Responses.pdf):

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մարտական գործողությունների առաջին օրը անձնակազմի հոգեծին կորուստների թիվը կարող է հասնել 60–65 %-ի[22]: ԶՈՒ-ում մարտական իրավիճակների մոդելավորմամբ անցկացվող ռազմաուսումնական պարապմունքները, զորավարժությունները զարգացնում են փոխգործությանը, փոխաջակցությանը զինծառայողների վարժվածությունը՝ նվազեցնելով հոգեծին կորուստների թիվը, ինչը առավել ևս կարևոր է Հայաստանի նման սահմանափակ մարդկային ռեսուրսներ ունեցող պետությունների համար: Ընդսմին նպատակահարմար է համակարգչային և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ ուսումնասիրել և դասակարգել ստրեսածին գործոնների ազդեցությամբ զինծառայողների վարքի փոփոխման հոգեֆիզոլոգիական նախանշանները:

Մարտական իրավիճակներում առաջին պլան է մղվում ինքնապահպանման բնազդը, որը հանգեցնում է մարտից խուսափելու ենթագիտակցական ձգտմանը[23]: Նման հոգեբանական երևույթներ կարող են դրսևորվել նաև երևակայական իրականության վարժասարքերի միջոցով անցկացվող պարապմունքների ժամանակ: Ուստի մարտական իրավիճակների մոդելավորումը և մարզումներով դրանց հաղթահարումը կնպաստեն հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ակտիվացմանը՝ վախի զգացումն ընկճելուն, ինչպես նաև ճանաչողական-վարքային թերապիայի միջոցով ստրեսները կառավարելի դարձնելուն, դրանց բացասական ազդեցությունը նվազեցնելուն[24]:

Հայտնի է, որ մարդու հարմարման կարողությունն անսահման չէ, և օրգանիզմն ստրեսորներին կարող է դիմակայել միայն որոշակի ժամանակ, հետևաբար՝ ստրեսորներին դիմադրության երկարատևությունը պայմանավորված է օրգանիզմի բնածին հարմարվողականության մակարդակով, ստրեսորի ուժգնությամբ[25] և մարդու վարժվածությամբ:

Ընդսմին, քանի որ երևակայական իրականությունն ունի համալիր ստրեսածին հնարավորություններ և կարող է զինծառայողների վրա գործել նախատեսվածից մեծ բացասական ազդեցություն, ապա անհրաժեշտ է հաշվի առնել վարժասարքով մարզվող անձնավորության անձնային առանձնահատկությունները, հմտությունները, պատրաստականության և հոգեկան կայունության մակարդակները: Պարապմունքներ անցկացնելիս պետք է խնստագույնս հաշվառվեն ինչպես վարքի, այնպես էլ գործողությունների արդյունավետության ընթացիկ ցուցանիշները և կատարվի արդյունքների համեմատական վերլուծություն:

---

[22] Տես. *А. Ю. Баутин.* Психологическая работа с военнослужащими – участниками боевых действий (https://www.rae.ru/forum2012/pdf/2068.pdf):

[23] Տես *Ն. Ն. Գոլովին,* Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 1–2, 3, 1998, հմ. 1:

[24] Այս մասին ավելի հանգամանորեն տես *А. Демкин.* Применение систем виртуальной реальности для оказания помощи при боевом стрессе (http://enures.dacha-dom.ru/boevoi-stress-virtualnaya-realnost.shtml):

[25] Տես *Հ. Սելյե,* Ստրես առանց դիստրեսի: Ե., 1983, էջ 36:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում արագորեն զարգացող ԵԻ-ի տեխնոլոգիաները հետզհետե ավելի լայն կիրառություն են ստանում մարտական պատրաստման, ռազմական կրթության ու փորձարարական հոգեբանության ոլորտներում: ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման համատեքստում կարևոր է ԵԻ-ի տեխնոլոգիաների կիրառմամբ անցկացնել ոչ միայն ընթացակարգային, այլև բարդ իրավիճակների և զգացմունքների ու ստրեսների կառավարման վարժանքներ, ինչն էապես կբարձրացնի ԶՈՒ-ի մարտունակության աստիճանը:

Միևնույն ժամանակ, ԵԻ-ի տեխնոլոգիաների կիրառմամբ զորքերի մարտական պատրաստումը պահանջում է զգալի ֆինանսական ծախսեր: Օրինակ՝ ԱՄՆ-ի բանակի վերը հիշատակված ԵԻ-ի զորավարժարանը և զինծառայողի համապատասխան հանդերձանքը արժեն տասնյակ միլիոնավոր դոլարներ: Սակայն նորամուծական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս այդ գումարի 10 %-ի ծախսմամբ ստանալու առնվազն 50 % արդյունք: Այդպիսի նորամուծություններից է, օրինակ, ԵԻ-ի ստվարաթղթե ակնոցը, որը մշակել է «Գուգլ» *(Google)* ընկերությունը[26]: Հավաքովի ստվարաթղթե ակնոցում տեղադրվում է բջջային հեռախոս, որի էկրանին ստեղծվում է երևակայական իրականությունը: Ստվարաթղթե սարքի արժեքը մի քանի դոլար է, իսկ ներկառուցված հոլակով բջջային հեռախոսինը՝ մոտ 100 դոլար: Այդքանը բավական է ուսուցման անհատական լրակազմ ստեղծելու համար:

Մեկ այլ նորամուծություն են ԵԻ-ի սցենարների և խաղերի ստեղծման համար համակարգչային ծրագրերի արագորեն կատարելագործվող անվճար կոնստրուկտորները[27]: Դրանք հնարավորություն են տալիս մշակողների փոքր խմբին նույնիսկ առանց ծրագրավորման լեզու իմանալու արագորեն ստեղծելու իրատեսական սցենարներ (համակարգչային ծրագրեր): Կարևոր է նշել, որ Հայաստանի SS ոլորտում կան մի շարք ընկերություններ, որոնք արդեն աշխատում են ԵԻ-ի բնագավառում և կարող են ՀՀ ԶՈՒ-ի համար ապահովել անհրաժեշտ ուսումնական սցենարների ստեղծումը:

Եվս մի նորամուծություն է ֆիլմերն «առաջին դեմքով» նկարահանելու մեթոդը: Այն լայնորեն օգտագործվում է տեսախաղերում, օրինակ, «Դում»-ում *(Doom)*: 2015 թ. Ռուսաստանում «առաջին դեմքով» նկարահանվել է ռուս-ամերիկյան «Hardcore Henry» գիտաֆանտաստիկ ֆիլմը[28] (ֆիլմում կատարվող բոլոր իրադարձությունները հանդիսատեսը տեսնում է ոչ թե «կողքից», այլ՝ գլխավոր հերոսի աչքերով): Նման մեթոդով ստեղծված ֆիլմ դիտելու

[26] Տես, օրինակ, “Google Cardboard” (https://vr.google.com/intl/ru_ru/cardboard/): Ակնոցի հավաքման եղանակը տես «Как собрать Google Cardboard - Картонные 3D VR очки виртуальной реальности», 11.05.2016 (https://www.youtube.com/watch?v=T1ZCvNuLFBc):

[27] Տես, օրինակ, «Конструкторы приложений» (https://apptractor.ru/develop/app-constructors):

[28] Ֆիլմի պաշտոնական գովազդային հոլովակը (թրեյլեր) տես՝ https://www.youtube.com/watch?v=96EChBYVFhU:

ժամանակ հանդիսատեսը համարյա ամբողջովին «ընկղմվում» է սցենարի մեջ: Այդ մեթոդի հարաբերական էժանությունը և Հայաստանում հեռուստասերիալների արդյունաբերության գոյությունը լայն հնարավորություններ են տրամադրում վարժանքների սցենարների ստեղծման համար:

Այսպիսով՝ ԵԻ-ի հայրենական տեխնոլոգիաների մշակումը և կիրառումը հնարավորություն են ընձեռում հակառակորդի սպառազինությունների ավելացմամբ նրա զորքերի մարտունակության աստիճանի «մեխանիկական» բարձրացմանը տալու անհամաչափ պատասխան: Ավելին. կրթական համակարգում այդ տեխնոլոգիաների զանգվածային կիրառումը հնարավորություն կտա կտրուկ կերպով բարձրացնելու ռազմական առարկաների դասավանդման մակարդակը նաև դպրոցներում ու բուհերում, ինչը կարևոր է «Ազգ–բանակ» հայեցակարգի ներդրման, ԶՈՒ-ի արդիականացման տեսանկյունից:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПОДГОТОВКИ ВОЙСК С ПРИМЕНЕНИЕМ ТЕХНОЛОГИЙ ВИРТУАЛЬНОЙ РЕАЛЬНОСТИ В КОНТЕКСТЕ МОДЕРНИЗАЦИИ ВС РА

З. Д. АСАТРЯН, полковник, кандидат психологических наук, доцент, начальник отдела военно-научного редактирования Научно-издательского центра – заместитель главного редактора НИУО МО РА, А. А. ХРИМЯН, магистр физики, продукт-менеджер компании «Монитис Си-Джей-Эс-Си», А. К. ЯЛАНУЗЯН, полковник, заместитель начальника Научно-издательского центра – главного редактора НИУО МО РА

РЕЗЮМЕ

Важнейшими сферами применения технологий виртуальной реальности (ТВР) являются боевая подготовка, военное образование и экспериментальная психология. В частности, в сфере боевой подготовки ТВР применяются в следующих основных целях: развитие навыков выполнения различных процедур; обучение навыкам командной работы и принятия решений в сложных (кризисных) ситуациях; обучение управлению эмоциями и стрессом. В контексте модернизации ВС РА целесообразно применение ТВР по всем трем направлениям. При этом проблему затратности ТВР можно решить посредством применения различных инновационных технологий, например, картонных очков ВР компании «Гугл», бесплатного конструктора компьютерных программ, технологий создания фильмов «от первого лица» и др. Разработка и применение отечественных ТВР позволит асимметрично реагировать на осуществляемую гонку вооружений противником, а также повысить уровень эффективности преподавания военно-прикладных дисциплин в системе как военного, так и гражданского образования.

SOME ISSUES OF TROOPS PREPARATION VIA APPLYING VIRTUAL REALITY TECHNOLOGIES IN THE CONTEXT OF THE RA ARMED FORCES MODERNIZATION

Z. D. ASATRYAN, Colonel, PhD in Psychology, Associate Professor, Head, Defense-Academic Editing Department–Deputy Editor-in-Chief, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA; A. A. KHRIMYAN, Master of Physics, Production Manager, "Monitis" CJSC; A. K. YALANUZYAN, Colonel, Deputy Head – Deputy Editor-in-Chief, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA

SUMMARY

Combat training, military education and experimental psychology are the most important spheres of applying the Virtual Reality Technology (VRT). In particular, in the sphere of combat training, the VRT is implemented for the main following purposes: developing skills for carrying out various procedures; training skills for the teamwork and decision-making in difficult (crisis) situations; training emotion control and dealing with stress. In the context of the RA Armed Forces modernization, the VRT implementation is feasible in all three directions. What is more, the VRT expenditure may be dealt with the application of various innovation technologies, like, the Google VR cardboard glasses, free software designer, "first person shooting" technology, etc. The development and implementation of domestic VRT will make it possible to asymmetrically react to the enemy's arms race, as well as to raise the efficiency level of teaching military-applied disciplines in the system of both military and civilian education.

ՀՀ ԶՈՒ-Ի ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ» ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ*

Ս. Տ. ՉԱԽԱԼՅԱՆ, Ալավերդու Սայաթ-Նովայի անվան հմ. 8 ավագ դպրոցի ռազմագիտության ուսուցիչ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման յոթնամյա ծրագիր մշակելու հանձնարարականով ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանն ազդարարեց «նոր՝ անհամեմատ բարձր, նշաձողի» սահմանումը. «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կտրուկ արդիականացումը ժամանակի պահանջն է: Դա նաև թելադրված է ինչպես այսօրվա, այնպես էլ ապագայի մարտահրավերներով»[1]:

Ինչպես հայտնի է, այսօր զինված պայքարի միջոցները և ըստ այդմ մարտի բնութագրերը արագ փոփոխվում են, մարտական գործողությունները դառնում են ավելի սրընթաց, տարաշարժուն, աճում է դրանց տարածական ընդգրկումը:

Այս ամենը հետզհետե ավելի մեծ պահանջներ է ներկայացնում ոչ միայն սպայի՝ որպես «կառավարչական գործառույթ կատարող մտավորականի»[2] և մոտ ապագայում կառավարման համակարգի վճռորոշ տարրի, այլև զինվորի հատուկ, հոգեբանական ու ֆիզիկական պատրաստմանը՝ մարտական իրադրությունում արագորեն կողմնորոշվելու, այն համարժեքորեն գնահատելու, ճշգրիտ որոշումներ ընդունելու և ստորաբաժանման գործողությունների հետ ներդաշնակորեն կատարելու կարողությունների ձևավորման առումով: Այդ գործը հաջողությամբ պսակելու համար այն պետք է սկսվի բանակային ծառայությունից շատ ավելի վաղ՝ դեռ հանրակրթական դպրոցի միջին դասարաններում, հիմնականում՝ «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի դասավանդմամբ: Անշուշտ, անհրաժեշտ է նաև բազմաթիվ միջառարկայական կապերի գործարկում[3]: Իսկ դա նշա-

---

* Հեղինակն ունի շուրջ 30 տարվա մանկավարժական ստաժ, այդ թվում՝ 14 տարվա այս մասնագիտությամբ, մասնակցել է բազմաթիվ վերապատրաստման դասընթացների, «Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժություններին՝ որպես վաշտի հրամանատար, պարգևատրվել է պատվոգրերով ու թանկարժեք նվերներով:

[1] Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի դասախոսությունը Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում» (24.10.2017) (http://www.president.am/hy/statements-and-messages/item/2017/10/24/president-serzh-sargsyans-lecture-at-NDRU/):

[2] Տես «ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՀՀ ԶՈՒ-ի երիտասարդ սպաների համաբանակային առաջին համաժողովում» (Երևան, 2011 թ. հուլիսի 9): «ՀԲ», 2011, հմ. 1–2:

[3] Տես *В. А. Кутепов*. Начальная военная подготовка учащихся средних общеобразовательных школ Западной Сибири. Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук. Тюмень, 2011 (http://cheloveknauka.com/nachalnaya-voennaya-podgotovka-uchaschihsya-srednih-obscheobrazovatelnyh-shkol-zapadnoy-sibiri):

նակում է, որ դպրոցը պետք է կատարի այնպիսի գործառույթ, որն ուրվագծել է ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը. «Ազգ–բանակը այն դպրոցն ու զորամասն է, որ միմյանց տրամաբանական շարունակությունն են, որտեղ ուսուցիչը, ծնողն ու հրամանատարը միասին են աշխատում վաղվա սերնդի դաստիարակության ուղղությամբ»[4]:

Մեր պետությունը մեծ ուշադրություն է դարձնում ՆԶՊ առարկայի դասավանդմանը: Դրա մակարդակի բարձրացման ուղղությամբ կատարվում է մեծ աշխատանք: Սակայն դրանով հանդերձ մասնագետներից շատերն այն կարծիքին են, որ, առանձին բացառություններով, ՆԶՊ արդյունավետությունը մեր հանրապետությունում դեռ բավարար չէ[5]: Դրա պատճառները հասկանալու համար նպատակահարմար է վերլուծել ԽՍՀՄ-ում ՆԶՊ առարկայի դասավանդման փորձը, որովհետև ներկայիս դժվարությունները հիմնականում պայմանավորված են այդ շրջանում ձևավորված պատկերացումների ու մոտեցումների ազդեցությամբ: Իսկ ուսուցման արդյունավետ կազմակերպման տեսակետից անհրաժեշտ է ուսումնասիրել առաջավոր միջազգային փորձը, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում կիրառվող մոտեցումները:

ՆԶՊ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

ԽՍՀՄ դպրոցներում նախնական և մինչզորակոչային զինվորական պատրաստումը («ռազմական գործի հիմունքներ») ներդրվել է 1939 թ.՝ համաձայն համընդհանուր զինապարտության մասին օրենքի: Հավանաբար հետպատերազմյան շրջանում երիտասարդության ռազմահայրենասիրական ոգու բարձր մակարդակը ԽՍՀՄ ղեկավարներին մտածել է տվել, թե դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության համար առանձին առարկան ավելորդ է, և 1962 թ. հունվարի 25-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդի (կառավարության) որոշմամբ դպրոցների ուսումնական ծրագրերից մինչզորակոչային զինվորական պատրաստումը՝ որպես ծախսատար և ոչ արդյունավետ ձեռնարկում, հանվել է, իսկ ռազմահայրենասիրական դաստիարակությունը ներառվել է արտադասարանական աշխատանքների համակարգում:

Սակայն դրանով զինծառայությանը զորակոչիկների պատրաստության մակարդակը խիստ ընկավ, և 1967 թ. հոկտեմբերի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն իր ընդունած «Համընդհանուր զինապարտության մասին օրենքով» վերականգնել է դպրոցներում ՆԶՊ առարկայի դասավանդումը[6]:
1980 թ. սեպտեմբերի 11-ին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը ընդունել է

[4] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը պաշտպանության նախարարին կից կոլեգիայի նիստում» (29.10.2016): «ՀԲ», 2016, հմ. 4:

[5] Տես *Ա. Հակոբյան*, Նախնական զինվորական պատրաստության համակարգի զարգացման հարցեր: «Հայ զինվոր», 2013 թ., հմ. 1-3, նաև՝ *Ա. Աղեկյան*, «Նախնական զինվորական պատրաստություն». խնդիրներ, սպասումներ, իրականություն: «Հայ զինվոր», 2014, հմ. 25-27:

[6] Տես *В. А. Кутепов*. Начальная военная подготовка молодежи в общеобразовательных школах Западной Сибири (1968–1991 годы): опыт и проблемы. «Вестник Челябинского государственного университета». 2010. № 30 (211). История. Вып. 42, сс. 53–63. (https://cyberleninka.ru/article/v/nachalnaya-voennaya-podgotovka-molodezhi-v-obsche obrazovatelnyh-shkolah-zapadnoy-sibiri-1968-1991-gody-opyt-i-problemy):

որոշում «Երիտասարդության նախնական զինվորական պատրաստման մասին», որով ՆԶՊ առարկայի դասավանդման ընդհանուր ղեկավարումն ու դրա նկատմամբ հսկողությունը հանձնարարվել է պաշտպանության նախարարությանը, իսկ ուսումնամեթոդական ղեկավարումը և ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ ԽՍՀՄ լուսավորության նախարարությանը:

1990 թ. հունիսի 12-ին ԽՍՀՄ պաշտպանության նախարարն ու ժողովրդական կրթության պետական կոմիտեի նախագահը ստորագրել են «Պատանիների-սովորողների մինչզորակոչային պատրաստման բարելավման մասին» համատեղ հրաման, որով զինվորական պատրաստումը «նախնականի» փոխարեն վերանվանվել է «մինչզորակոչային», իսկ ուսումնական հաստատություններին տրվել է առարկայի դասավանդման հարցում մեծ ինքնուրույնություն, թեև ֆինանսավորման աղբյուրները չեն հստակեցվել: 1991 թվականից դպրոցներում ՆԶՊ դասավանդումը գործնականում դադարեցվել է[7]:

Հետխորհրդային տարածքում ստեղծված անկախ հանրապետություններից յուրաքանչյուրը ՆԶՊ դասավանդման հարցը լուծում է յուրովի: Օրինակ՝ Ռուսաստանում 1992 թ. այն սահմանադրորեն արգելվել է, հետո ներառվել «Կենսագործունեության անվտանգության հիմունքներ» առարկայում, իսկ վերջերս տարբեր մակարդակների պետական պաշտոնյաներ իրենց հրապարակային հայտարարություններում անհրաժեշտ են համարել դպրոցում վերականգնել առանձին ՆԶՊ առարկայի դասավանդումը: Ղազախստանում ՆԶՊ դասավանդումը փորձել են դնել լուրջ հիմքերի վրա, սակայն 2014 թ. ռազմագիտության դասարաններից մեկում մահվան ելքով տեղի ունեցած դժբախտ պատահարից հետո, այնտեղ ևս առարկայի դասավանդման նպատակահարմարությունը դրվել է հարցականի տակ[8]:

Ամփոփելով ԽՍՀՄ-ում ՆԶՊ դասավանդման փորձը՝ կարող ենք նշել որոշ դրական ու բացասական կողմերը: Դրականն այն է, որ ՆԶՊ դասավանդումը նպաստել է՝ ԶՈՒ-ի շարքերի համալրմանը ռազմական գործի հիմունքներին ծանոթ, կարգապահ, ֆիզիկապես ամուր զորակոչիկներով, ռազմական ուսուցում անցած քաղաքացիների մեծ ռեզերվի ստեղծմանը, երիտասարդության ռազմամասնագիտական կողմնորոշմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանն ու բանակ–հասարակություն կապի ամրապնդմանը, դպրոցներում կարգապահության և պատերազմ անցած ավագ սերնդի նկատմամբ հարգանքի ամրապնդմանը[9]:

Միևնույն ժամանակ, ՆԶՊ դասավանդմանը հատուկ էին հետևյալ թերությունները՝ զինղեկների մեթոդական ու տեսական պատրաստականության ցածր մակարդակը, նրանց մեծ կադրային հոսունությունը, շատ դպրոց-

[7] Տես նույն տեղում:

[8] Տես, օրինակ, «Возвращение в школы НВП», «www.svoboda.org», 23.02.2005 (https://www.svoboda.org/a/126679.html); «Нужны ли уроки НВП в школах?», «www.kapital.kz», 18.11.2014 (https://kapital.kz/gosudarstvo/35150/nuzhny-li-uroki-nvp-v-shkolah.html):

[9] Տես *В. А. Кутепов*. Начальная военная подготовка учащихся средних общеобразовательных школ Западной Сибири.

ներում ՆԶՊ ուսումնանյութական բազա (ռազմագիտության դասարաններ, ուսումնական զենքի պահպանման սենյակներ, արգելագոտիներ և այլն) չլինելը, պետական կառավարման համակարգի օղակների չհամաձայնեցված գործունեության հետևանքով ՆԶՊ-ի վերաբերյալ Կառավարության որոշումների (մասնավորապես՝ դպրոցների կառուցման ու վերակառուցման ժամանակ ՆԶՊ ուսումնանյութական բազայի տարրեր նախատեսելու մասին) թերի կատարումը կամ չկատարումը, երիտասարդների ռազմամասնագիտական կողմնորոշման գծով աշխատանքների անբավարարությունը, օրենսդրական բացթողումները (օրինակ՝ ՆԶՊ ուսումնանյութական բազայի ստեղծման ու պահպանման համար պատասխանատվության բաշխումը, օրենսդրական ակտերի կատարման մեխանիզմների ոչ հստակությունը)[10]:

Նշված թերությունները, այս կամ այն չափով կերպափոխված լինելով, հատուկ են նաև ՀՀ-ում ՆԶՊ դասավանդման ներկայիս համակարգին[11]:

ՆԶՊ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ

ԱՄՆ-ի դպրոցներում ՆԶՊ դասավանդումը մտցվել է 1916 թ. պաշտպանության մասին օրենքով *(National Defense Act).* ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ուսումնական հաստատություններում ներդրվել է «Պահեստազորի կրտսեր սպաների պատրաստման ծրագիրը» (ՊԿՍՊԾ) *(U.S. Army Junior Reserve Officers' Training Corps (JROTC))*: 1964 թ. Կոնգրեսն արդիականացրել է այն: Այսօր ՊԿՍՊ ծրագիրը, որն ընդգրկում է տարեկան ավելի քան 310000 աշակերտի (կադետի) և աշխարհում համանման ծրագրերից ամենամասշտաբայինն է, նախատեսված է «երիտասարդների մեջ ավելի լավ քաղաքացիներ դառնալու շարժառիթ խթանելու» համար[*]: Ծրագրի ուսումնական խնդիրներից են առաջավարության, թիմային աշխատանքի հմտությունների ուսուցանումը, բնավորության, անձնական պատասխանատվության, կատարողականության և պետությանը ծառայելու պատրաստակամության դաստիարակությունը[12]: Ու թեև ՊԿՍՊԾ-ին մասնակցությունը կամավոր է, սակայն դրանց մասնակցելու համար սովորաբար մեծ մրցույթ է լինում. 2000 դիմորդ՝ 140-150 տեղի: Դասընթացների նշանակալիության վկայությունն է այն փաստը, որ ԱՄՆ-ի բանակի գեներալների 40 %-ն իր ծառայությունն սկսել է որպես ՊԿՍՊԾ դասընթացի ունկնդիր[13]:

Ծրագրի իրագործման համար պատասխանատու է պաշտպանության նախարարությունը, որտեղ այդ նպատակով գործում են հատուկ վարչություն-

[10] Տես նույն տեղում:

[11] Տես, օրինակ, *Ա. Հակոբյան*, Նշ. աշխ., *Ա. Աղեկյան*, Նշ. աշխ.:

[*] Ծրագրի մասնակիցների համար մշակված են բարոյական կարգախոսներ՝ «Ես բանակի ՊԿՍՊԾ կադետ եմ», «Ես Ամերիկայի Միացյալ Նահանգների ապագան եմ», «Ես չեմ ստում, խաբում կամ գողանում և իմ արարքների համար միշտ հաշվետու եմ լինելու», «Ես միշտ ապրելու եմ որպես լավ քաղաքացի և հայրենասեր», «Ես ջանասիրաբար աշխատելու եմ կատարելագործել իմ միտքն ու ուժեղացնել մարմինս» և այլն» (տես "Official U. S. Army Junior Reserve Officers Training Corps" (https://www.usarmyjrotc.com/)):

[12] Տես "Offical U. S. Army Junior Reserve Officers Training Corps":

[13] Տես *Ե. Գոլովչենկո*, նշ. աշխ.:

ներ: Ընդսմին ԶՈՒ-ի յուրաքանչյուր տեսակ ունի «իր» դպրոցները: 2012 թ. ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունը ՊՍԿՊ ծրագրի համար հատկացրել է շուրջ 400 մլն դոլար[14]: Պաշտպանության նախարարության պարտականությունն է ՊԿՍՊԾ դասընթացներն ապահովել ուսումնանյութական բազայով, զենքով և զինվորական համազգեստով, որի կրումը պարապմունքների ժամանակ աշակերտների համար պարտադիր է:

Ծրագրի երկու ամենակարևոր սուբյեկտներն են կադետները (ուսանողները) և շուրջ 4000 հրահանգիչներ: Հրահանգիչները հիմնականում պրոֆեսիոնալ զինվորականներ են, որոնք 20 տարվա զինծառայությունից հետո զորացրվել են[15]: Նրանք ունեն համացանցի միջոցով հեռակա ուսման և վերապատրաստման հնարավորություն: Հրահանգիչ աշխատելու ընթացքում նրանք, բացի զինվորական թոշակից, դպրոցից ստանում են զինծառայողի աշխատավարձի և զինվորական թոշակի տարբերությունը:

Այն դպրոցները, որտեղ իրագործվում է ՊԿՍՊ ծրագիրը, մյուս դպրոցներին գերազանցում են հաճախության, առաջադիմության, կարգապահության, հեռացումների և միջին գնահատականի ցուցանիշներով[16]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարծում ենք, որ բերված փաստերը պահանջում են վերանայել ՀՀ-ում ՆԶՊ-ի նկատմամբ կիրառվող մոտեցումները: Օրինակ՝ զանգվածային դասավանդումը դրա բարձր մակարդակի ապահովմամբ, ինչը կապված է մեծ ծախսերի հետ: Եթե նույնիսկ ԱՄՆ-ի նման հարուստ պետությունը չի անցել անխտիր բոլոր դպրոցներում ՊԿՍՊԾ դասընթացի կազմակերպման համակարգին, վկայում է, որ դա այնքան էլ արդյունավետ ճանապարհ չէ:

ՀՀ-ում ՆԶՊ լիարժեք ուսումնանյութական բազայով բոլոր (շուրջ 1450[17]) հանրակրթական դպրոցների ապահովումը թերևս անլուծելի ֆինանսական խնդիր է: Սակայն ԽՍՀՄ ղեկավարությունը 1984 թ. գտավ մի լուծում[18], որը, կարծում ենք, հնարավոր է կիրառել նաև ՀՀ-ում: Խոսքը ՆԶՊ օրինակելի ուսումնանյութական բազայով (նաև արդիական թվային տեխնոլոգիաների վրա հիմնված ուսումնական սարքավորանքով) հագեցված հենակետային դպրոցներում (ՀՀ յուրաքանչյուր մարզում՝ մեկ կամ երկու) կենտրոնացված դասավանդման մասին է (աշակերտների փոխադրումը կարող է ապահովել

[14] Տես *Е. Головченко*. В школе об армии. «Красная звезда», 02.11.2012 (http://www.redstar.ru/index.php/component/k2/item/5623-v-shkole-ob-armii): *նաև՝ С. Климов*. Подготовка американской молодёжи к военной службе. «Зарубежное военное обозрение», 2016, N7 (http://pentagonus.ru/publ/podgotovka_amerikanskoj_molodjozhi_k_voennoj_sluzhbe_2016/19-1-0-2714):

[15] Տես “Official U. S. Army Junior Reserve Officers Training Corps”:

[16] Տես նույն տեղում:

[17] Տես «Հայաստանի հանրակրթական դպրոցների թիվը», «www.1in.am», 14.08.2011 (http://www.1in.am/30015.html):

[18] Տես *В. А. Кутепов*. Начальная военная подготовка учащихся средних общеобразовательных школ Западной Сибири. Диссертация:

ՊՆ-ն): Եթե այդ հենակետային դպրոցները կառուցվեն զորամասերի հարևանությամբ, հնարավոր կլինի կազմակերպել նաև դպրոցականների հաճախակի հանդիպումներ զինծառայողների հետ և այցելություններ զորամաս: Այդպիսի դպրոցների ստեղծումը հնարավորություն կտա իրագործելու նաև ՆԶՊ և ֆիզկուլտուրայի ինտեգրված դասավանդման գաղափարը[19]:

Կարևոր խնդիր է զինղեկների որակավորման մակարդակի բարձրացումը: Կարծում ենք՝ նախընտրելի է ամերիկյան տարբերակը. ՆԶՊ դասավանդումը վստահել առնվազն 20 տարվա ծառայության փորձ ունեցող պրոֆեսիոնալ կադրերի՝ ապահովելով նրանց վերապատրաստումը և մանկավարժության տարրերի ուսուցումը: Սրա նախապայմանն է զորացրված զինվորականներին շահագրգռելու նպատակով զինղեկների (արդեն՝ խիստ սահմանափակ թվով) սոցիալական խնդիրների լուծումը, առաջին հերթին՝ բարձր աշխատավարձով և բնակարանով ապահովումը: Ինչ վերաբերում է նրանց վերապատրաստմանը, ապա ևս ուսանելի է ամերիկյան փորձը, ըստ որի՝ ՊԿՍՊԾ պաշտոնական կայքէջում հրահանգիչների համար տեղադրվում են ուսումնամեթոդական նյութեր: Ըստ այդմ առաջարկում ենք ՀՀ-ում ստեղծել ՆԶՊ դասավանդման վերաբերյալ կայքէջ, որտեղ կտեղադրվեն ինչպես զինղեկների համար ուսումնաօժանդակ, այնպես էլ առարկայի նկատմամբ աշակերտների հետաքրքրության մեծացմանը նպաստող նյութեր:

Կարևոր հարցերից են ՆԶՊ դասավանդման արդյունավետության գնահատման համակարգի մշակումը, ՆԶՊ վերաբերյալ օրենսդրության լրամշակումը, պետական կառավարման մարմինների գործակցության գործուն մեխանիզմների ստեղծումը և պատասխանատվության ոլորտների հստակեցումը:

Ընդօրինակման արժանի է ամերիկյան համակարգի նաև այն սկզբունքը, ըստ որի՝ ՆԶՊ պարապմունքներին մասնակցող դպրոցականները պետք է լինեն զինվորական համազգեստով (սա ևս ֆինանսական խնդիր է):

Դպրոցների հետ վետերանական կազմակերպությունների համագործակցության խթանման համար կարևոր է պետական աջակցությունը: Մասնավորապես՝ կարելի է կազմակերպել դպրոցականների մասնակցությամբ տարեց և հաշմանդամ վետերանների խնամքը:

Այսպիսով՝ ՆԶՊ մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է լուծել երեք խմբի պրոբլեմներ. ա) զինղեկների մասնագիտական բարձր մակարդակի ապահովում, բ) ՆԶՊ լիարժեք ուսումնանյութական բազայի ստեղծում, գ) ՆԶՊ դասավանդման հետ կապված հարցերում պետական կառավարման մարմինների արդյունավետ համագործակցության ապահովում:

Այս խնդիրների լուծման գործում առանցքային դեր ունի ՀՀ պաշտպանության նախարարությունը:

[19] Տես *А. В. Герасев*. Интеграция средств начальной военной подготовки и физической культуры при обучении старшеклассников. Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук. Тула, 2007 (http://www.dissercat.com/content/integratsiya-sredstv-nachalnoi-voennoi-podgotovki-i-fizicheskoi-kultury-pri-obuchenii-starsh#ixzz56WPFZQim):

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

«ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2017 թ. հոկտեմբերի 24–նոյեմբերի 18

ՀՀ Նախագահ, Զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանի դասախոսությունը դասընթացի մեկնարկն ազդարարող նիստում.

ձախից աջ՝ ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյան, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ գեներալ-լեյտենանտ Հայկ Քոթանջյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Դրվագներ դասընթացներից

ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Ա. Զաքարյանը
և ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ գեներալ-լեյտենանտ Հայկ Քոթանջյանը
հավաստագրեր են հանձնում դասընթացի մասնակիցներին

Ամփոփիչ լուսանկար

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПОВЫШЕНИЯ УРОВНЯ «НАЧАЛЬНОЙ ВОЕННОЙ ПОДГОТОВКИ» В КОНТЕКСТЕ МОДЕРНИЗАЦИИ ВС РА

С. Т. ЧАХАЛЯН, лейтенант запаса, учитель начальной военной подготовки в старшей школе № 8 имени Саят-Новы г. Алаверди

РЕЗЮМЕ

Анализ опыта начальной и допризывной военной подготовки в советских школах, а также реализации “Программы подготовки младших офицеров запаса” (JRTOC) в школах США позволяет выработать ряд предложений по пересмотру принципов преподавания НВП в РА. В частности, предлагается централизованное преподавание НВП в опорных школах с полной учебно-методической базой НВП, интегрированное преподавание НВП и физкультуры, создание системы оценки эффективности преподавания НВП, совершенствование законодательной базы в данной сфере и др.

Повышение уровня преподавания НВП в школах предполагает решение трех групп проблем с ключевой ролью Министерства обороны РА: а) обеспечение высокого профессионального уровня военруков; б) создание полноценной учебно-материальной базы НВП; в) обеспечение эффективного сотрудничества органов государственного управления в вопросах, связанных с преподаванием НВП.

SOME ISSUES OF INCREASING THE LEVEL OF "BASIC MILITARY TRAINING" IN THE CONTEXT OF THE RA ARMED FORCES MODERNIZATION

S. T. CHAKHALYAN, Lieutenant (ret.), Teacher of Basic Military Training, Sayat Nova High School N 8, Alaverdi

SUMMARY

The analysis of the experience of basic and pre-conscription military training in Soviet schools, as well as of the implementation of the "Junior Reserve Officer’s Training Program" (JRTOC) in US schools, makes it possible to draw up a number of recommendations for revewing the principles of teaching BMT in the Republic of Amenia. A number of recommendations, in particular, are included in this article: to carry out centralized BMT teaching in basic schools with its full teaching and methodological base; to implement integrated BMT teaching and physical training; to create a system for assessing the efficiency of teaching BMT; to improve the legislative base in this sphere, etc.

The increase of the BMT teaching level in schools presumes the solution of three groups of problems with the key role of the RA Ministry of Defense: a) ensuring high professional level of military instructors; b) creating a full educational and material base for the BMT; c) ensuring efficient cooperation of public administration bodies in BMT teaching-related issues.

ՀՀ ԶՈՒ-Ի ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ս. Ն. ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ, դոցենտ, ՀՀ վաստակավոր լրագրող, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականից մեր ԶՈՒ-ի համար սկսվում է զարգացման նոր՝ յոթնամյա, փուլաշրջան, ինչի շնորհիվ մենք պետք է ունենանք շարունակաբար կատարելագործվող պետության մշտապես արդիականացող բանակ[1]: Ըստ էության, ԶՈՒ-ի արդիականացումը կատարվելու է «Ազգ–բանակ» հայեցակարգի ներդրման հունում, իսկ վերջինիս հաջողության կարևոր նախապայմանը հասարակության մեջ բանակի մասին ճշգրիտ պատկերացումների ձևավորումն է՝ պրոբլեմների հստակ ու գրագետ ձևակերպմամբ և մասնագիտորեն ճիշտ ու անաչառ վերլուծությամբ: Դրա շնորհիվ վերհանվում են ռազմական կառավարման համակարգի թերություններն ու նախադրյալներ են ստեղծվում դրանց վերացման համար, այսինքն՝ մեծանում է կառավարման արդյունավետությունը: Այս առումով հույժ կարևոր է զինվորական ժուռնալիստիկայի դերը, քանի որ նա է այդ տեղեկատվական կապի ապահովման առավել կարևոր գործիքներից մեկը: Ուստի ԶՈՒ-ի արդիականացումը նոր պահանջներ է ներկայացնում հայկական զինվորական ժուռնալիստիկային ու նրա զարգացմանը, որի որոշ ուղենիշներ կքննարկենք ստորև:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՐԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՐԸ

Ընդունված տեսակետի համաձայն՝ զինվորական ժուռնալիստիկան սկզբնավորվել է 1853–1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ, երբ իռլանդացիներ Վիլյամ Հովարդ Ռասելն ու էդվին Լոուրենս Գոդկինն սկսեցին, համապատասխանաբար, լոնդոնյան «Թայմս» և «Լոնդոն դեյլի նյուս» թերթերի համար ռազմադաշտից գրել թղթակցություններ[2]:

---

[1] Տես «Նախագահ Սերժ Սարգսյանի դասախոսությունը Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում», 24.10.2017 (http://www.president.am/hy/statements-and-messages/item/2017/10/24/president-serzh-sargsyans-lecture-at-NDRU/):

[2] Տես *P. Knightley*. The first casualty: the war correspondent as hero, propagandist and mythmaker from Crimea to Iraq. London, 2003: Մեջբերվում է ըստ *Gillian Steward*. A Novel Approach to War Journalism, Annual Meeting of the Canadian Political Science Association at the University of Calgary, June 1, 2016, P. 16 (https://cpsa-acsp.ca/documents/

Ռուսաստանում զինվորական ժուռնալիստիկան սկզբնավորվել է 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին[3]: Միխայիլ Գազենկամպֆը, որը պատերազմից առաջ Ռուսաստանի Գլխավոր շտաբի ակադեմիայի ռազմական վարչության ամբիոնի դասախոս էր և հատուկ հանձնարարությամբ ուղարկվել էր գործող բանակ, բացարձակապես անթույլատրելի է համարել գրաքննությունը և դրա փոխարեն առաջարկել է, նախ, արգելել թղթակիցներին հաղորդել ռազմական գաղտնիք պարունակող տեղեկություններ, երկրորդ՝ մամուլի հրապարակումների մշտազննմամբ վերահսկել, թե ինչպես են նրանք կատարում ռազմական գաղտնիքի պահպանման հանձն առած պարտավորությունը[4]:

Հայկական զինվորական ժուռնալիստիկան ծնունդ է առել դեռ 1920 թ.՝ «Ռազմիկ» թերթի հրապարակմամբ[5]: Սակայն այն, ինչպես և այդ տարիների զգալի թվով այլ երևույթներ ու գործընթացներ, ըստ էության, միայն ուրվագծվել է:

Խորհրդային տարիներին հայկական թերթերն ու հանդեսները լուսաբանել են Կարմիր բանակի զորամասերի ու ստորաբաժանումների, այդ թվում՝ ազգային կազմավորումների, կենսագործունեությունը, պրոբլեմներն ու ձեռքբերումները: 1921–1938 թթ. Երևանում լույս է տեսել «Կարմիր զինվոր» թերթը, որը եղել է ՀԽՍՀ Կարմիր բանակի քաղբաժնի, այնուհետև՝ 76-րդ լեռնահրաձգային Կարմիր դրոշի հայկական դիվիզիայի օրգան[6]: Հայրենական մեծ պատերազմի տարիներին և հետո՝ 1942–1956 թթ., նույն անվանմամբ թերթ է ունեցել նաև 89-րդ հայկական Թամանյան հրաձգային դիվիզիան[7]: «Կարմիր զինվորը» լուսաբանել է զինվորների մարտական պատրաստումը, պատերազմի տարիներին հրապարակել նյութեր ռազմաճակատում տիրող իրավիճակի, մարտերի մասին, ծանոթացրել հայ ռազմիկների սխրանքին: 1941–1945 թթ. հրատարակվել են նաև այլ հայկական ռազմաճակատային թերթեր, ընդամենը՝ 16 անուն: Այդ թերթերի նպատակն էր զինվորներին դաստիարակել հայրենասիրական ոգով, նպաստել նրանց մարտական պատրաստության մակարդակի բարձրացմանը[8]:

1991 թ. Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո հայկական զինվորական ժուռնալիստիկայի զարգացման խթան դարձավ Արցախյան պա-

conference/2016/Steward.pdf): Տես նաև՝ *Stuart Allan, Karen Fowler-Watt.* Journalism: new Challenges, Bournemouth University. Centre for Journalism and Communication Research, 2013 (http://eprints.bournemouth.ac.uk/23354/1/Future%20Challenges%20v6.pdf):

[3] Տես «Современная российская военная журналистика: опыт, проблемы, перспективы». М.: 2002 (ներբեռնումը՝ https://www.icrc.org/rus/resources/documents/misc/69ubyt.htm հասցեից):

[4] Տես նույն տեղում:

[5] Տես *Մ. Լ. Կարապետյան,* Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորումը (1918–1920 թթ.): «ՀԲ», 1995, հմ. 5–6:

[6] Տես Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Ե., 1983, էջ 587:

[7] Տես Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Ե., 1980, էջ 174–175:

[8] Տես նույն տեղում:

տերազմը: Մեծ թվով ժուռնալիստներ, լուսանկարիչներ, օպերատորներ մասնակցեցին պատերազմին և իրենց ռեպորտաժներում լուսաբանեցին այն: 1992 թ. ՀՀ պաշտպանության նախարարության կազմում ստեղծվեց մամուլի ծառայություն, որն այնուհետև վերակազմավորվեց՝ վերանվանվելով լրատվության և քարոզչության վարչություն[9]: Դրա կազմում ստեղծվեց «Զինուժ» հեռուստաթերթիրը: Նույն թվականին հիմնադրվեց ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» թերթը[10]: ՊՆ լրատվամիջոցները դարձան այն դարբնոցը, որտեղ կոփվում էին հայկական զինվորական ժուռնալիստիկայի կադրերը:

Այսօր «զինվորական ժուռնալիստիկա» հասկացության միասնական սահմանում չկա: Հատկապես խորհրդային ժամանակաշրջանի և հետխորհրդային ռուսական աղբյուրներում այդ հասկացությունը գործածվում է նեղ իմաստով՝ որպես բանակային (ռազմագերատեսչական) պարբերական հրատարակությունների համակարգ (ԶՈՒ-ի թերթեր և ամսագրեր), այսինքն՝ սահմանման մեջ շեշտը դրվում է հրատարակության գերատեսչական պատկանելության վրա[11]: Մեկ այլ սահմանման հիմքում դրված է զինվորական ժուռնալիստի՝ որպես զինծառայողի կարգավիճակը («զինվորական համազգեստով» ժուռնալիստիկա)[12]: Ըստ երրորդ, հիմնականում՝ անգլալեզու, հետազոտողների կարծիքի՝ զինվորական ժուռնալիստիկան հակադրվում է «խաղաղության» ժուռնալիստիկային, այսինքն՝ սահմանման հիմքում դրվում է ժուռնալիստի մտադրությունը՝ ընթերցողին հակելու հակամարտության ուժային (ռազմական) կամ բանակցային (խաղաղ) լուծման[13]:

Կա նաև այլ մոտեցում, որի հիմքում ռազմական թեմատիկայի առկայությունն է: Մենք, ընդհանրացնելով Ա. Մարտիրոսյանի և այլ հեղինակների մոտեցումը[14], զինվորական ժուռնալիստիկան հասկանում ենք լայն իմաստով՝ որպես ոչ միայն ռազմական գերատեսչություններին պատկանող և ռազմական թեմատիկայով մասնագիտացած պարբերականների, այլև հասարակական-քաղաքական զանգվածային լրատվության միջոցների ժուռնալիստների այնպիսի գործունեություն, որն ուղղված է պատերազմների և զինված հակամարտությունների, ինչպես պատերազմական, այնպես էլ խաղաղ

[9] Տես *Կ. Ս. Իսրայելյան*, ՀՀ ՊՆ Լրատվության և քարոզչության վարչությունը՝ 10 տարեկան: «ՀԲ», 2003, հմ. 2:

[10] Տես *Մ. Խ. Հրաչյան*, Հայոց բանակի թերթը: «ՀԲ», 2003, հմ. 2:

[11] Տես *А. Э. Мартиросян*. И перья скрипели, когда пушки гремели… (Очерк истории «военной журналистики»: от типографского станка до телеграфа). «Проблемы национальной стратегии», 2012, № 6 (15) (https://riss.ru/images/pdf/journal/2012/6/14_.pdf):

[12] Տես նույն տեղում:

[13] Տես *I. Shaw, J. Lynch, R. Hackett*. Expanding peace journalism: Comparative and critical approaches. Sydney, 2011, 390 p.; *S. T. Lee, C. C. Maslog*. War or Peace Journalism? Asian Newspaper Coverage of Conflicts, «Journal of Communication», 2005, June, Vol. 55, iss. 2, PP. 311–329: Մեջբերվում է ըստ՝ *Ա. Մարտիրոսյան,* Նշ. աշխ.:

[14] Տես, օրինակ, *Կ. Кузьминский*. Очерк развития военной журналистики в России. «Война и мир», 1906, № 7, сс. 114–115, *С. Макартур*. Когда к штыку приравняли перо. Деятельность СМИ по освещению Боснийского кризиса (1992–1995 гг.). М., 2007, с. 2:

պայմաններում ԶՈՒ-ի առօրյա գործունեության, ԶՈՒ-ի բարեփոխումների ու ռազմաարդյունաբերական համալիրի պրոբլեմների լուսաբանմանը:

Այս սահմանումից բխում է, որ զինվորական ժուռնալիստիկան ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման* (ՌԳՏԱ) հիմնական մեխանիզմներից[15] մեկն է: Հիմնականում սրանով է պայմանավորված արդի պատերազմներում զինվորական ժուռնալիստիկայի դերը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՆ

ՌԳՏԱ-ի նպատակը հակառակորդի նկատմամբ **տեղեկատվական գերազանցության** ձեռքբերումն է: Տեղեկատվական գերազանցությունը, ըստ ամերիկյան հետազոտողների, *անընդհատ հոսքով* տեղեկույթի ստացման, մշակման և տարածման հնարավորությունն է այն դեպքում, երբ հակառակորդը զրկված է դրանից[16]: Ըստ այդմ՝ Ադրբեջան–Արցախի Հանրապետություն հակամարտության և Մերձավոր Արևելքում պատերազմի աշխարհագրության ընդլայնման սպառնալիքի պայմաններում կարևոր է հստակեցնել այն պահանջները, որոնք Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հնարավոր պատերազմի դեպքում ներկայացվելու են հայկական զինվորական ժուռնալիստիկային:

Այս առումով կարևոր է հատկապես 2016 թ. Ապրիլյան պատերազմում ՌԳՏԱ-ի վերլուծությունը[17], որը ցույց է տալիս, որ թեպետ հայկական կողմի գործողություններն այդ ոլորտում ընդհանուր առմամբ հաջողվեցին, սակայն տեղեկատվական հոսք (օրական 24 ժամ լուրեր), հետևաբար՝ նաև տեղեկատվական գերազանցություն որպես այդպիսին չապահովվեց, քանի որ ԼՂՀ ՊՆ մամուլի կենտրոնի հաղորդագրությունների միջև դադարները երբեմն հասնում էին 6-7 ժամի այն դեպքում, որ հասարակությունն ամեն րոպե ռազմաճակատից լուր էր սպասում: Անշուշտ, դա ուներ իր օբյեկտիվ պատճառները, սակայն ՌԳՏԱ-ի կատարյալ տարբերակում այդ հաղորդագրությունների միջև դադարը պետք է լցվեր զինվորական ժուռնալիստների թղթակցություններով ու ռեպորտաժներով, որոնց հիմնական թեմաների ցանկը այնքան էլ մեծ չէ. զինված հակամարտության իրական պատճառների պարզա-

* Ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովումը պլանավորված գործողություններ են, որոնք ուղղված են ընտրված տեղեկույթը և ազդեցության ցուցիչները արտաքին լսարանին հաղորդելուն՝ նրա զգացմունքների, շարժառիթների, օբյեկտիվ դատողությունների և ի վերջո՝ օտարերկրյա կառավարությունների, կազմակերպությունների, խմբերի ու անհատների վարքի վրա հոգուտ իր նպատակների ազդելու համար (տես «Military Information Support Operations» (JP 3-13.2), 07 January 2010, Incorporating Change 1, 20 December 2011, P. VII (https://www.pksoi.org/document_repository/Lessons/JP3_13_2_MISO_(20-Dec-2011)-LMS-1255.pdf)):

[15] Տես *Ա. Ն. Անտոնյան, Ա. Կ. Յալանուզյան*, Ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման արդիական սկզբունքները, եղանակները և մեխանիզմները: «ՀԲ», 2016, հմ. 1:

[16] Տես նույն տեղում:

[17] Տես նույն տեղում:

բանում (արտաքին լսարանի համար), հակամարտության մեջ ներքաշված կողմերի ուժերի (ներուժների) համեմատություն (ռազմական գաղտնիքի պահպանմամբ), իրադարձությունների զարգացման միտումների վերլուծություն, հակամարտության լուծման հնարավոր տարբերակների քննարկում, հակամարտության նկատմամբ շահագրգիռ դերակատարների (պետությունների) պաշտոնական դիրքորոշումների ներկայացում, յուրայինների մարտական ոգին բարձրացնող տեղեկույթի ներկայացում, հակառակորդի ապատեղեկատվության դեմ պայքար[18]:

Անշուշտ, այս թեմաների լուսաբանման ուղղությամբ կատարվեց մեծ աշխատանք, սակայն Ապրիլյան պատերազմը ցույց տվեց, որ ընդհանուր առմամբ հայկական զինվորական ժուռնալիստիկան տեղեկատվական գերազանցություն ապահովելու համար կարիք ունի լրացուցիչ ռեսուրսների:

Այսօր տեղեկատվական հոսքի ստացման, մշակման և տարածման հիմնական գործիքներն են տեղեկատվական տեխնոլոգիաներն ու սոցիալական ցանցերը: Դրանց բուռն զարգացումը նոր պահանջներ է ներկայացնում ժուռնալիստիկային (ժուռնալիստին) ընդհանրապես և զինվորական ժուռնալիստիկային՝ մասնավորապես: Այսօրվա և հատկապես ապագայի ժուռնալիստը (որին որոշ հեղինակներ անվանում են «ցանցային ժուռնալիստ») պետք է կարողանա ինքնուրույն կերպով իրեն խնդիր առաջադրել, պատմություն ստեղծել, այդ պատմությունն սպառողին ներկայացնել տարբեր ձևաչափերով (տեքստ, ռադիոռեպորտաժ, տեսանյութ), խմբագրել (մոնտաժել) իր ստեղծած նյութը, որոշել դրա տարածման ամենաօպտիմալ դաշտը (սոցիալական ցանց, լրատվական կայք, հեռուստառադիոընկերություն), արագ տարածել այդ նյութը (այսինքն՝ ունենալ տեղեկատվական տեխնոլոգիաներից ու բազմազան տեխնիկական միջոցներից օգտվելու հմտություն), հետևել ընթերցողների արձագանքներին, նրանց հետ քննարկել այն (պատրաստ լինել բանավեճի)[19]: Այլ կերպ ասած՝ ապագայի ժուռնալիստի անձից, նրա պրոֆեսիոնալիզմից շատ բան է կախված:

Ժուռնալիստի անհատականությունը որոշիչ է նաև այն պատճառով, որ այսօր աշխարհում նկատելի է լրատվամիջոցների նկատմամբ հասարակական վստահության անկում[*], և միայն լրագրողի հաղորդակցային հմտութ-

[18] Տես, օրինակ, *В. М. Амиров*. Основные задачи анализа в журналистике вооруженных конфликтов. Известия Уральского государственного университета. Сер. 1. Проблемы образования, науки и культуры. 2011. №3 (92) (https://journals.urfu.ru/index.php/Izvestia1/article/view/.../623):

[19] Տես *Василий Гатов*. Будущее журналистики (http://newmedia2016.digital-books.ru/kniga/budushhee-zhurnalistiki/):

[*] Դրան նպաստում է ոչ միայն լրագրողների վատ պատրաստականությունը (ինչը, առաջին հերթին, բացատրվում է ԶԼՄ-ների հսկայական թվով և, համապատասխանաբար, ընտրազատման չափանիշների ճապաղմամբ), անբարեխղճությունը և ժուռնալիստի վարքականոնի ու նորմերի խախտումը, այլև սոցիալական ցանցերում այսպես կոչված «կեղծ լուրերի» *(fake news)* վիրուսանման տարածումը (տես, օրինակ. *James Titcomb, James Carson*. Fake news: What exactly is it – and how can you spot it? (http://www. telegraph.co.uk/technology/0/fake-

յունները, նրա հեղինակությունը կարող են ամրապնդել այդ վստահությունը[20]. այսօր ԶԼՄ-ի նկատմամբ վստահությունն աստիճանաբար կերպափոխվում է ժուռնալիստի նկատմամբ վստահության[21]:

Ասվածից բխում է, որ հնարավոր ռազմական գործողություններում ՌԳՏԱ-ի համար զինվորական ժուռնալիստներին պետք է աճեցնել վաղօրոք: Դեռ խաղաղ պայմաններում նրանք պետք է հասարակության մեջ ձեռք բերեն հեղինակություն որպես տեղեկատվության վստահելի աղբյուրներ, որպեսզի կարողանան իրենց առաքելությունը հաջողությամբ կատարել պատերազմի ժամանակ: Սա ենթադրում է զինվորական ժուռնալիստների պատրաստման հստակ պետական քաղաքականության մշակում և իրագործում՝ պաշտպանության նախարարության և կրթության ու գիտության նախարարության մասնակցությամբ, ԶԼՄ-ների ու հասարակական կազմակերպությունների գործուն աջակցությամբ:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Սկզբունքորեն կա զինվորական ժուռնալիստների պատրաստման երեք ճանապարհ: **Առաջինը** կադրերի պատրաստումն է բուհերում (մասնավորապես՝ «զինվորական ժուռնալիստիկա» մասնագիտությամբ), այնուհետև՝ նրանց ծառայությունը ՀՀ ՊՆ լրատվամիջոցներում: Սա «զինվորական համազգեստով ժուռնալիստիկան» է:

Երկրորդը «ներդրված ժուռնալիստի» *(embedded journalist)* մոդելի կիրառումն է, երբ հասարակական-քաղաքական ԶԼՄ ժուռնալիստը ՊՆ համաձայնությամբ կցվում է զինվորական ստորաբաժանմանը, նրա անձնակազմի հետ մասնակցում մարտական գործողությունների, ապրում զինվորական կյանքով և իր տեսածի, լսածի ու զգացածի հիման վրա ԶԼՄ-ի համար պատրաստում նյութեր: Առաջին անգամ այս մոդելը կիրառեց ԱՄՆ-ը 2003 թ. Իրաք ներխուժման ժամանակ, երբ տարբեր ԶԼՄ-ներից ավելի քան 600 ժուռնալիստներ միացան ամերիկյան զորքին[22]: Կան նաև այս մոդելի քննադատներ, որոնց կարծիքով ներդրված ժուռնալիստներն սկզբունքորեն չեն կարող անաչառ լինել այն պարզ պատճառով, որ զինվորականներն ապա-

news-exactly-has-really-had-influence/); *Renae Merle*. Why fake news is a problem for Wall Street (https://www.washingtonpost.com/news/ business/wp/2017/10/12/why-fake-news-is-a-problem-for-wall-street/?utm_term=.5147c0ef083a); *Алексей Ковалев*. «Фейковые новости»: очередное массовое помешательство, или новая медиареальность (http://www.counter-point.org/7_kovalev/)):

[20] Տես *Евгений Ермолин*. Глобальный кризис доверия и перспективы актуальной журналистики (http://yspu.org/images/a/a1/Ермолин_Е.А._Глобальный_кризис_ доверия _и_перспективы_актуальной_журналистики.pdf):

[21] Տես նույն տեղում:

[22] Տես *Christopher Paul, James J. Kim*. Reporters in the battlefield: the embedded press system in historical context. RAND Corporation, 2004, P. xiii:

հովում են նրանց անվտանգությունը, և հնարավոր չէ քննադատել նրան, ով փրկում է կյանքդ[23]:

Մեր կարծիքով՝ այս քննադատությունը տեղին չէ, քանի որ իրադարձությունների մասին անաչառ կերպով պատմելու՝ ժուռնալիստի պարտավորությունը անհնար է կատարել, եթե նա չունի իր հստակ դիրքորոշումը, հատկապես՝ երբ պատերազմում է իր պետությունը:

Երրորդ ճանապարհը «ներդրված ժուռնալիստի» մոդելի հակադարձն է, երբ զինվորականները (մասնավորապես՝ ԶՈՒ-ում ծառայող զինվորական ժուռնալիստները) «ներդրվում» են քաղաքացիական ԶԼՄ-ների խմբագրություններում: Այդպիսի մի փորձ կատարվեց ԽՍՀՄ-ում. 1989 թ. ապրիլին կոմկուսի կենտրոնական կոմիտեի քարտուղարությունն ընդունեց «Կենտրոնական մամուլում խորհրդային Զինված ուժերի կյանքի ու գործունեության լուսաբանման մասին» որոշում[24]: Դրանով նախատեսվում էր կուսակցական մարմինների և կենտրոնական մամուլի, ռադիոյի ու հեռուստատեսության ղեկավարների համատեղ ջանքերով բարձրացնել «խորհրդային հայրենիքի պաշտպանության», «ԶՈՒ-ի կյանքում կատարվող փոփոխությունների» մասին հրապարակումների մակարդակը:

Որպես որոշման իրագործում՝ խորհրդային ԶԼՄ-ների խմբագրական խորհուրդների համաձայնությամբ ԶՈՒ-ում ծառայող որակավոր զինվորական ժուռնալիստները գործուղվեցին խմբագրությունների տրամադրության տակ՝ «մնալով խորհրդային բանակի և ռազմածովային ուժերի կադրերի կազմում»: Հետագա մի քանի տարիներին նրանք բարեհաջող կատարեցին իրենց առաջադրանքը, սակայն 1990-ականների կեսին ԶԼՄ-ների ազատականացման հետևանքով «խմբագրության տրամադրության տակ գործուղված զինվորական ժուռնալիստների» *(прикомандированные военные журналисты)* հաստատությունն ինքնըստինքյան վերացավ. ԶԼՄ-ներն արդեն պետական չէին, ուստի պետությունը չէր կարող պարտադրել զինվորական ժուռնալիստների հետ համագործակցություն և նրանց նյութերի հրապարակում[25]:

ՀՀ-ում ևս ԶԼՄ-ներն ազատականացած են, այդուհանդերձ, կարծում ենք, «խմբագրության տրամադրության տակ գործուղված զինվորական ժուռնալիստի» գաղափարը պարունակում է ողջամիտ տարր, որը կարելի է իրագործել մեզանում: Այսպես. 2003 թ. հունիսի 16–27-ը Հայաստանում անցկացվեց ՆԱՏՕ-ի «Համատեղ լավագույն ջանք» զորավարժությունը[26], որի վերաբերյալ ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ «Հայ զինվորի» թղթակցի պատրաստած նյութերը հրապարակվեցին նաև ռուսալեզու «Գոլոս Արմենիի» հասարակական-քա-

[23] Տես, օրինակ, *Kylie Tuosto*. The "Grunt Truth" of Embedded Journalism: The New Media/Military Relationship. «Stanford journal of international relations», 2008, Fall/Winter (https://web.stanford.edu/group/sjir/pdf/journalism_real_final_v2.pdf):

[24] Տես «Современная российская военная журналистика»:

[25] Տես նույն տեղում:

[26] Տես *"The main NATO and Partnership for Peace (PfP) land-based exercise, Cooperative Best Effort 2003, is taking place at the Vazgen Sargsian Military Institute in Armenia", 16-27 June*. 16 June, 2003, Last updated: 03 November 2008 21:56 (https://www.nato.int/cps/su/natohq/news_19981.htm?selectedLocale=en):

ղաքական թերթում, ինչը զորավարժության ղեկավարությունը գնահատեց դրականորեն: Այլ կերպ ասած՝ զինծառայող ժուռնալիստների և զինվորականների համապատասխան որակավորման դեպքում միանգամայն հնարավոր է նրանց և քաղաքացիական ԶԼՄ-ների համագործակցությունը: Կարծում ենք, որ ՀՀ ՊՆ-ն կարող է համակարգել այդ գործը՝ նախ, կազմակերպելով զինծառայող ժուռնալիստների և զինվորականների որոշակի խմբերի, օրինակ՝ հրամանատարների՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալների ուսուցումը և խորհրդարկումը, ապա՝ պաշտոնապես արտոնելով և խրախուսելով ԶԼՄ-ների հետ նրանց համագործակցությունը: Մեր հասարակության մեջ միշտ էլ պահանջված է պրոֆեսիոնալ զինվորականի խոսքը, առավել ևս՝ արտակարգ իրավիճակներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայկական զինվորական ժուռնալիստիկայի զարգացման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նա ռազմական գործողությունների տեղեկատվական ապահովման կարևոր մեխանիզմներից է: Բացի այդ, դա ԶՈՒ-ի կառավարման արդյունավետության մեծացման գործուն միջոցներից է: Հայկական զինվորական ժուռնալիստիկան առայժմ չունի տեղեկատվական գերազանցություն ապահովելու համար անհրաժեշտ ռեսուրսներ: Քանի որ ժուռնալիստիկայի զարգացման արդի միտումներն այնպիսին են, որ ԶԼՄ-ի նկատմամբ վստահությունն աստիճանաբար կերպափոխվում է ժուռնալիստի նկատմամբ վստահության, ապա առաջնահերթ կարևորություն է ստանում զինվորական ժուռնալիստների պատրաստման պետական քաղաքականության մշակումը: Հատկապես «Ազգ–բանակ» համակարգի ստեղծման համատեքստում նպատակահարմար է կիրառել կադրերի պատրաստումը բոլոր հնարավոր եղանակներով՝ ինչպես «զինվորական համազգեստով ժուռնալիստիկայի» և «ներդրված ժուռնալիստի», այնպես էլ «խմբագրության տրամադրության տակ գործուղված զինվորականի» մոդելներով:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ВОЕННОЙ ЖУРНАЛИСТИКИ В КОНТЕКСТЕ МОДЕРНИЗАЦИИ ВС РА

С. Н. ШАХСУВАРЯН, полковник запаса, доцент, Заслуженный журналист РА, член Центральной избирательной комиссии РА

РЕЗЮМЕ

Важность целенаправленного развития армянской военной журналистики обусловлена тем, что она является одним из механизмов информационного обеспечения общества представлениями об армии в условиях укрепления связей между ними, а также повышения эффективности управления. В то же время, как показала Апрельская война 2016 года, армянская военная журналистика нуждается в дополнительных ресурсах для обеспечения информационного превосходства над противником.

В настоящее время, когда доверие к СМИ трансформируется в доверие к журналисту, особую актуальность получают разработка и осуществление государственной политики подготовки военных журналистов. Целесообразно подготовку кадров осуществлять путем комплексного использования различных современных методик: в вузах РА с последующим прохождением службы в СМИ МО РА; по американской модели «внедренных журналистов» *(Embedded Journalist);* по советской модели «откомандирования военного журналиста в гражданские СМИ».

SOME ISSUES OF THE DEVELOPMENT OF THE ARMENIAN MILITARY JOURNALISM WITHIN THE CONTEXT OF THE RA ARMED FORCES MODERNIZATION

S. N. SHAHSUVARYAN, Colonel (ret.), Associate Professor, Honoured Journalist of the Republic of Armenia, Member, Central Electoral Commission of the Republic of Armenia

SUMMARY

The importance of the purposeful development of the Armenian military journalism is due to the fact that it is one of the mechanisms for informing the society about the army within the context of strengthening the ties between them, as well as increasing efficient management. At the same time, as the 2016 April War showed, the Armenian military journalism needs additional resources to ensure information superiority over the enemy.

At present, when the confidence in the media is being transformed into the confidence in a journalist, the development and implementation of the state policy of training military journalists are of particular relevance. It is expedient to implement personnel training via the complex use of various modern techniques: in the RA institutes of higher education with the subsequent service in the media of the MOD, RA; on the American model of “Embedded Journalist”; on the Soviet model of “sending a military journalist to the civilian media”.

ԲԱՐՁՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ջ. Ս. ՀԵՌԼԻ, գիտությունների թեկնածու, ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվության և կիբեռտարածության քոլեջ

Հասարակության շրջանում ծագող տեղեկությունների արագ տարածումը դաշնային կառավարության վրա դնում է առանձնակի պատասխանատվություն այն առումով, թե ինչպես է նա կարգավորում իր որոշումների ընդունումը և որքանով պատասխանատու է իր գլխավոր «բաժնետերերի»՝ քաղաքացիների առջև: Տեխնոլոգիաները փոխում են քաղաքացիների, մասնավոր հատվածի և հասարակության մյուս տարրերի սպասելիքներն ու պահանջմունքները այն արագության հետևանքով, որով ներկայումս ծագում են տեղեկությունները: Իրական կամ իրականին մոտ ժամանակում ստացվող արգասիքները, ինչպիսիք են կյանքի որակը, մրցունակությունը և աճող շուկայաբաժինը, այն իրողություններն են, որոնց վրա կարող են զգալի չափով ազդել գործակալության կարողությունները՝ ինչպես մշակելու և վարելու քաղաքականություն, այնպես էլ արձագանքելու այն մարդկանց մտահոգություններին ու կարծիքներին, որոնց իրենք ծառայում են:

Այժմ արդեն կռահողականությունը, գործին չառնչվող փորձը և ներքին ձայնը բավարար չեն լինի դաշնային կառավարության այն ավագ պաշտոնյաներին, որոնց պատասխանատվության ոլորտում է ընտրազանգվածի համար երկարատև, իսկ երբեմն նաև ծանր հետևանքներ ունեցող կարևոր որոշումների ընդունումը: Քանի որ ներկայիս հասարակությունը վերածվում է մի հասարակության, որն ավելի մեծ չափով է ղեկավարվում տվյալներով, ապա բարձր ղեկավարության պատասխանատվությունը պետք է սահմանվի այնպես, որ ապահովված լինի ընտրազանգվածի պահանջների ու նրա երաշխիքների կատարման համար գործակալությունների անհրաժեշտ հաշվետվողականության ու ռեսուրսների հստակ որոշումը: Սույն հոդվածում խոսքը ՏՀՏ գծով ղեկավարների մասին է, այն պաշտոնյաների, որոնք ունեն տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական կառավարման հետ առնչվելու բազմամյա պատմություն, ինչը նրանց օժտում է մի յուրահատուկ հմտությամբ՝ վերահսկելու կառավարական մարմինների անցումը ամբողջ կազմակերպությունում տվյալների օգտագործման ավելի տեղեկութակենտրոն *(information-oriented)* մշակույթի:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվողական տեխնիկայի և տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում վերջին տասնամյակներում նկատվող առաջընթացի շնորհիվ զգալիորեն աճել է տվյալների ու տեղեկույթի հետ կատարվող գործողութ-

յունների արագությունը: Քաղաքացիների ու հասարակության այլ անդամների նոր պահանջմունքները և ակնկալիքները՝ պայմանավորված իրական կամ իրականին մոտ ժամանակում տեղեկույթը տարածելու և փոխանակելու ցանկությամբ, հանգեցնում են խաղի կանոնների էական փոփոխման: Դաշնային կառավարության բարձր ղեկավարության առաջավարները, ներառյալ՝ քարտուղարները, կառավարիչները, ՏՀՏ գծով ղեկավարները, ֆինանսական ծառայությունների ղեկավարները և գլխավոր օպերատիվ ղեկավարները, պատասխանատու են գործակալությունների կազմակերպական ու գործունեական ուղղորդման համար և այժմ պետք է կարճ ժամկետներում կայացնեն կարևոր որոշումներ, որոնք կարող են ունենալ զգալի և երկարատև ազդեցություններ: Այս առաջավարները նաև պատասխանատու են ընտրազանգվածին իրենց առաքելություններից բխող ծառայություններն արագորեն և անընդհատորեն մատուցելու համար:

Առանցքային որոշումներ կայացնող պաշտոնյաները անցյալում հաճախ հենվել են իրենց կռահողականության ու փորձի վրա, ինչը որոշակի իրավիճակներում իրեն արդարացրել է: Սակայն, երբ գոյություն ունեն իրական կամ իրականին մոտ ժամանակում տեղի ունեցող իրադարձություններ, ինչպիսիք են կիբեռհարձակումները, և ազդեցությունների ու հետևանքների տեսակետից իրոք համընդհանուր տնտեսություն, որոշումների ընդունման գործում ավելի մեծ չափով տվյալներով առաջնորդվելուն անցումը կարող է լինել մի ուղի, որը տանում է դեպի շահագրգիռ խավերի պահանջմունքների բավարարման առումով ավելի լավ կառավարում: Առանձին դեպքերում առաջավարները որոշումներ կայացնելիս հենվել են իրենց փորձի վրա, որը տվյալ իրողության հետ ոչ մի կապ չունի, քանի որ շատերի համար լուծում պահանջող հարցերի մեծ մասը, եթե ոչ բոլորը, նորույթ է: Ըստ այդմ մի շարք իրավիճակներ զգալի չափով նրանց անծանոթ են: Տվյալ պարագայում հեղինակն իր պարտքն է համարում նշել, որ բնավ մտադիր չէ նսեմացնելու կռահողականության և փորձի նշանակությունը, քանի որ դրանք լավ ծառայություն են մատուցել այս երկրին նրա պատմության ընթացքում ձեռնարկված բախտորոշ արշավներում և ստեղծված բարդ իրավիճակներում: Այնուամենայնիվ, այն արագությունը, որով պետք է այժմ ընդունվեն որոշումները, ինչպես նաև շահագրգիռ կողմերի վրա այդ որոշումների ազդեցությունը պահանջում են ավելի մեծ զգուշություն և շրջահայեցություն, քանի որ ներկայումս խաղադրույքները շատ ավելի մեծ են:

Հոդվածի սկզբում ներկայացնենք, թե վերջերս որքան լայն տարածում է ստացել տվյալների վերլուծությունը՝ արժանանալով ավելի ու ավելի մեծ ուշադրության: Ապա քննարկենք այն հարցը, թե դաշնային կառավարությունում ինչ նոր պաշտոններ պետք է ստեղծել, թե տվյալների գծով ինչ մասնագետներ են անհրաժեշտ, որպեսզի զբաղվեն տվյալների նոր չափումներով: Քանի որ դերերը և պահանջմունքները փոփոխվում են, այնուհետև կդիտարկենք նաև բարձր ղեկավարության առանցքային պաշտոնյաների որոշ պարտականությունների փոփոխության հարցը: Դրանից հետո կքննարկենք այն

գործոնները, որոնք կարող են ազդել տվյալների վերլուծության կիրառման վրա: Դրանից կհետևեն դատողություններ այն մասին, թե ինչպես բարձր ղեկավարության պաշտոնյան պետք է ամբողջ կազմակերպության մասշտաբով ուղղորդի և վերահսկի տվյալների վերլուծությունը: Վերջում կխոսենք այն մասին, որ պատմության և պահանջների տեսանկյունից հենց ՏՀՏ գծով ղեկավարը պետք է լինի բարձր ղեկավարության տվյալ առանցքային պաշտոնյան:

ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԸ

Տվյալների վերլուծությունը, շնորհիվ էության մեջ խորը թափանցելու հնարավորության ստեղծման, տվյալ նոր ուղղությամբ դաշնային գործակալությունների գործադրած ջանքերի շարժիչ ուժն է, որը առավել տեղեկացված ղեկավարներին օժտում է «ավելի լավ որոշումներ» կայացնելու կարողությամբ: Ավելի ստույգ ասած՝ դաշնային կառավարությունում տվյալների վերլուծությունը և դրա օգտագործումը նոր չեն: Մի շարք գործակալություններ որոշ ժամանակ կիրառել են տվյալների վերլուծությունը: Օրինակ՝ Օբամայի պաշտոնավարության ժամանակ, երբ առևտրի դեպարտամենտի տվյալների գծով առաջին պաշտոնական ղեկավարը Իան Քալինն էր, դեպարտամենտն արժանացավ գովասանքի այն բանի համար, որ ներգրավեց մի փորձառու անձնավորության, որն ունակ էր ղեկավարելու տվյալների կառավարական ծրագիրը: Քալինն ուներ բացառիկ հմտություններ, բոլորին ներշնչում էր լավատեսական տրամադրություններ, որովհետև իրոք գիտակցում էր տվյալների, տեղեկույթի ու գրադարանների միասնականացման անհրաժեշտությունը և այդ գաղափարի նվիրյալն էր՝ ձգտելով էապես փոխելու իրադրությունը:

2015 թ. փետրվարի 18-ին ԴՁ Փատիլը հայտարարվեց որպես Օբամայի վարչակազմում դաշնային կառավարության՝ տվյալների գծով գլխավոր գիտնական, քանի որ նա ևս ներդրել էր իր բացառիկ փորձը, որը ձեռք էր բերել՝ աշխատելով տվյալների բնագավառի այնպիսի հաստատություններում, ինչպիսիք են «ֆեյսբուկը» *(Facebook)*, «Սկայպը» *(Skype)*, «Փեյփալը» *(PayPal)*, «Իբեյը» *(eBay),* իսկ վերջում՝ տվյալների մտավոր մշակման «Ռիլեյտ ԱյՔյու» *(Relate IQ)* ընկերությունում:

Փատիլն զբաղեցրեց Սպիտակ տան գիտության և տեխնիկայի վարչության՝ տվյալների մշակման ոլորտի քաղաքականության գծով փոխտնօրենի պաշտոնը: Փատիլի նշանակումը կարևորվում էր այն բանով, որ փորձ էր արվում վարչության կամ ստորաբաժանման սահմաններում կենտրոնացված տվյալների վերլուծությունը վերածել ամբողջ կազմակերպության կամ ձեռնարկության գործառույթի: Տվյալների վերլուծությունը սովորական երևույթ է ՏՀՏ, ֆինանսական կամ նյութական ապահովման վարչություններում: Այդուհանդերձ, ընդհանուր միտումը եղել է ոչ թե տվյալների տարածումն ու շրջանառումը ամբողջ կազմակերպության մասշտաբով, այլ սահմանափակումը կոնկրետ նախագծերի կամ ծրագրերի շրջանակում (*Huffine,* 2015):

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ

Ինչպես ցույց է տալիս ԴՋ Փատիլի նշանակումը, առաջարկություն եղավ ներգրավելու մի մասնագետի, որը հաջողությամբ գործ կունենար ընթացիկ և մշտապես աճող ծավալներով տվյալների հետ: Ծավալների տվյալ աճումը պայմանավորված է Իրերի ներցանցի շարունակական զարգացմամբ և մեր կյանքի բոլոր ոլորտներ ներթափանցմամբ, ինչպես նաև շարժունակ սարքերի շարունակական տարածմամբ ու կատարելագործմամբ: Վերլուծությունների գծով ղեկավարների պաշտոնն ստեղծվել է որպես արձագանք տվյալների և կազմակերպությունում ավելի իրազեկ ու ճկուն որոշումների ընդունման գործում ավագ ղեկավարներին օգնելու դրանց ներուժի ցայտունորեն արտահայտված կարևորության: Տվյալների ծավալների բուռն աճման հետևանքով առաջ է եկել տվյալների հավաքմամբ, պահպանմամբ ու կառավարմամբ զբաղվող՝ տվյալների գծով ղեկավարի պաշտոն ստեղծելու անհրաժեշտություն: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ կազմակերպության իրական արժեքը պայմանավորված է ոչ թե ենթակառուցվածքով, այլ այն ռազմավարական տվյալներով, որոնք վերլուծելի, հասկանալի և կիրառելի են ամբողջ կազմակերպությունում: Սա է բոլոր տվյալների արժեքը գիտակցելու լավագույն ուղին:

Կարող է պահանջվել տվյալների գծով ղեկավարից ավելի բարձր ղեկավարի պաշտոնի ստեղծում, և այդ նպատակով քննարկվել է վերլուծությունների գծով ղեկավարի հարցը, մի ղեկավարի, որն ավելի լավ է պատրաստված տվյալների վերլուծության միջոցով իրական արժեք ստեղծելուն և կազմակերպական մշակույթը մեկ այլ՝ ավելի շատ տվյալներով կառավարման մշակույթով փոխարինելուն: Վերլուծությունների գծով ղեկավարը բարձր ղեկավարության մակարդակի պաշտոնյա է, որը կարող է օգտագործել Տվյալների մեծ ենթակառուցվածքը՝ տվյալների զորությունը ենթարկելով որոշում կայացնող առանցքային պաշտոնյաներին և ամբողջ կազմակերպության համար մշակելով կառավարելի պրակտիկա, որով տվյալները փոխակերպվեն այնպես, որ ապահովվի ավելի իրազեկ ընտրության հնարավորություն (*Bien,* 2014):

Վերջին երեք-չորս տասնամյակներում կազմակերպությունները իրենց պահանջմունքների աճման ու զարգացման հետևանքով ընդլայնել են բարձր ղեկավարության դերը: Ֆինանսական ծառայության պետի կարևորությունն ավելի է մեծացել, քանի որ կառավարական մարմինները ձգտում էին սահմանելու ստանդարտներ, կանոններ ու կանոնակարգեր, որպեսզի կազմակերպությունում ավելի լավ ապահովվեն հաշվետվողականությունն ու ֆինանսական կառավարման և առնչվող համակարգերի համատեղելիությունը: Քանի որ կազմակերպությունները բռնել են ավելի ու ավելի մեծ չափով ռիսկերի կառավարման ուղին, անհրաժեշտ է ունենալ ռիսկերի գծով ղեկավար, կամ ռիսկերի կառավարման գծով ղեկավար, կամ ռիսկերի կառավարման գծով ծառայող: Նրան հանձնարարվում է գնահատել և մեղմացնել ձեռնարկության առաքելությանը, գործունեությանը և այլ գերակայություններ-

րին սպառնացող ռիսկերը: Տվյալ ռիսկերը հիմնականում երևան են գալիս անվտանգության, ֆինանսների, ՏՀՏ և գործառությունների պես ոլորտներում տեղի ունեցող գործընթացների ու տեխնոլոգիաների հետևանքով առաջացած սպառնալիքների ձևով (*Brown, Curt, Willmott,* 2013):

Տվյալների վերլուծության նկատմամբ վերահսկողության դերը ներկայումս բանավեճի առարկա է այն կապակցությամբ, թե դաշնային կառավարությունում բարձր ղեկավարության մակարդակի ո՞ր պաշտոնյան է դրա համար պատասխանատու կամ պետք է լինի պատասխանատու: Կարելի է ենթադրել, որ տվյալ դերն իր պաշտոնի բնույթով պետք է ստանձնի ՏՀՏ գծով ղեկավարը: Թվում է, թե դա ճիշտ ընտրություն է, եթե հաշվի առնենք դաշնային կառավարությունում տեղեկատվության համար ՏՀՏ ղեկավարի պատասխանատվությունները: Ոմանք, սակայն, կարծում են, թե պատասխանատու պետք է լինի ֆինանսական ծառայության պետը, որովհետև հենց բարձր մակարդակի պաշտոնյան պետք է մեծապես շահագրգռված լինի գործակալությունները, կազմակերպությունները պատմական հոլովույթից գերժամանակակից տեսածիր փոխադրելու մեջ: Ֆինանսական ծառայությունների ղեկավարները՝ որպես բարձր ղեկավարության մակարդակի «ճիշտ» պաշտոնյաներ, առաջ են քաշվում շնորհիվ իրենց վերլուծական ըմբռնողականության և ռազմավարական ու օպերատիվ մակարդակի մտածելակերպի (*Kambil,* 2013):

ԳՈՐԾՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԽԱԹԱՐԵԼ ՀԱՁՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես կարող ենք տեսնել, կան բազմաթիվ հնարավոր որոշումներ, որոնք կարող են ուղղորդվել արգասիքի վրա ազդող մի շարք գործոններով ու փոփոխակներով: Այս գործոններից են՝ կազմակերպության մշակույթը, համապատասխան ռեսուրսները, ծախսերը, ղեկավարումը և պարտավորությունը: Ոմանց կարծիքով՝ այն, որ չկա տվյալների վերլուծության վրա լիովին խարսխված ղեկավարում, կարող է տվյալների հաջող օգտագործման համար ստեղծել իրական ռիսկեր: Ինչպես վերը նշվեց, դաշնային կառավարությունում վերլուծությունը նոր միջոց չէ. բավական ժամանակ է, ինչ այն կիրառվում է: Բացի այդ, տվյալների վերլուծության ոլորտում ավանդական գործիքներն ու մոտեցումները, օրինակ, էլեկտրոնային աղյուսակների օգտագործումը, առայժմ գերակայում են գործիքային համալիրների նկատմամբ, որոնք ունակ են օգտագործելու և խթանելու առաջադիմական վերլուծությունը:

Դրա հետ մեկտեղ վարչությունները և ստորաբաժանումները հաճախ տվյալների վերլուծություն են կատարում առանձին վարչությունների համար, ինչպես նաև վարչությունների ու կազմակերպական միավորների միջև բաշխված կոնկրետ ծրագրերի ու նախագծերի շրջանակում: Շատ դեպքերում կառավարման վերին օղակը, ցավոք, լավ չհասկանալով, թե տվյալների շնորհիվ ի՞նչ օգուտների ու ծավալների կարող է հասնել ամբողջ կազմակերպությունը, ի վնաս կազմակերպության բավարար չափով չի օգտագործում սույն հնարավորությունը: Որոշ առումով դա զարմանալի է, քանի որ մի

շարք կազմակերպություններում տվյալները վերլուծելու կարողությամբ օժտված են մի քանի տարբեր վարչություններ, ինչպիսիք են՝ նյութական ապահովման, ֆինանսների, տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների (ՏՀՏ) վարչությունները: Սակայն ընդհանուր առմամբ վարչությունների միջև միավորվածությունը և անգամ երկխոսությունը նվազ են կամ չկան, մինչդեռ դրանք կարող էին նպաստել նմանատիպ պրոբլեմների լուծման համար տարբեր միջոցներ օգտագործող վարչությունների գործունեության համադասվածությանն ու համակարգվածությանը: Կրկին կարևորենք այն փաստը, որ տվյալների վերլուծություն կիրառող վարչությունների միջև համագործակցությունն ու համադասումը ցածր մակարդակի են, ինչի պատճառով ամբողջ ձեռնարկությունն իր առաքելության կատարման գործում չի օգտագործում ունեցած իրական ներուժը:

ՏՆՕՐԻՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Չեն դադարում այն հարցի քննարկումները, թե բարձր ղեկավարության ո՞ր պաշտոնյան պետք է ուղղորդի կամ վերահսկի պետական մարմիններում կատարվող կերպափոխումը: Տվյալներով ու վերլուծությամբ պայմանավորված զորությունն զգալիորեն փոխել է պատկերը: Տվյալներով ընձեռվող հնարավորությունների կորզումը, գործարկումը և վերածումը առաքելության հաջողության կազմակերպությունների առջև դնում են նոր պահանջներ: Օրինակ՝ տեղեկատվական ենթակառուցվածքի և աշխատողների արդեն եղած կամ նոր ձևավորվող հմտությունների զարգացման մեջ ներդրումը և կազմակերպության առկա մշակույթի գնահատումը այն առավել կարևոր պահանջներից են, որոնց կազմակերպությունները պետք է բավարարեն, որպեսզի լիարժեք կերպով օգուտ քաղեն տվյալների վերլուծությամբ ընձեռվող հնարավորություններից: Տարբեր գործակալությունների ու կազմակերպությունների այդպիսի պատասխանատվությունները ակնհայտորեն տարբեր են, ուստի դրանց ընդհանրացման հարցում պետք է լինել շատ զգույշ: Այլ կերպ ասած՝ ոչ մի լուծում «կատարյալ» չէ, եթե ամբողջովին է փոխանցվում մեկ կազմակերպությունից կամ գործակալությունից մյուսին՝ առանց վերջինիս դինամիկայի հաշվառման: Այդուհանդերձ, քանի որ բարձր ղեկավարության պաշտոնյաները ներկայումս պետք է որոշումներ կայացնեն ավելի իրական կամ իրականին մոտ ժամանակում, կազմակերպություններին անհրաժեշտ է գիտակցել, որ տվյալների վերլուծությունը կարող է ապահովել «ավելի իրազեկ» որոշումների ընդունում, և որ դրա համար պետք է լինի պատասխանատու:

Իսկ ո՞վ է «լավագույն» ձևով պատրաստ վերահսկելու կերպափոխումը: Տվյալներով ուղղորդվող որոշումների կայացման գործում առանձին վարչությունների մակարդակից ամբողջ կազմակերպության մասշտաբին անցումը սահմանում են բարձր ղեկավարության օղակի տարբեր մարդիկ՝ դարձյալ կախված կազմակերպության հաստատված առաքելությունից, կառուցվածքից, դերից ու պատասխանատվությունից: Սակայն, հեղինակի կարծիքով, նպատակահարմար է պետական կառավարման մարմիններում

և կազմակերպություններում տվյալներով ղեկավարվող կազմակերպական միավորի գործունեության համար պատասխանատու նշանակել ՏՀՏ գծով ղեկավարին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դաշնային կառավարության կազմակերպությունների մեծ մասում ՏՀՏ գծով ղեկավարները առաջներում (1980-ականների սկզբներ–2000-ականների սկզբներ) եղել են փոփոխության կատալիզատոր: Որոշ կազմակերպություններում պատասխանատվությունը դրվում էր տեխնոլոգիաների գծով ղեկավարի՝ որպես փոփոխությունների առաջատարի վրա: Այդուհանդերձ, 2000-ական թվականների սկզբին անցումային գործընթացը չստացավ ակնկալվող թափը, և տվյալ պարտականությունները որպես գործառույթ կրկին դրվեցին հիմնականում ՏՀՏ գծով ղեկավարների վրա: Ինչպես նշվել է 2014 թ. «ԱյԲիէմ-ի ուղեղային առաջավարները» զեկույցում *(The Data driven Enterprise Requires a New Kind of C-Suite Collaboration, 2014)* ՏՀՏ գծով ղեկավարները արդյունավետ կերպով են արագացրել ամբողջ կազմակերպությունում ձեռնարկված փոփոխությունները: Բացի այդ, նրանք դաշնային կառավարությունում ավելի ու ավելի մեծ չափով են առաջնորդում ջանքերի գործադրումը, որպեսզի տվյալներով ղեկավարվող կազմակերպական որոշումների կայացումը դուրս գա վարչությունների սահմաններից և տարածվի ամբողջ կազմակերպությունով մեկ: Որպես ամբողջ կազմակերպության տեղեկատվական կառավարման ու տեղեկատվական համակարգերի համար պատասխանատուներ՝ նրանք, ըստ ամենայնի, զբաղեցնում են ամենապատշաճ պաշտոնը, որպեսզի լավագույնս գնահատեն ու որոշեն, թե ինչպես պետք է տվյալները հավաքվեն բոլոր գործակալություններից և բոլոր ավագ ղեկավարներից: Դրա հետ մեկտեղ դարձյալ թվում է, թե օգտակար տվյալների որակից անհրաժեշտ ու կարևոր տեղեկույթի կախումը ՏՀՏ գծով ղեկավարներին դարձնում է տվյալներով ղեկավարվող կազմակերպության գործունեության վերահսկման տեսակետից որոշիչ ու պատշաճ դիրքով պաշտոնյա: Սակայն դա չի նշանակում, թե ՏՀՏ գծով ղեկավարները այն միակ առաջավարները կամ բարձր ղեկավարության պաշտոնյաներն են, որոնք պետք է ներգրավված լինեն տվյալ գործում: Հասկանալի է, որ ամբողջ կազմակերպության մասշտաբով ծավալված այս գործունեությունը պահանջում է բարձր ղեկավարության մյուս բոլոր պաշտոնյաների շահագրգռված մասնակցությունը, համագործակցությունն ու աջակցությունը: Եթե մենք պատրաստվում ենք կառավարական մարմիններում եղած մշակույթը վերափոխելու ավելի տեղեկութակենտրոն միտումներով կազմակերպություններին հարիր մշակույթով, ապա այդ գործում պետք է ներգրավված լինեն բոլոր ավագ առաջավարները:

Եվ այսպես. կրկին պնդենք, որ ՏՀՏ գծով ղեկավարներին հատուկ պարտականությունների, դերերի ու պատմության բերումով հենց նրանք պետք է լինեն դաշնային գործակալություններում տվյալների կառավարման և տեղեկատվական գործունեության համար պատասխանատուներ:

C-SUITE OVERSIGHT AND DATA ANALYTICS

J. S. HURLEY, PhD National Defense University College of Information and Cyberspace

ABSTRACT

The explosion of data generated within society has placed unique responsibilities on the federal government in terms of how it manages its decision making and responsiveness to its primary “shareholders” – citizens. Technologies have transformed the expectations and demands of citizens, the private sector, and other elements of society because of the speed with which data is now generated. Real- or near real-time outcomes, such as quality of life, competitiveness, and increased market share are realities that can be significantly impacted by the ability of an agency to develop and implement policies, as well as, respond to concerns and feedback from those that they serve. No longer will intuition, unrelated experiences, and “gut” feelings suffice for senior leaders in the federal government who are responsible for making significant decisions that can have very lasting implications and in some cases dire consequences for constituents. As current society transcends towards a more data-driven society, responsibility within the C-suite must be defined to ensure that accountability and necessary resources are defined in order for agencies to have any chance of meeting constituent demands and its obligations. In this paper, the case is made for the chief information officers, whose long-standing history with information systems and information management makes them uniquely qualified to oversee the transition of government agencies into a more information-oriented culture that uses data across the entire enterprise.

INTRODUCTION

The speed with which data and information can be transacted has been significantly advanced by the progress seen within recent decades in computing and information technologies. New requirements and expectations by citizens and other members of society on the desire to share and exchange information in real-time or near real-time have become huge game-changers. Senior leaders within the federal government C-suite, including: Secretaries, Directors, chief information officers, chief financial officers, and chief operating officers are responsible for the direction and operation of agencies and are now driven to make quick and critical decisions that can have significant and long-lasting impacts. These leaders are also responsible for providing the services to constituents dictated by their missions at an increasingly rapid and unrelenting pace. These key decision makers have often relied upon intuition and experiences in the past that have been quite well serving in terms of addressing certain

situations. However, with the advent of real-time or near real-time events like cyber attacks and an economy that is truly global in terms of impact and ramifications, a transition to a more data-driven approach to decision making could be the path to better government to meet the diverse requirements of stakeholders. On some occasions there has been the use of unrelated experiences by senior leaders in making certain decisions because for many, most if not all of this is new. As such, a number of the current situations represent and convey significant unknowns for them. It is important at this point for the author to declare that it is not the intent to diminish the value of intuition and experience for they have served this country very well through some of its most significant campaigns and challenges over its history. However, the pace at which decisions now have to be made, as well as the impact of those decisions on stakeholders, now require more caution and deliberation because the stakes are much higher. The paper begins with the notion of how data analytics has been ramped up gaining much more attention, recently. Next, is the consideration of new positions and the increasing view of some of the need for data specialists within the federal government to address the new data dimensions. Next, as roles and requirements are evolving, also there is an observation of the change in some of the responsibilities of key C-suite executives. The discussion of factors that can impact how data analytics are used is then considered. Following this is a look at the debate on which C-suite executive should be guiding and overseeing data analytics across the entire enterprise. Lastly, the point is made for the CIO to be that key C-suite official from a historical and requirements perspective.

A MAIN DRIVER

Data analytics has been a main driver in this new direction by federal agencies because of its ability to generate insight that can enable more informed senior leaders to make “better” decisions. Now to be clear, data analytics and its use within the federal government is not new. A number of agencies have been using data analytics for some time. For example, in the Obama Administration, under the guidance of Ian Kalin, the first formal Chief Data Officer for the Department of Commerce, the Department was applauded for bringing in an experienced individual who could lead a government data program. Kalin was uniquely qualified and yielded a great deal of optimism because he actually understood and championed bringing together the concepts of data, information, and libraries to make a real difference. The announcement on February 18, 2015 of DJ Patil as the federal government’s chief data scientist for the Obama Administration was heralded because Patil also brought unique experience gained through his work on data at among places such as Facebook, Skype, PayPal, eBay, and his most recent position at Relate IQ, a data intelligence company. Patil

joined the White House Office of Science and Technology Policy as Deputy Chief Technology Officer for Data Policy. Patil's appointment was indeed significant in that it sought to extend the focus of data analytics beyond the departmental or unit focus to the entire organization or enterprise. It is not unusual for data analytics to be seen within an IT, finance, or logistics department. However, the focus has tended to be more specifically project- or program-focused rather than laid out in a way that enables data to be shared and engaged across the entire enterprise (Huffine, 2015).

SPECIALIZATION

There has also been the suggestion as noted by the appointment of DJ Patil, of the need to bring in a specialist to deal with the current and continued rapid data growth because of the ongoing advancement and integration of the Internet of Things (IoTs) into our lives, as well as the continued growth and evolution of mobile devices. The chief analytics officer (CAO) is a position that has been created to address the pronounced emphasis on data and its potential for helping senior leaders in organization provide more informed and insightful decisions. The explosion of data prompted the position of chief data officer (CDO), who is focused on the collection, storage and management of data. However, it is being noted that the real value to an organization is not in infrastructure but in strategic data that is analyzed, understood, and actionable throughout the enterprise. In this way, the value in all the data can actually be realized. A broader position may be needed over that of the CDO and as a result there has been discussion about a chief analytics officer (CAO), who is better prepared to create real value through data analytics and change the organizational culture to one that is more data-driven. CAOs represent the C-suite level executive who can leverage Big Data infrastructure by moving the power of data into the hands of key decision makers, and designing curated experiences for the entire organization that map data in ways that provide more informed choices (Bien, 2014).

During the last three or four decades, organizations have added new C-suite roles due to the evolving and enhanced requirements of agencies and organizations. The chief financial officer (CFO) became more prominent as government agencies sought to define standards, rules, and regulations to better address accountability and compliance of financial management and related systems within organizations. As organizations move more toward managing risks, there is the emergence of the chief risk officer (CRO), or chief risk management officer, or risk management officer. This person is tasked with assessing and mitigating risk to an enterprise's mission, operations, and other priorities. This risk has primarily appeared in the form of threats via processes and technologies in areas such as security, finance, IT, and operations (Brown, Court, &

and Willmott, 2013). The role of oversight on data analytics has been an ongoing debate in terms of which C-level suite executive within the federal government is or should be responsible. It would appear that by the nature of the position, this role should go to the CIO. It would seem to be a good fit given the CIO's responsibilities on information within the federal government. Some, however, believe that the chief financial officer (CFO) should be the person in charge because a high-level official is needed to secure a high-level commitment to shift agencies/organizations from a historical to a futuristic perspective. CFOs are promoted as "the right" C-level suite official because of their understanding of analytics and view at the strategic and operational levels (Kambil, 2013).

FACTORS THAT CAN IMPEDE SUCCESS

As we can see there are many potential decisions that can be driven by a number of factors and variables that can affect the outcome. These factors include the organization's culture, available resources, costs, leadership and commitment to name a few. There are some who believe that a lack of clear data analytics leadership can create real risks around the successful exploitation of data. As noted above, analytics is not a new capability in the federal government; it has been around for quite some time. Also, traditional tools and approaches, e.g., spreadsheets still dominate data analytics instead of the platforms that are available that utilize and promote advanced analytics. In addition, data analytics is often departmentalized and siloed for specific programs and projects within departments and units. Senior management, who unfortunately often does not truly understand the benefits and extent to which the organization, as a whole, can be enhanced by data often underutilizes the capability to the detriment of the organization. This is somewhat surprising given that in some organizations the data analytics capability resides in several different departments, e.g., logistics, finance, information technology (IT). However, there is generally little to no integration, or even dialogue between the departments to facilitate collaboration and cooperation to address problems in which the departments may be using different tools to solve similar problems. There is again the point that little to no collaboration or corroboration is taking place between departments that are using data analytics which causes the enterprise as a whole to not meet its true potential with regards to its mission.

OWNERSHIP DEBATE

There has been an ongoing debate in terms of which C-suite official should be marshalling or overseeing this transformation within government agencies/departments. The power of data and analytics has significantly altered the landscape. Capturing, implementing, and translating data-related opportunities into mission success are placing new demands on organizations. For example, investing in information infrastructure and

existing or new employee skill sets, and evaluating existing organization culture are among the top requirements that organizations must commit to in order to take full advantage of the benefits that data analytics can offer. These responsibilities obviously differ across agencies and organizations, so one has to be extremely careful in terms of generalizing. In other words, no solution is a “perfect” solution that is completely transferable from one organization or agency to another without considering agency dynamics. However, as C-suite executives are now having to make more real- and near real-time decisions, organizations need the insight that data analytics can provide to make more “informed” decisions and someone needs to be in charge. In this context, who is “best” prepared to oversee the transformation? The movement from departmentalized to enterprise-wide data-driven decision making is being determined by different people within the C-suite – again, depending upon the organization’s mission, structure, and role and responsibility definition. However, the author would like to make the case for the CIO to be designated as the caretaker of the data-driven enterprise activities within government agencies and organizations.

CONCLUSION

CIOs, in most federal government organizations, had been the catalyst for change in the early years (early 1980s – early 2000s). In some organizations, the responsibilities were assigned to the chief technology officers (CTO) as the vanguard of change. However, the transition did not expand as had been expected in the early 2000s and the responsibilities basically were rolled back into the CIOs required activities. CIOs have been instrumental in accelerating change across the enterprise, as noted in 2014 IBM THINKLeaders report (The Data-driven Enterprise Demands a New Kind of C-Suite Collaboration, 2014). Also, they have been increasingly leading efforts within the federal government to extend data-driven business decision making beyond departments and across the entire enterprise. As caretakers of information management and information systems across the organization, they are probably best positioned to evaluate and assess how data must be collected across all of the agencies and from all of the senior leaders. In addition, the reliance of relevant and critical information on good data quality again seems to place the CIOs in a vital and natural position for oversight of data-driven enterprise activities. However, this is not to imply that the CIOs should be the only senior leaders or C-suite executives involved in the process. For it is clear that an enterprise-wide activity requires buy-in, cooperation, and support from all of the other C-suite executives. If we are to change the culture of government agencies to organizations with a more information-oriented perspective, all senior leaders must be involved. However, again, the case is made that because of the natural responsibilities, roles, and history that CIOs should be in charge of driving data and information activities across the federal agencies.

References

F. Bien. Its Time to Welcome the Chief Analytics Officer to the C-Suite. Retrieved from The Future of Work, 28 July 2014 (https://www.fastcompany.com/3033590/ its-time-to-welcome-the-chief-analytics-officer-to-the-c-suite).

B. Brown, D. Court, and P. Willmott. Mobilizing Your C-Suite for Big Data Analytics. New York, 2013.

R. Huffine. Federal Government Sets its Sights on Data. Medford: Information Today. Retrieved from Information Today, February 2015 (http://www.infotoday.com/IT/jul15/ Huffine--Federal-Government-Sets-Its-Sights-on-Data.shtml).

A. Kambil. How CFOs can Own Analytics. New York, 2013.

"The Data-driven Enterprise Demands a New Kind of C-Suite Collaboration". Retrieved from IBM THINKLeaders, 22 August 2014 (https://mail.google.com/mail/u/0/#inbox).

КОНТРОЛЬ СО СТОРОНЫ ВЫСШЕГО РУКОВОДСТВА И АНАЛИЗ ДАННЫХ

Дж. С. ХЕРЛИ, кандидат наук, Колледж информации и киберпространства Национального университета обороны США

РЕЗЮМЕ

Быстрое распространение возникающих в обществе сведений, обусловленное широким внедрением постоянно обновляемых технологий, возлагает на Федеральное правительство США особую ответственность за то, как оно принимает важные решения и насколько ответственно перед своими главными «акционерами»–гражданами. В настоящем, когда высшее руководство должно в кратчайшие сроки принимать важные решения, подчас с продолжительными и тяжелыми последствиями для электората, оно не может, как прежде, опираться на интуицию, не относящийся к делу опыт и внутренний голос. В данном случае наилучшим подспорьем является анализ данных, который позволяет глубже вникать в суть явлений и процессов, в связи с чем и способствует принятию «более компетентных» решений.

В современных условиях истинная цена организации определяется не наличествующими инфраструктурами, а теми стратегическими данными, которые анализируются, воспринимаются и используются в масштабах всей организации, что позволяет им стать более информационно-центричными. Вследствие быстрого роста объемов данных возникает необходимость создания должности руководителя по обработке данных или руководителя по анализу данных, занимающегося сбором, хранением и управлением данными. При этом эффективное использование данных возможно лишь в случае высокого уровня сотрудничества и координации между управлениями, осуществляющими анализ данных, в связи с чем принятие решений на основе данных должно осуществляться не на уровне отдельных управлений, а по всему масштабу организации.

ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՕԴԱԾՈՎԱՅԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԻՐԱՔՅԱՆ (2003) ԵՎ ՍԻՐԻԱԿԱՆ (2015–2017) ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ Պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար

Երկրորդ համաշխարհային պատերազմը և դրանից հետո տեղի ունեցած այլ պատերազմներ հիմնականում չորրորդ սերնդի պատերազմներ էին: Զինված պայքարի սկզբունքորեն նոր միջոցների ստեղծումը և համապատասխան ռազմավարության ու մարտավարության մշակումը ազդարարեցին նոր՝ հինգերորդ, սերնդի պատերազմի հայեցակարգի հասունացման փաստը: Տվյալ հայեցակարգի ձևավորումը ոչ միայն թռիչքային գիտատեխնիկական առաջընթացի, այլև նոր քաղաքական, տնտեսական ու սոցիալական զարգացումների ու դրանց համապատասխան նոր ռազմաքաղաքական նպատակադրումների հետևանք էր:

Հինգերորդ սերնդի պատերազմներում որոշիչ դարձան տեղեկույթի կիրառման կարողությունները, այդ թվում՝ տեղեկատվական ազդեցությունը: «Ինդուստրիալ դարաշրջանին» բնորոշ «կայանքակենտրոն պատերազմին» *(Platform-Centric Warfare),* որը վարում էին մեծաթիվ ցամաքային զորքերը, փոխարինելու եկավ «ցանցակենտրոն պատերազմը» *(Network-Centric Warfare)*, որի հայեցակարգը «տեղեկութային դարաշրջանում» առաջարկեցին ԱՄՆ-ի դեր-ծովակալ Սեբրովսկին և ՊՆ փորձագետ Գարստկան[1]: Աֆղանստանում Հարվածային ուժերի հրամանատար գնդապետ Թանելը բարձր է գնահատել մարտի դաշտում «ցանցակենտրոն պատերազմի» վարման միջոցների դերը: Նա նշել է, որ դրանք ակտիվացրել են օպերացիաները և զարգացրել «իրավիճակի արագ և արդյունավետ ընկալումը»[2]:

Վերջնականապես գերակայեց ցանկացած հարթության մեջ, աշխարհի ցան-

[1] Տես *David S. Alberts, John J. Garstka, Frederick P. Stein.* Network Centric Warfare: Developing and Leveraging Information Superiority. 2nd Edition (Revised). DoD C4ISR Cooperative Research Program. February 2000 (http://www.dodccrp.org/files/Alberts_NCW.pdf); *А. Е. Кондратьев.* Общая характеристика сетевых архитектур, применяемых при реализации перспективных сетецентрических концепций ведущих зарубежных стран. «Военная мысль», 2008, № 12; *С. Н. Гриняев.* «Сетевая война» по-американски. «Независимое военное обозрение», 15 февраля 2002 г.; *Ա. Հովհաննիսյան,* Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. հեռանկարները: Համառոտ ուսումնասիրություն: Ե., 2017:

[2] Տես *Jonjo Robb.* Modern Militaries and a Network Centric Warfare Approach, 09.01.2014 (http://www.e-ir.info/2014/01/09/modern-militaries-and-a-network-centric-warfare-approach/):

կացած կետում անհրաժեշտ ուժերի կուտակման կարևորության գաղափարը: Հինգերորդ սերնդի պատերազմներում զարգացած ԶՈՒ-երի կիրառած ռազմատեխնիկական ու գիտատեխնիկական նորամուծությունների շնորհիվ փոփոխություններ առաջ եկան ռազմական գիտության ճյուղերում և դրույթներում:

Հինգերորդ սերնդի պատերազմների շրջանում սկսեցին ավելի հաճախ ձեռնարկվել ոչ կանոնավոր գործողություններ: Դրանք իրագործվում են այնպիսի մարտական խմբերի կիրառմամբ, որոնք սակավամարդ են ու տարաշարժուն, ի վիճակի են ինքնուրույնաբար՝ կտրված լինելով գլխավոր ուժերից և առաջնորդվելով օպերացիայի մտահղացմամբ, վարելու երկարատև մարտական գործողություններ, ներառյալ՝ հակառակորդի խոր թիկունքում[3]:

Հինգերորդ սերնդի պատերազմների կարևոր առանձնահատկություններից են նաև օդային գերազանցության հասնելու ձգտումը և օդային հարձակման գերճշգրիտ միջոցների կիրառությունը[4]:

Օդային պատերազմի հայեցակարգն առաջ է քաշել իտալացի գեներալ Ջուլիո Դուեն[5]: Նրա գիտական հետազոտության հիմնական մոտեցումներից մեկն այն էր, որ ուսումնասիրությունը պետք է գլխավորապես տարածվի նոր միջոցների վրա, քանի որ պատերազմի ձևը և ընդհանուր բնույթը պայմանավորված են հենց տեխնիկական միջոցներով: Եվ ըստ այդմ նա հիմնական շեշտը դրել է ավիացիայի վրա՝ նշելով, որ «ապագա պատերազմում կիրառվելու են այն միջոցները, որոնք նախապատրաստվում են ներկայումս, ընդսմին այդ միջոցները կկիրառվեն այն եղանակներով, որոնք ուրվագծվում են մեր օրերում… Հնարավոր չէ նախապատրաստվել պատերազմի՝ առանց ապագան դիտելու, որովհետև պատերազմը լինելու է ապագայում»[6]:

Տվյալ հայեցակարգի կատարելագործված և արդիականացված մեկնակերպը ԱՄՆ-ը հաջողությամբ կիրառել է վերջին շրջանում Սերբիայի, Իրաքի և Աֆղանստանի դեմ՝ հրթիռաավիացիոն հարվածներով շարքից հանելով նրանց ՀՕՊ-ի և մյուս պաշտպանական համակարգերը, քայքայելով ենթակառուցվածքներն ու կառավարման համակարգերը[7]: Իրաքյան պատերազմներում ամերիկյան ԶՈՒ-ն առաջինը լայնորեն կիրառեց խիտ գերճշգրիտ օդային հարվածները՝ ծովային գերակայության պայմաններում նաև ծովա-

[3] Տես *Ա. Հովհաննիսյան*, Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. հեռանկարները, էջ 539–540, *նույնի՝* Հիբրիդային պատերազմների որոշարկման և դասակարգման որոշ հարցեր: «ՀԲ», 2016, հմ. 2:

[4] Տես *Ա. Հովհաննիսյան,* Ռազմարվեստ, հ. 1. «Օդային գերակայություն»: Ե., 2017, էջ 113–119, 152–168:

[5] Տես *Giulio Douhet.* The Command of The Air. Translated by Dino Ferrari. Washington, 1998 (http://www.au.af.mil/au/awc/awcgate/readings/command_of_the_air.pdf):

[6] Բերվում է ըստ՝ *Պ. Вотье*. Военная доктрина генерала Дуэ. М., 1937. «METODOLOG. RU», 26.06.2008 (http://www.metodolog.ru/01429/01429.html):

[7] Տես *В. В. Круглов, М. Е. Сосновский.* О тенденциях развития современной вооруженной борьбы. «Военная мысль», 1998, № 2:

յին հենահարթակների օգտագործմամբ, ինչի շնորհիվ ՑՁ գործողություններն զգալիորեն հեշտացան: Այդ հարվածները լինում էին համակցված՝ հաճախ հասցվելով միաժամանակ օդուժի և ծովուժի հեռահար հրթիռահրետանային միջոցներով: Դրանց արդյունավետության մեծացումը հնարավորություն է տալիս հաճախ ՑՁ-ն կիրառելու ոչ մեծ ուժերով: Սիրիական պատերազմում ռուսաստանյան բանակը ևս որդեգրեց այս մոտեցումը և ցույց տվեց, որ իր օդատիեզերական ուժերը, ծովուժը և հրետանային համալիրները ի վիճակի են վարելու նոր սերնդի պատերազմներ, այն էլ՝ իր պետական սահմաններից մեծ հեռավորության վրա:

2003 թ. մարտի 19-ին Իրաքում սկսվեց 21-րդ դարի առայժմ ամենալայնածավալ դասական պատերազմը: Դաշնադրային ուժերն ունեին հստակ կերպով ձևակերպված ռազմաքաղաքական խնդիր՝ գրավել ամբողջ Իրաքը կամ դրա մեծ մասը, այդ թվում՝ մայրաքաղաքը, և տապալել Հուսեյնի իշխանությունը: Սա հույժ բարդ խնդիր էր:

Ամերիկյան բանակի ղեկավարությամբ դաշնադրային ուժերը ներխուժեցին Իրաքի տարածք: Հուսեյնն սպասում էր այդ ներխուժմանը: Իրաքյան բանակը կազմված էր մոտ 350000-անոց զորքից՝ 24 դիվիզիա և 7 բանակային կորպուս, ուներ մոտավորապես 5000 միավոր զրահատեխնիկա: Մինչդեռ, ավիացիայի և ՀՕՊ-ի հզորությունը նվազ էր. առաջին պատերազմից հետո դրանք տարիների ընթացքում շատ թուլացել ու կազմալուծվել էին: Մայրաքաղաքի հիմնական պաշտպանությունը հանձնված էր նախագահական գվարդիային, որի մարտունակությունը ամենաբարձր մակարդակի էր:

Հիմնվելով նախորդ պատերազմի փորձի վրա՝ Հուսեյնն իր զորքը չէր կենտրոնացրել հակառակորդի հավանական հարձակման ուղղության վրա՝ խուսափելով այն մեկ հզոր օդային հարվածի տակ դնելուց: Իրաքյան բանակը հիմնականում դասավորված էր ըստ կորպուսների՝ երեքական դիվիզիաներով, այսինքն՝ օջախային պաշտպանության սկզբունքով[8], իսկ մայրաքաղաքի պաշտպանությունը հանձնված էր գերազանցապես ամենաբարձր մակարդակի մարտունակություն ունեցող նախագահական գվարդիային: Հուսեյնը համոզված էր, որ ամերիկացիները ևս գործելու են ոչ կանոնավոր գործողությունների սկզբունքներով:

Սակայն Հուսեյնը թույլ էր տվել մեծ սխալներ: Մասնավորապես՝ լիարժեք չէր պաշտպանական բնագծերի, գոտիների ու դիրքերի համակարգի սարքավորումը, թերի էր օպերատիվ (մարտական) ապահովման, հատկապես՝ հետախուզության, օպերատիվ քողարկման, թիկունքային ապահովման, կազմակերպումը:

Ամերիկյան զորքերը միավորվել էին՝ կազմելով 5-րդ բանակային կորպուսը: Մասնակցում էր նաև ծովային հետևակի 1-ին ռազմարշավային դիվիզիան՝

[8] Տես *G. Fontenot, E. J. Degen, D. Tohn.* On Point: The United States Army in Operation Iraqi Freedom. Washington, 2004, PP. 98–100; *R. Greant.* The First 600 Days of Combat. The US Air Force in the Global War on Terrorism, 2004, PP. 130–132:

ուժեղացված մեկ գնդով և այլ ուժերով[9]: Մեծ Բրիտանիան տրամադրել էր մոտ 28000-անոց ցամաքային զորախումբ[10]: Ընդհանուր թվաքանակը մոտ 130-140 հազ. մարդ էր՝ 1600-1700 զրահամիջոցներով:

Օդուժը, ինչպես միշտ, ներկայացված էր մեծ խմբավորմամբ՝ մոտ 1800 թռչող ապարատ, ընդսմին դրանց կեսից ավելին հարվածային մարտավարական ու ռազմավարական ինքնաթիռներն էին: Հեռահար հարվածներ էին հասցվում ինչպես ԱՄՆ-ի տարածքից, այնպես էլ Գուամ կղզուց և Մեծ Բրիտանիայից: Պարսից ծոցում և Միջերկրական ծովում տեղաբաշխվող նավատորմը բաղկացած էր հինգ ավիակրային խմբերից՝ տասնյակ նավերով, որոնցից մի զգալի մասը կարող էր հարված հասցնել թևավոր հրթիռներով (ԹՀ):

Հիմնական ուժերի հարաբերությունը 1:2,3 էր հօգուտ Իրաքի: Սակայն օդում և ծովում դաշնակիցների բացարձակ գերազանցությունը, նրանց տեխնիկական առավելությունը կտրուկ կերպով փոխում էին իրավիճակը:

Հուսեյնը այս անգամ էլ սպասում էր նախքան ցամաքային օպերացիայի սկիզբը երկարատև օդային հարվածի, սակայն դաշնակիցները գործեցին նոր մարտավարությամբ: Նրանք չձեռնարկեցին երկարատև ավիացիոն նախապատրաստություն. արձակվեց ընդամենը չորս տասնյակ ԹՀ, որոնք ուղղվեցին նախապես մանրակրկիտ կերպով ընտրված նշանակետերի: Միաժամանակ լայնածավալ գործողություններ սկսեցին ցամաքային խմբավորումները, հատկապես մեծ դիվերսիոն գործողություններ ձեռնարկեցին հատուկ նախանշանակման ջոկատները: Արդեն երեկոյան ամերիկյան ծովային հետևակի ուժերը ոչ միայն ներխուժել էին Իրաքի տարածք, այլև հսկողության տակ էին վերցրել մի շարք ռազմավարական կետեր[11]:

Բացարձակ օդածովային գերազանցությունը՝ զանգվածեղ ավիահրթիռային հարվածներով հանդերձ, հանգեցրել էր այն բանին, որ դաշնակիցներն իրենց ցամաքային ուժերին հանձնարարել էին անմիտ թվացող խնդիր՝ սակավ ուժերով առանց քողարկվելու դուրս գալ հակառակորդի դեմ: Նրանք պետք է խայթող հարվածներով ու տարաշարժով իրենց վրա գամեին հակառակորդի ուշադրությունը՝ նրան ստիպելով դուրս գալ թաքստոցներից, որոնք, ինչպես նշվեց, վատ էին սարքավորված:

Ամերիկյան ՕՀՄ-ների հարվածներն իրենց խտությամբ ու ճշգրտությամբ անանախադեպ էին: Հարվածներ էին հասցվում 6-7 ժամ անընդմեջ, ընդսմին այդ ընթացքում կատարվում էին ճշգրտումներ և ոչնչացվում նաև դիրքերը փոփոխող նշանակետերը: Այդ հարվածները հասցվում էին ոչ միայն օդային

[9] Տես *K. M. Woods, M. R. Pease, M. E. Stout, W. Murray, J. G. Lacey.* Iraqi Perspectives Project: A View of Operation Iraqi Freedom from Saddam's Senior Leadership, 2006, PP. 136–138; *Գ. Ֆոնտենոտ, Է. Ջ. Դեգեն, Դ. Թոհն,* Նշ. աշխ., էջ 79–81, *A. Gordon.* Marines on the Ground: Operation Iraqi Freedom 1, 2006, PP. 4–6; "Opeations in Iraq. Lessons for the Future". UK Ministry of Defence, 2003, PP. 4–6:

[10] Տես "Opeations in Iraq. Lessons for the Future", PP. 4–6, 83–85:

[11] Տես *Ա. Գորդոն,* Նշ. աշխ., էջ 8–18:

և ծովային մարտակայանքներից, այլև որակապես նոր՝ գերճշգրիտ արկեր արձակող, հրետանիով: Տարաշարժուն պաշտպանությունը ոչինչ չէր տալիս իրաքյան ուժերին, քանի որ վերահսկողությունը շատ բարձր մակարդակի էր:

Դաշնակիցները կատարեցին մոտ 20000 մարտական թռիչք՝ կիրառելով մոտ 20000 միավոր գերճշգրիտ ՕՀՄ և 9000 միավոր սովորական ՕՀՄ[12]: Գերճշգրիտ զենքերի թվում էին նաև մոտ 1000 միավոր ԹՀ-ներ[13]:

Դաշնադրությունը չնչին կորուստներով՝ 170-180 մարդ և մի քանի տասնյակ միավոր տեխնիկա[14], ջախջախիչ պարտության մատնեցին Իրաքին:

Օդածովային և տեխնիկական գերազանցության նշանակությունը քննության առնենք նաև Սիրիական պատերազմի օրինակով: Այստեղ իրավիճակը շեշտակի փոխվեց 2015 թ. սեպտեմբերից հետո, երբ ներգրավվեցին ռուսաստանյան օդատիեզերական ուժերը: Մինչև 2015 թ. սեպտեմբեր Սիրիայում տեղի ունեցող պատերազմում կառավարական ուժերը հիմնականում կրում էին պարտություններ և տարածքներ էին կորցնում: Դրանց հակառակորդը, չունենալով դասական կազմավորումներ, սարքավորված պաշտպանական բնագծեր, իր ոչ կանոնավոր շարժունակ մարտական խմբավորումների շնորհիվ օժտված էր տարաշարժի մեծ հնարավորություններով, ինչն էապես դժվարացնում էր հայտնաբերումն ու խոցումը: Ռուսաստանյան թվակազմը, ձեռնարկելով անհրաժեշտ կուտակումներ, ռազմական գործողություններ վարեց Սիրիայում տեղաբաշխվող Հմեյմիմ և Տարտուս զորակայաններից՝ իր ձեռնարկումները լավագույնս ներդաշնակելով Ասադի բանակի ոչ կանոնավոր գործողությունների հետ: ՌԴ զորքերը, ինչպես և Իրաքում ամերիկյան զորքերը, հաջողության հասնելու համար ունեին մեծ տեխնիկական առավելություն, հատկապես՝ հետախուզահարվածային, ինչպես նաև օդածովային հարվածային միջոցներով:

Սիրիայի տարածքում ռուսաստանյան օդուժն առաջին հարվածները հասցրեց 2015 թ. սեպտեմբերի 30-ին[15]: Առանձնակի ուշադրության է արժանի Կասպից ծովից կատարված հրթիռային համազարկը: Այս ձեռնարկումը օդային հարվածների զանգվածային կիրառման մի նոր օրինակ էր: Այդ օրը արձակվել էին 26 հատ 3Մ14Տ «Կալիբր» թևավոր հրթիռներ, որոնք 1500 կմ հեռավորության վրա ոչնչացրեցին 11 թիրախ[16]: Մեկ ամիս անց՝ 2015 թ. նոյեմբերի 20-ին,

[12] Տես նույն տեղում, էջ 8:

[13] Տես *В. Целуйко*. Война в Ираке. «Чужие войны». Под ред. Р. Пухова. М., 2012, с. 211:

[14] Տես *R. Grant*. The First 600 Days of Combat. The US Air Force in the Global War on Terrorism. Washington, 2007, PP. 1–2; “Operation Iraqi Freedom” (http://icasualties.org/iraq/index.aspx):

[15] Տես “Russia kills US-backed Syrian rebels in second day of air strikes as Iran prepares for ground offensive”. “The Telegraph”, 02.10.2015 (http://www.telegraph.co.uk/news/worldnews/europe/russia/11903702/Russias-Vladimir-Putin-launches-strikes-in-Syria-on-Isil-to-US-anger-live-updates.html):

[16] Տես *А. Кречетников*. Каспийским «Калибром» по Сирии: зачем это было надо? «BBC

Կասպից ծովից դեպի Ռաքքա, Իդլիբ և Հալեպ արձակվեց ևս 18 հրթիռ[17], ապա ձեռնարկվեցին 3–7 հրթիռանոց բազմաթիվ արձակումներ, որոնք, թերևս, փորձնական բնույթի էին:

2015 թ. դեկտեմբերին սիրիական բանակը Լաթաքիայում ռուսաստանյան օդուժի աջակցությամբ ազատագրեց մի շարք բնակավայրեր:

Ռուսաստանյան ավիացիան 2015 թ. կատարել է ընդհանուր առմամբ 5240 մարտական թռիչք, որից 145-ը ռազմավարական հրթիռակիր և հեռահար ռմբակոծիչ ինքնաթիռներով[18]: Այս ինքնաթիռները ռուսաստանյան ավիացիայի պատմության մեջ առաջին անգամ ձեռնարկեցին գերճշգրիտ թևավոր հրթիռների զանգվածային արձակումներ:

2016 թ. ձեռնարկվեց ռուսաստանյան և սիրիական ավիացիաների առաջին համատեղ գործողությունը: Մարտի 7-ից 27-ը ռուսաստանյան ավիացիան Պալմիրայի շրջանում կատարեց 500 մարտական թռիչք, որոնց ընթացքում գրոհայինների դիրքերին հասցրեց 2000-ից ավելի հարված: Եվ մարտի 23-ին սիրիական կառավարական բանակը, ՌԴ ավիացիայի ու հատուկ ջոկատայինների և Հեզբոլլահի մարտիկների աջակցությամբ, ոչ դասական ճակատային հարձակումներով ազատագրեց պատմական Պալմիրան: Հայտնի դարձավ նաև Մի-28 «Գիշերային որսորդ» ուղղաթիռների կիրառման մասին[19]:

Հունիսի 3-ի լույս 4-ի գիշերը սիրիական զորքերը ռուսաստանյան օդուժի աջակցությամբ ազատագրեցին Աբու Ալ-Ալաջ բնակավայրը՝ 2014 թ. հետո առաջին անգամ մտնելով Ռաքքայի նահանգ:

Օգոստոսի 11-ին վեց Տու-22Մ3 հեռագործ ռմբակոծիչներ կենտրոնացված հարվածներ հասցրեցին ԻՊ-ի՝ Ռաքքայից դեպի հարավ-արևելք, հյուսիս և հյուսիս-արևմուտք գտնվող մի շարք օբյեկտների, ինչի հետևանքով ոչնչացվեցին տարատեսակ պահեստներ, մի քիմիական գործարան, ինչպես նաև զինյալների դաշտային ճամբարը: Սեպտեմբերի 11-ին ՕՏՈՒ-ն արդեն հարվածներ հասցրեց Հալեպում ու Դեյր էզ-Զորում գտնվող զինյալների դիրքերին, և Սիրիայի բանակը ազատագրեց Լաթաքիայի մի շարք տարածքներ:

Նոյեմբերի 15-ին Միջերկրական ծովի արևելյան մասում գտնվող «Ադմիրալ Գրիգորովիչ» հածանավը 3 հատ 3Մ14Տ «Կալիբր» ԹՀ-ներով հարվածեց Սիրիայում գտնվող ահաբեկչական խմբավորումներին: Նույն օրը «Բաստիոն» համալիրից «Օնիկս» տեսակի հրթիռներ արձակվեցին Սիրիայում

Русская служба», 08.10.2015 (http://www.bbc.com/russian/russia/2015/10/151008_russia_syria_cruise_missiles_analysis):

[17] Տես «Каспийская флотилия выпустила 18 ракет «Калибр» по ИГ в Сирии. ВИДЕО». «РИА Новости», 20.11.2015 (https://ria.ru/syria_mission/20151120/1325098502.html):

[18] Տես «С начала операции в Сирии российские летчики совершили 5240 вылетов». «интерфакс», 25.12.2015 (http://www.interfax.ru/world/487155):

[19] Տես «Брифинг начальника Главного оперативного управления Генерального штаба ВС РФ генерал-лейтенанта Сергея Рудского», 31.03.2016 (http://syria.mil.ru/news/more.htm?id=12082004@egNews#txt):

գտնվող օբյեկտների ուղղությամբ: Սա համեմատաբար փոքր քանակով թևավոր հրթիռների արձակման դեպք էր: Հաջորդ՝ համեմատաբար մեծ, հարվածը տեղի ունեցավ 2017 թ. հոկտեմբերի 5-ին. արձակվեց 10 հրթիռ[20]:

2016 թ. վերջի դրությամբ ռուսաստանյան ավիացիան կատարել էր 30 հազարից ավելի մարտական թռիչք[21]:

2017 թ. հունվարի 18-ին տեղի ունեցավ Ռուսաստանի և Թուրքիայի օդուժերի առաջին համատեղ գործողությունը էլ-Բաբ քաղաքի արվարձաններում[22]: Հունվարի 18-ին, 21-ին և 26-ին ռուսաստանյան Սու-24Մ և Սու-34 ռազմաճակատային ռմբակոծիչները, Սու-25ՍՄ գրոհային ինքնաթիռները թուրքական Ֆ-16 և Ֆ-4 ինքնաթիռների հետ համատեղ հարվածներ հասցրեցին էլ-Բաբում գտնվող զինյալների դիրքերին[23]: Նույն ժամանակահատվածում Ռուսաստանի ՕՏՈՒ-ն աջակցում էր սիրիական բանակին Դեյր էզ-Զոր քաղաքը ԻՊ-ի զինյալների գրոհից պաշտպանելու գործում[24]:

Փետրվարի 11-ին սիրիական բանակը, ՌԴ օդուժի մասնակցությամբ, ազատագրեց ռազմավարական նշանակությամբ Թադեֆ բնակավայրը:

ՌԴ օդուժն առավել քան ակտիվ գործողություններով աչքի ընկավ 2017 թ. աշնանը՝ սեպտեմբերին և հոկտեմբերի սկզբին Դեյր էզ-Զորում: Սեպտեմբերի 4-ին այս շրջանում ռուսաստանյան ՕՏՈՒ-ի հարվածներից զոհվեցին մի քանի տասնյակ զինյալներ, 4 օր անց՝ ևս 40 գրոհային, այդ թվում՝ 4 դաշտային հրամանատար: Նրանց թվում էին Դեյր էզ-Զորի էմիրը և պատերազմի նախարար Գուլմուրոդ Խալիմովը: Սեպտեմբերի 22-ին ՌԴ ՌԾՈՒ-ի սուզանավից Իդլիբում գտնվող զինյալների ուղղությամբ արձակվեցին 3 «Կալիբր» հրթիռներ[25]: Ռուսաստանյան օդուժի և սիրիական ցամաքային ուժերի համաձայնեցված գործողությունների շնորհիվ ազատագրվեց Եփրատ գետի հյուսիսարևմտյան ափը: Հոկտեմբերի 10-ին ՕՏՈՒ-ն Մեյադին քաղաքի մոտակայքում 2 զույգ Սու-34-ների 14 հարվածներով ոչնչացրեց շուրջ 70 զինյալի:

---

[20] Տես «Военный эксперт: «Калибры» атакуют самые важные объекты террористов в Сирии». «РИА Новости», 05.10.2017 (https://ria.ru/radio_brief/20171005/1506277308.html):

[21] Տես «Военные отчитались за 15 месяцев воздушной кампании в Сирии». «LENTA. RU», 20.12.2016 (https://lenta.ru/news/2016/12/20/syria_airstrike/):

[22] Տես «Военные самолеты нашли общую цель. Россия и Турция приступили к первой совместной операции в Сирии. «Коммерсант.ru», 19.01.2017 (https://www.kommersant.ru/doc/3195700?from=doc_vrez):

[23] Տես «Дружественному огню не дают разгореться. Гибель турецких военных под ударом российских ВКС в Сирии не приведет к охлаждению отношений». «Коммерсант.ru», 10.022017 (https://www.kommersant.ru/doc/3214405?from=doc_vrez):

[24] Տես «В Сирии началась первая совместная воздушная операция военных России и Турции против запрещенной группировки «Исламское государство»». «1 первый канал», 18.01.2017 (https://www.1tv.ru/news/2017-01-18/318067-_sirii_nachalas_pervaya_sovmestnaya_vozdushnaya_operatsiya_voennyh_rossii_i_turtsii_protiv_zapreschennoy_gruppirovki_islamskoe_gosudarstvo):

[25] Տես «Российская подлодка атаковала боевиков, напавших на военную полицию в Хаме». «РИА Новости», 22.09.2017 (https://ria.ru/syria/20170922/1505317570.html):

ՎԵՐՁԱԲԱՆ

Եվ այսպես. դեռ 1980-ական թվականներին ռազմարվեստում տեղ գտած հինգերորդ սերնդի պատերազմը, այլ նորամուծությունների հետ մեկտեղ, հաստատեց օդում գերազանցության հասնելու շնորհիվ ավելի քիչ արյամբ մեծ խնդիրներ լուծելու սկզբունքի իրավացիությունը: Ամերիկյան ռազմական համակարգը տվյալ հայեցակարգը ներառեց իր զինանոցում, իսկ որոշ ժամանակ անց այն դարձավ նաև այլ պետությունների ԶՈՒ-երի գործելաոճը: Դա են ապացուցում Իրաքում ԱՄՆ-ի ԶՈՒ-ի առաջավարությամբ դաշնադրային ուժերի և Սիրիայում ՌԴ ԶՈՒ-ի վարած մարտական գործողությունները, որոնք թեև բնույթով որոշակիորեն տարբեր էին, սակայն մեզ հետաքրքրող օդային գերազանցության հարցին տալիս են միևնույն պատասխանը:

Իրաքյան և Սիրիական պատերազմների վերլուծությունը վկայում է, որ կողմերից մեկի մեծ տեխնիկատեխնոլոգիական, հատկապես՝ հետախուզահարվածային միջոցներով, առավելությունը, նաև օդում և ծովում գերազանցությունը նրան հնարավորություն են տալիս մարտական գործողություններ վարելու անգամ ոչ կանոնավոր, տարաշարժուն խմբավորումների դեմ: Արբանյակային միջոցներով և ԱԹԱ-ներով մշտապես հետախուզելու, շարժուն նշանակետերին ՕՀՄ-ներով, ինչպես նաև հրետանիով գերճշգրիտ հարվածներ հասցնելու հնարավորությունը ապահովում է բացարձակ առավելություն:

Այսպիսով՝ վերջին 2-3 տասնամյակում տեղի ունեցած պատերազմների վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ ավանդական համազորային մարտին գալիս են փոխարինելու էլեկտրոնակրակային հարվածները: Պատերազմում հաջողության հասնելու կարևոր գրավականներից է տեխնոլոգիական նվաճումների հաշվին օդում և ծովում գերազանցության հաստատումը:

ВОЕННЫЕ ИССЛЕДОВАНИЯ

ОБЕСПЕЧЕНИЕ ПОБЕДЫ ПУТЕМ ДОСТИЖЕНИЯ ПРЕВОСХОДСТВА В ВОЗДУХЕ И НА МОРЕ ВО ВРЕМЯ ИРРЕГУЛЯРНЫХ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ НА ПРИМЕРЕ ИРАКСКОЙ (2003) И СИРИЙСКОЙ (2015–2017) ВОЙН

А. К. ОГАНЕСЯН, кандидат исторических наук, Пресс-секретарь Министра обороны РА

РЕЗЮМЕ

Создание принципиально новых средств вооруженной борьбы и обусловленные ими кардинальные изменения в тактике и стратегии привели к возникновению войн 5-го поколения, уже в 1980-х годах пришедшим на смену войнам 4-го поколения.

Войны 5-го поколения, или иррегулярные войны, характеризуются доминирующим значением использования информационных технологий и

электронно-огневого боя, в частности – переходом к сетецентричным войнам, отходом от стратегии массированных наземных операций с прорывом растянутых окопных фронтов в пользу скоротечных точечных диверсионных действий, в том числе – в «тылу» противника (поскольку само понятие тыла в классическом понимании исчезло), и т. д.

Важной особенностью этих войн являются достижение превосходства в воздухе и использование высокоточных средств воздушного нападения. Об этом свидетельствует анализ действий как коалиционных сил во главе с США в Ираке в 2003 г., так и ВКС РФ в Сирии в 2015–2017 гг.

MILITARY STUDIES

ENSURING THE VICTORY BY ACHIEVING AIR AND MARITIME SUPERIORITY DURING IRREGULAR MILITARY OPERATIONS ON THE EXAMPLE OF THE IRAQ (2003) AND SYRIAN (2015–2017) WARS

A. K. HOVHANNISYAN, PhD in History, Press Secretary of the RA Defense Minister

SUMMARY

The creation of fundamentally new means of armed struggle, and the drastic changes in tactics and strategy, conditioned by them, entailed the emergence of fifth-generation wars (5GW), which had already replaced the fourth-generation wars.

The 5th generation wars, or irregular warfares, are characterized by the prevailing significance of the use of information technology and electronic fire fight, in particular – the transition to network-centric warfares; the departure from the strategy of massive ground operations with the breakthrough of extended trench fronts in favor of transient pointed subversive actions, including – in the “rear” of an enemy (since the very concept of “rear” in its classical sense has disappeared), and so on.

Important features of these wars are the achievement of air superiority and the use of high-precision means of air attack. The analysis of the actions of both the coalition forces led by the US in Iraq in 2003, and the Russian Aerospace Forces in Syria in 2015–2017, is an indication of it.

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ. ՈՐՈՇ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ, Ս. Էջմիածնի Մատենադարանի և Հրատարակչական բաժնի տնօրեն

Դեռ հին ժամանակներից մարդկային հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական առաջընթացին զուգահեռաբար զարգանում էր նաև ռազմական ոլորտը: Հին աշխարհի պետական կազմավորումները նոր տարածքներ նվաճելու, ռազմագերիներ ու ռազմաավար վերցնելու և իրենց ազդեցության ոլորտներն ընդլայնելու համար ձեռնարկում էին իրենց հարևանների տարածքների վրա հարձակումներ:

Պատերազմների տեսության մասնագետ Մ. Վոլզերը համարում է, որ հարձակումն այն միակ հանցագործությունն է, որը պետությունը կարող է կատարել մեկ այլ պետության դեմ[1]: Արիստոտելն իր նշանավոր «Պոլիտիկա» աշխատության մեջ գրում է. «պետություններին անխուսափելիորեն հարկ է լինում օգտագործել այնպիսի զինված ուժեր, որոնք պիտանի են ոչ միայն իրենց տարածքի պաշտպանության, այլև դրանից դուրս գտնվող վայրերում գործելու համար: Եթե անգամ որևէ մեկը հավանություն չի տալիս նման կենսակերպին՝ ո՛չ մասնավոր, ո՛չ հասարակական, այդուհանդերձ պետք է թշնամիներին երկյուղ ներշնչել ոչ միայն երկիր նրանց ներխուժելու դեպքում, այլև այն ժամանակ, երբ նրանք հեռու են»[2]:

Մարդկության կյանքում ռազմական գործի կարևորության վկայությունն է հատկապես այն իրողությունը, որ դեռ Հին աշխարհում ստեղծվել են ռազմական ոլորտին վերաբերող բազմաթիվ գրավոր աշխատություններ, օրինակ՝ Չինաստանում Ք. ա. 6–5-րդ և 4-րդ դարերում[3]: Քրիստոնեական աշխարհում պատերազմների հարցը արծարծել են եկեղեցական հայրերից Օգոստինոս Երանելին, Թովմա Աքվինացին և ուրիշներ:

Աներկբա իրողություն է, որ թեև աշխարհն այսօր միանշանակ կերպով տարբերվում է նախորդ դարերից, այդուհանդերձ պետությունները միմյանց միջև ծագող հարցերը շարունակում են լուծել նախորդ դարերում ընդունելություն

[1] Տես *M. Walzer.* Just and unjust wars. A moral argument with historical illustrations. New York, 1977, P. 51:

[2] *Аристотель.* Сочинения в четырех томах, т. 4, «Политика». М., 1983, сс. 415–416.

[3] Տես *Սուն Ցզի,* Ստրատեգիայի արվեստը: Ե., 2013: Գրքում ներառված է նաև Ու Ցզիի «Երկ ռազմական արվեստի մասին» աշխատությունը:

գտած ձևերով՝ զենքի և բռնության միջոցով: Թշնամի պետությունները փորձում են մինչև բացահայտ առճակատման գնալը հակառակորդի մասին հավաքել սպառիչ տեղեկություններ: Թշնամու մասին ճշգրիտ տեղեկությունների ձեռքբերումը և հակառակորդին ու մյուսներին իր մասին ապակողմնորոշիչ ու կեղծ լուրերի հաղորդումը հաճախ ապահովում են պատերազմի հաղթական ավարտը նախքան զենքի դիմելը: Եթե փորձենք ընդհանրացնել մեր ասածը, կարող ենք վստահաբար ասել, որ 21-րդ դարում պատերազմներն ընթանում են նաև տեղեկատվական դաշտում, հատկապես՝ համացանցում: Նշենք, որ Հայաստանի պարագայում Հայաստանի և Արցախի դեմ Թուրքիայի և Ադրբեջանի վարած տեղեկատվական պատերազմում առկա են համամարդկային բարոյական սկզբունքների և արժեքների դեմ կիրառվող գրեթե բոլոր միջոցները[4]:

Կարևորելով տեղեկատվական պատերազմներում հատկապես հոգևոր-գաղափարախոսական բնույթի գործոնները՝ **նպատակադրված ենք ցույց տալու, որ 20–21-րդ դարերում ընդունելություն գտան արդարացի պատերազմ սկսելու այն չափանիշները, որոնք առանց գիտական սահմանումների ու բնորոշումների եղել են հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության և գործողությունների հիմքում**: Այդպիսով նաև ինքնաբերաբար հերքվում են թուրք-ադրբեջանական «գիտական» շրջանների տարածած այն ստահոդ պնդումները, թե, իբր, Հայ Առաքելական Եկեղեցին ահաբեկչական գաղափարներով է սնում հայ հասարակությանը և հովանավորում ահաբեկչական կազմակերպություններին և անհատներին[5]:

Մինչդեռ Հայ Եկեղեցին, երբևէ չհեռանալով քրիստոնեական և համամարդկային բարոյական արժեքներից, մշտապես եղել է ոչ միայն քրիստոնեական հավատքի, այլև Հայրենիքի և ազգի համար պայքարող կառույց: Հենց դա է նրա՝ ազգային նկարագիր ձեռքբերելու բացառիկ իրողությունը:

Այսօր զինվորի, առավել ևս՝ քրիստոնյա զինվորի համար անհրաժեշտություն է իմանալ, թե *ինչի* և *ում* համար է կռվում, արդյոք իր պայքարն արդարացի է, թե ոչ: Հենց այստեղ էլ առաջ է գալիս քրիստոնյաների (և ոչ միայն) մղած պատերազմների, ազատագրական պայքարի «արդարացի» և «սուրբ» լինելը[6]: Ստորև մենք կխոսենք միայն Հայ Առաքելական Եկեղեցու դիրքորոշման մասին: Ընդսմին ինչպես համաշխարհային պատմության մեջ հայ ժողովրդի քաղաքական պատմությունն է առանձնանում իր յուրօրինակությամբ, այնպես էլ Հայ Եկեղեցու պատմությունն է ընթացել իր ուրույն ուղիով[*]:

---

[4] Դրանց մասին հանգամանորեն տես «Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը»: Ե., 2009, էջ 11:

[5] Տես, օրինակ, *Мамед Багиров.* Армянский терроризм в контексте геополитического противостояния великих держав на Ближнем Востоке (http://www.elibrary.az/docs/jurnal/jrn2008_474j.htm); *Камран Иманов*. «Армянский геноцид» или армянский террор? Баку, 2016, сс. 7–8, և այլն:

[6] Տես *Մովսես աբեղա Սարգսյան*, Արդարացի պատերազմի տեսությունը: «Էջմիածին», 2016, Զ, *նույնի*՝ Աստվածաշունչը պատերազմի և զինվորական ծառայության մասին: «ՀԲ», 2015, հմ. 4:

[*] Մաղաքիա արք. Օրմանյանն իր «Հայոց Եկեղեցին» գրքի ֆրանսերենից հայերեն թարգմանութ-

Մյուս բոլոր քրիստոնյա եկեղեցիներից Հայ Եկեղեցին տարբերվում է առաջին հերթին իր բացահայտ ազգային բնույթով և դիմագծով: Այսպես. նշանավոր եկեղեցական գործիչ և մեծ հայագետ Մաղաքիա արք. Օրմանյանն իր «Հայոց Եկեղեցին» ուսումնասիրության թարգմանության առիթով գրում է, որ «Եթէ որևէ ազգի մը կենսականութեան գաղտնիքը թափանցելու համար անհրաժեշտ է անոր կրօնքին ուսումնասիրութիւնն ընել, պէտք է ընդունիլ, թէ այս տեսակ աշխատութիւն մը անօգուտ չէ, մանաւանդ երբ դիտողութեան առնուի, որ Հայոց Եկեղեցին, – որ մեր պարագային մէջ Հայ Ազգութեան հետ ալ նոյնացած է –, նշանաւոր դեր մը ունեցած է ազգային կեանքին մէջ»[7]:

Իրողություն է, որ 301 թվականը հայ ժողովրդի համար ունեցավ շրջադարձային նշանակություն: Մերժելով հեթանոսական կրոնը՝ հայ ժողովուրդն ընդունեց քրիստոնեությունը և ոչ միայն պարզապես ընդունեց, այլև հռչակեց որպես պետական կրոն. «թագաւորն Տրդատ՝ ուխտ զայս դնէր ընդ ամենայն մարդոյ, որ միանգամ ընդ նորա տէրութեամբն էին, ընդ մեծի և ընդ փոքու, զի ամենեցունց հաստատութիւն այն կայցէ առ նա, զի անխորշ և անխէթ աստուածահրաման պատուիրանացն հնազանդեսցին առանց երկմտութեան, և արարչութեանն հաւատալ յամենայն սրտէ: Եւ ամենեցուն հաւանեալ այնմ՝ փութային կատարել վաղվաղակի զհրամանսն»[8]:

Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռքով մկրտվում է նաև հայոց արքունի բանակը. «Եւ յայնմ աւուրս եօթանս որ մկրտեցան յարքունական բանակէ անտի՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ աւելի քան զչորեքարիւր բիւր»[9]:

Այսպիսով՝ 4-րդ դարի սկզբին հայերն առաջինն աշխարհում պետականորեն ընդունել են քրիստոնեությունը, իսկ Ս. Գրիգոր Լուսավորիչը թագավորի, արքունիքի, նախարարների և ժողովրդի ընդհանուր համաձայնությամբ ընտրվել ու կարգվել է Հայոց Կաթողիկոսական աթոռի առաջին գահակալը[*]:

Ս. Գրիգոր Լուսավորիչը լավ գիտակցել է, որ Հայ Եկեղեցին, **հոգեփրկության և ազգապահպանության** իր առաքելությունն առավել արդյունավետ կերպով

յան նախաբանում վկայություններ է բերում նշանավոր եվրոպական քննադատների գրախոսականներից. «այդ գիրքը հիմնապէս կը ճանցնէ, շատ հին եւ շատ սկզբնատիպ եկեղեցի մը, որ պահուած ու զարգացած է ուրիշ եկեղեցիներու ազդեցութենէն դուրս, անոնց գերիշխանութիւնը երբեք, չէ ճանչցած, եւ հաւատարմութեամբ պահպանած է Արեւելեան նախնական քրիստոնէութեան ժառանգութիւնը, ինչպէս որ այն կազմուած էր առաքեալներուն անմիջապէս յաջորդող դարուն մէջ *(Hyacinthe Loyson)*» (տես *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան*, Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը: Կոստանդնուպոլիս, 1911, էջ 5–6):

[7] *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան*, Նշ. աշխ., էջ 20:

[8] «Ազաթանգեղայ պատմութիւն հայոց»: Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի: Ե., 1983, էջ 476:

[9] Նույն տեղում, էջ 464:

[*] Ի տարբերություն այլ քրիստոնյա եկեղեցիների հիմնադիրներից Լուսավորիչն ընտրվել է համաժողովրդական ժողովում (իմա՝ աշխարհաժողովում՝ ազգային եկեղեցական ժողովում):

իրականացնելու համար պետք է հանդես գա որպես Հայոց պետականության և ժողովրդի հետ մեկ միասնական ու կուռ կառույց՝ նպաստելով Հայոց պետության անկախության, ազատության և իր Հայրենիքում հայ ժողովրդի ազատ և անկախ ապրելու սուրբ ու նվիրական գործի հաջողությանը: Այս նպատակով էր, որ Հայ Եկեղեցու նվիրապետական կառույցը և թեմական-վարչական համակարգը ձևավորելիս Ս. Գրիգոր Լուսավորիչն ընտրել է Հայոց պետականության կազմակերպվածքը*: Հետագայում Հայ Եկեղեցին միշտ էլ եղել է ազատ և անկախ Հայոց պետականության զորավիգ, երբեմն նաև՝ երաշխավոր:

Այսպիսով՝ քրիստոնեությունն ընդունելուց հետո ևս Հայոց քաջարի բանակը պետք է շարունակեր պաշտպանել իր երկիրը, հավատը, անկախ պետականությունը և ժողովրդին, բայց միանգամայն նոր ոգով՝ թշնամու անձի նկատմամբ նոր մոտեցմամբ. «Լուարուք ապաքէն զի ասացաւ. Սիրեսցե՛ս զընկեր քո, և ատեսցես զթշնամին քո: Այլ ե՛ս ասեմ ձեզ. Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր. օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր. բարի՛ արարէք ատելեաց ձերոց. և աղո՛թս 'ի վերայ այնոցիկ՝ որ լլկե՛նն զձեզ և հալածեն» (Մատթ. Ե. 43–45)**:

Ցավոք, այս և մի շարք այլ նմանատիպ սուրբգրային վկայություններ տեղիք են տվել այլակարծությունների և թյուրըմբռնումների, որոնք պարզապես սխալ և կամայական, իսկ երբեմն էլ գիտակցված դիտավորություն ունեցող մեկնաբանությունների և սուբյեկտիվ վերաբերմունքի արդյունք են***: Ուստի մեր նպատակն է լուսաբանել Հայ Եկեղեցու դիրքորոշումը, որը պատերազմների, արյունահեղությունների նկատմամբ մշտապես եղել է և է խիստ ու մերժողական. «զի ամենեքեան՝ որ սու՛ր առնուցուն՝ սրո՛վ անկցին» (Մատթ. ԻԶ. 52), ինչը, սակայն, չի նշանակում, թե Հայ Եկեղեցին դեմ է հանուն հավատքի, սրբության և սրբավայրի, մերձավորի կյանքի պաշտպանության, արդարության և ազատության վերականգնման մղված պատերազմներին. «Մի՛ համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սու՛ր» (Մատթ. Ժ. 34):

---

* Տրդատ Գ արքայի ժամանակ Մեծ Հայքը բաժանված էր 30 գավառների, և ըստ այդմ էլ Ս. Գրիգոր Լուսավորիչը կարգում է եպիսկոպոսների 30 «գերագոյն բարձս»:

** Բոլոր աստվածաշնչյան մեջբերումներն արված են ըստ՝ «Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց»: Ըստ ճշգրիտ Թարգմանութեան Նախնեաց մերոց՝ 'ի Հելլենականն Հաւատարմագոյն բնագրէ 'ի Հայկականս բարբառ: Նորոգապէս 'ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ, համեմատութեամբ այլևայլ օրինակաց, հանդերձ կարևոր ծանօթութեամբք բնաբանին: Յաշխատասիրութենէ Տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան Վարդապետի, 'ի միաբանութենէ Մեծին Մխիթարայ Ռաբունապետի և առաջին Աբբայի: Վենետիկ, 1805:

*** Մովսես աբեղա Սարգսյանը մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ իրավացիորեն գրում է. «Պատերազմի և զինվորական ծառայության վերաբերյալ Եկեղեցու դիրքորոշման հարցը հաճախ է բարձրացվում տարբեր բանավեճերում, քայքայիչ կրոնական կազմակերպությունների ուսմունքներում, զինծառայողների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ հոգևորականների շփման ժամանակ և այլն» (տես *Մովսես աբեղա Սարգսյան,* Աստվածաշունչը պատերազմի և զինվորական ծառայության մասին: «ՀԲ», 2015, հմ. 4):

Քրիստոս ասում է. «Ե՛ս եմ հովիւն քաջ» (Յովհ. Ժ. 11): Իսկ Հայ Եկեղեցին* ոչ այլ ինչ է, եթե ոչ Քրիստոսի ներկայությունը Հայոց աշխարհում. «զի դու՛ ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ» (Մատթ. ԺԶ. 18): Եվ Քրիստոսի վկայությամբ՝ «ընդ ձե՛զ եմ զամենայն աւուրս՝ մինչեւ 'ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ. 20), Հայ Եկեղեցին ոչ միայն Քրիստոսի ներկայությունն է մեր աշխարհում, այլև նրա գործի շարունակողը, հետևաբար չի կարող չհետևել տերունական խոսքին՝ «հովիւ քաջ զա՛նձն իւր դնէ՛ 'ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ. 11), և հոգ չտանել իրեն վստահված բանավոր հոտի հոգևոր ու մարմնավոր պաշտպանության մասին: Չէ՞, որ հենց Քրիստոսի կյանքն ինքնին մի յուրօրինակ զոհաբերություն էր հանուն մարդկության փրկության, չարից ազատագրության և արդարության հաստատման. «զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ. 15): Ուրեմն Հայ Եկեղեցին ամենայն իրավունքով կարող է լինել այն բանակի կողքին, որի պատերազմն արդար է և սուրբ:

Այս ամենի հետ մեկտեղ Հայ Եկեղեցու համար հիմք է ծառայում նաև այն հանգամանքը, որ Ս. Գրքում չկա երկրային կյանքում ուժի կիրառության համար ուղղակի արգելք. «Ամենեցուն ժամանակ է՝ և ժամ ամենայն իրաց 'ի ներքոյ երկնից: Ժամանակ ծնանելոյ, և ժամանա՛կ մեռանելոյ: Ժամանակ տնկելոյ, և ժամանակ խլելո՛յ զտնկեալն: Ժամանակ սպանանելոյ, և ժամանա՛կ բժշկելոյ: .... Ժամանակ սիրելոյ, և ժամանա՛կ ատելո՛յ: Ժամանակ պատերազմի, և ժամանա՛կ խաղաղութեան» (Ժողովող Գ. 1-3, 8), հատկապես, եթե դա բռնությունը արդարացված հիմնավորումներով և նպատակով արգելելու համար է:

Հիսուս Քրիստոս Պիղատոսի առջև դատաստանի ժամանակ ասաց. «Ի՛մ արքայութիւն չէ՛ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի՛ էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէի՛ն արդեւք՝ զի մի՛ մատնեցայց Հրէից» (Յովհ. ԺԸ. 36), ինչից պարզորոշ երևում է, որ ինքնապաշտպանության համար դիմադրությունը բնական գործ է: Ուստի Հայ Եկեղեցին ամենայն իրավունքով ոչ միայն կարող է լինել հայոց բանակի կողքին, այլև կարող է ամեն ջանք՝ թե՛ նյութական, թե՛ հոգևոր, ներդրել հանուն սուրբ և արդար պատերազմի հաղթական ավարտի: Ասենք ավելին. այդ պայքարի կազմակերպման գործում նա կարող է լինել նախաձեռնող և ղեկավար:

Հանուն հայրենիքի և հավատքի մղված պայքարին Հայ Եկեղեցին մասնակցեց դեռ 4-րդ դարի սկզբներին**: Հայ ժողովրդի ազատատենչությունն ու

* «Եկեղեցի» ասելով նկատի ունենք այն, որ Հայ Եկեղեցին քրիստոնեական ընդհանրական եկեղեցու մաս է, ուստի երբեմն հարկ չենք համարում շեշտել «Հայ» անվանումը:

** Խոսքը վերաբերում է Վրթանես Ա Պարթևի օրոք տեղի ունեցած հայ-պարսկական պատերազմին, որն ունեցավ ազգային-կրոնական նշանակություն, և մարտի դաշտում ընկածների հիշատակը հավերժացնելու նպատակով Վրթանես Հայրապետը սահմանում է, որպեսզի սպանվածների ոգեկոչման տոնը կատարվի ամեն տարի, և նրանք հիշվեն Ս. Պատարագի ժամանակ («Մխիթարվեցե՛ք Քրիստոսով, որովհետև նրանք, որ մեռան՝ մեր աշխարհի, եկեղեցիների և աստվածատուր հավատի համար մեռան»): Այս կերպ իմաստուն Հայրապետն սկիզբ է դնում հանուն հավատքի և վասն հայրենյաց նահատակվածների սրբացմանը:

ազատ ոգու կամքը լավագույնս դրսևորվեցին դրանից մեկ դար անց՝ Ավարայրի դաշտում*: Հենց այստեղ հայկյան ազատատենչության ոգու կրող քաջարի Վարդանանք մեկընդմիշտ խորտակեցին բելյան բռնատիրության կապանքներն ու շղթաները՝ այսպիսով արդարորեն սուրբ պատերազմներով հաստատելով պատմական հայրենիքում ապրելու և արարելու իրենց իրավունքը:

Ավարայրը հանուն քրիստոսագիր լույսի կենսատու ծաղկման, հանուն հայոց ոգու ինքնության, Մաշտոցյան հրաշքի հավերժության տեղի ունեցած պատերազմ էր, որով մի ժողովուրդ իր հավատքի, իր համոզմունքների, իր հայրենիքի և ազատության սիրույն ողջակիզվում էր կամավոր զոհաբերությամբ:

Ամեն հայրենասեր հայորդի պետք է իր սրտում վառ պահի սուրբ Վարդանանց և խոնարհվի «վասն խղճի ու վասն հայրենյաց ազատության» զոհված Վարդանի ու նրա նահատակ զինակիցների սուրբ հիշատակի առջև: Այդ հերոսամարտում Վարդանը տեսնում էր բովանդակ հայության պայծառ ապագան, դրա համար էլ նա աներկյուղ ու մեռնելու պատրաստ, բաց ճակատով գնաց թշնամու դեմ և իր նահատակությամբ նվաճեց անմահություն, քանի որ «մահ չիմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»: Վարդանի օրինակը սերունդներ է դաստիարակել և ոգեշնչել: Այսպես է, որ մեր պատմության մեջ ունեցել ենք այնպիսի հերոսներ և մեծ հոգի կրող քաջեր, որոնցով մեր ժողովուրդն այսօր ևս հպարտանում է: Եթե իսկապես հավատքը, ազատության գաղափարը դատարկ խոսքեր չեն, ուրեմն մեր պատմության բոլոր Վարդաններն ու Ղևոնդ Երեցները հերոսներ են ոչ միայն մեր ժողովրդի, այլև համայն ազատատենչ մարդկության համար: Մենք պարտավոր ենք նրանց հիշատակը սուրբ պահել, որպեսզի մեր ժողովուրդը մնա անսասան ու անվեհեր և միշտ տոչորվի այն ոգով, որով տոչորված էին Վարդանանց ու Ղևոնդյանց սրբերը:

Գուցե և Ավարայրը զուտ ռազմական տեսակետից պարտություն էր, սակայն պատմական անըմբռնելի հրաշքով հայ ժողովրդի համար դարձավ մեծ բարոյական ու տիրական հաղթանակ և եղավ Հայ Եկեղեցու հերոսացման ու հայության հավաքական սրբացման մշտնջենական խորհրդանիշը: Լույսի և խավարի, հավերժության և ակնթարթի պայքարն էր Ավարայրը: Խավարն ու ակնթարթը չկարողացան իրենց մեջ ծրարել լույսն ու հավերժությունը:

Ամեն անգամ, երբ Հայ Եկեղեցին ոգեկոչում է Վարդանի և հազար երեսունվեց նահատակների հիշատակը, ակնածանքով ու հիացած մտածում ենք, թե որքա՛ն ճանապարհ պիտի կտրած լիներ մի ժողովուրդ, ինչպիսի՛ բարձր ազգային, մշակութային, հոգևոր մակարդակ պիտի նա ունենար, որ տակավին 5-րդ դարում իր ազգային սրբությունները պաշտպանելու համար ոտքի

* Վարդանանց պատերազմի հերոսները բացառապես քրիստոնեական հավատքի և բարոյականության կրողներ էին, որոնք իրենց դաստիարակությունն ստացել էին Հայ Եկեղեցու ծոցում:

ելներ ու տասնյակ հազարավոր իր զավակների կամավոր ուղարկեր «գիտակցված մահվան»:

Ավարայրից հետո հայ ազատագրական պայքարը գործնականից անցում կատարեց դեպի գաղափարական-տեսական դաշտ՝ իր բյուրեղացած արտահայտությունն ստանալով հատկապես 5-րդ դարի հայ մշակույթի մեջ, որի ստեղծողները ևս Հայ Եկեղեցու ծոցում մեծացած և քրիստոնեական հավատքով ու գաղափարներով լցված հոգևորականներ էին: Նշենք միայն, որ այդ դարաշրջանի հարուստ մատենագրական ժառանգության մեջ հայ ազատագրական պայքարի գաղափարի տեսական հիմնավորումներով աչքի են ընկել Եզնիկ Կողբացին և Եղիշեն[10]: Ընդսմին Եղիշեն ներկայացնում է ազատագրական պայքարի նկատմամբ ոչ միայն իր անձնական, այլև Հայ Եկեղեցու բոլոր ժամանակների դիրքորոշումը, որից առ այսօր Հայ Եկեղեցին դույզն-ինչ չի շեղվել. «Եղիշեն մարդու գործունեության հիմքում դնում է նրա անշահախնդիր սերը հօգուտ հասարակական բարիքի, այն սերը, որը նախ և առաջ արտահայտվում է հայրենիքին անձնազոհ նվիրվածության մեջ իր ժողովրդի ազատության պաշտպանության գործում: Հերոսը Եղիշեի հասկացությամբ այն մարդն է, որն ընկալել է մեծ ճշմարտությունը այն մասին, թե «մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»: Ուրեմն, ըստ Եղիշեի, մահը հանուն հայրենիքի՝ անմահություն է»[11]:

Ավարայրին հաջորդեցին Վահանանց, արևմտահայության ինքնապաշտպանության, Սարդարապատի, Արցախի անցյալի և մերօրյա հերոսամարտերը: Եվ այսպես դար ու դարեր կռվեցինք, դար ու դարեր «վասն Հիսուսի, վասն հայրենյաց» մաքառեցինք, որ Վարդանանց թափած արյունից միշտ վարդակակաչներ բացվեն, որ Վարդանանց ոգին ամեն հայի կրծքում բողբոջի, որ Վարդանանց հավատը ամեն հայի սրտին անձրևի՝ որպես անձկալի շնորհ և աստվածատուր օրհնություն:

Հայ ազատագրական պայքարում (թե՛ միջնադարում, թե՛ մեր օրերում) Հայ Եկեղեցին առաջնորդվել է ոչ միայն բացառապես քրիստոնեական, այլև համամարդկային բարոյականության չափանիշներով: Բնականաբար, միջնադարում ազատագրական պայքարի կամ պատերազմի ժամանակ համամարդկային գաղափարների կիրառությունը չէր դիտվում որպես պատերազմ սկսելու կամ վարելու առաջնային պայման, թեև հայտնի է, որ դեռ հին ժամանակներում գոյություն են ունեցել պատերազմելու օրենքներ և կանոններ[12]: Իսկ արդեն մեր օրերում՝ 20–21-րդ դարերում, արդարացի պատերազմ

[10] Տես *Կ. Կ. Չալոյան*, Հայ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը V–VI դարերում: «Պատմա-բանասիրական հանդես», 1962, հմ. 4:

[11] Նույն տեղում:

[12] Տես *H. S. Levie.* History of the law of war on land. “International Review of the Red Cross”, 30.06.2000, N 838 (https://www.icrc.org/eng/resources/documents/article/other/57jqhg.htm):

սկսելու և վարելու տեսության ու չափանիշների վերաբերյալ ստեղծվել է բավական հարուստ գրականություն[13], այդ չափանիշներն ստացել են կանոնական ուժ և ամրագրվել միջազգային իրավունքի նորմերով[14]:

Այստեղ, բնականաբար, վիճարկման ենթակա չէ հայ ազատագրական պայքարի և դրանում Հայ Եկեղեցու ներգրավվածության արդարացի լինելու հանգամանքը: Սակայն փորձենք մեր օրերում ընդունելություն գտած՝ արդարացի պատերազմ սկսելու չափանիշները *(jus ad bellum)* առաջադրել հայ ազատագրական պայքարի գաղափարների հետ՝ ցույց տալով, որ նույնիսկ մեր օրերի համամարդկային չափանիշները, իհարկե, որոշակի վերապահություններով, ամբողջապես դրված են եղել հայ ազատագրական պայքարի թե՛ գաղափարական, թե՛ գործնական հարթությունների հիմքերում:

Այսօր արդարացի պատերազմ սկսելու միջազգայնորեն ընդունված չափանիշներն[*] են՝ ա. արդարացի հիմքը (շարժառիթը), բ. արդար նպատակը, գ. իշխանության օրինականությունը, դ. վերջին միջոց լինելը, ե. բանական ավարտի հավանականությունը, զ. զուգաչափությունը[15]:

Փորձենք սույն չափանիշները բաղդատել հայ ազատագրական պայքարի բնույթի հետ:

Արդարացի հիմքը (շարժառիթը): Ուսումնասիրողներն այս սկզբունքը համարել են առաջնային, սակայն, արդարացի պատերազմների ժամանակակից հայտնի ուսումնասիրող Ջ. Ֆ. Քովերդալի կարծիքով, այն դեռ 18-րդ դարում կորցրել էր իր առաջնայնությունը[16]:

Նշենք, որ չենք կարող ընդունել տվյալ պնդումը, քանի որ հայ ժողովրդի համար թե՛ հին ու միջնադարյան, թե՛ նոր ու նորագույն ժամանակներում հույժ մեծ կարևորություն և առաջնայնություն է ունեցել և ունի թշնամու դեմ պայքարելու համար արդարացի հիմքերի գոյությունը[**], քանի որ՝ «ժողո-

[13] Տես, օրինակ, *Մ. Վոլզեր,* Նշ. աշխ., *D. Cole*. When God says war is right: The Christian's perspective on when and how to fight. USA, 2002; *M. Pearcy*. We have never known what death was before. A just war doctrine critique of U.S. history textbooks. University of South Florida, 2011; *J. F. Coverdale*. An introduction to the just war tradition. "Pace International Law Review", 2004, Vol. 16, Issue 2; *В. Карпец.* Война справедливая и война священная. 19 марта 2007 (http://www.pravaya.ru/look/ 11594):

[14] Տես «Международное право». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под общей ред. Д. Рогозина, гл. 17, «Военное право» (http://www.voina-i-mir.ru/article/826):

[*] Ստորև բերված չափանիշներից առաջին երեքը պայմանականորեն համարվում են բարոյական, իսկ հաջորդ երեքը՝ իրավական, ընդսմին բոլոր չափանիշների առկայությունն անխախտ պայման է, որպեսզի պատերազմը, մեր դեպքում՝ պայքարը, համարվի արդարացի:

[15] Տես "What are jus ad bellum and jus in bello?", 22 January 2015 (https://www.icrc.org/en/document/what-are-jus-ad-bellum-and-jus-bello-0); "The Jus Ad Bellum Convention". "Just War Theory" (http://www.iep.utm.edu/justwar/#H2):

[16] Տես *Ջ. Ֆ. Քովերդալ*, Նշ. աշխ., էջ 112:

[**] Նկատի ունենք Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գործընթացը, ինչպես նաև Արցախյան հիմնախնդիրը:

վուրդների ենթարկումը օտարազգի լծի և տիրապետության ու նրանց կեղեքումը մարդու հիմնական իրավունքի բացասումն են, հակասում են Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը»[17]: Խորհրդահայ հետազոտող Կ. Քարամյանը, զարգացնելով այդ գաղափարները, նշում է. «Ազատագրական շարժումը անխուսափելի է այնտեղ, ուր տիրում են բռնությունն ու շահագործումը, կյանքի, գույքի ու պատվի անապահովությունը»[18]: Իսկ մենք Հայոց պատմությունից գիտենք, որ հայ ժողովուրդը հաճախ է ենթարկվել օտար նվաճողների կեղեքումների[*]: Ուստի հայ ազատագրական պայքար սկսելու տեսանկյունից Հայ Եկեղեցին չէր կարող անտեսել պայքարելու այս արդար հիմնավորումը, և պատահական չէ, որ նա ազատագրական պայքարը տեսականորեն և գործնականում իր գագաթնակետին է հասցրել 451 թվականին:

Հարկ ենք համարում շեշտել, որ օտարի լծից կամ ազդեցությունից ազատվելու համար Հայ Եկեղեցու մղած պայքարը տեսանելի է և՛ անկախության շրջանում, և՛ անկախություն չունենալու ժամանակահատվածում: Եվ քանի որ Կիլիկյան Հայաստանի պետականության կորստից հետո հայ ժողովուրդն իր թե՛ պատմական հայրենիքում, թե՛ օտար ափերում կեղեքվում և հեծում էր բռնատիրական կայսրությունների ու թագավորությունների լծի ներքո, իսկ հայրենի անկախ պետություն փաստացի այլևս չկար, ապա Հայ Եկեղեցին միակ համազգային կառույցն էր, որն իր ուսերին պետք է առներ հայ ժողովրդի քաղաքական հոգսերը ևս. «Հայ ազատագրական միտքը ձևավորվելով եկեղեցական միջավայրում, վերընձյուղվելով՝ իր ծիրի մեջ ընդգրկեց նաև ազնվականական ու առևտրական հասարակախավերի լավագույն ներկայացուցիչներին»[19]:

Արդար նպատակը: Այս սկզբունքը սերտորեն առնչվում է արդարացի հիմքի հետ: Այսինքն՝ արդարացի հիմնավորմամբ սկսված որևէ պատերազմ, ազատագրական պայքար պետք է անխուսափելիորեն ունենա նաև արդար նպատակ: Հայ ազատագրական պայքարի դեպքում միանգամայն արդար էր, որ Հայ Եկեղեցին լծվում էր մի գործի, որի նպատակը իր հավատացյալ ժողովրդին ոչ միայն ֆիզիկական բռնություններից զերծ պահելն էր, այլև անկախ պետականության գաղափարը պահպանելն ու փոխանցելը: «Եվ իրոք, հայ ժողովուրդը ազատագրական պայքար է մղել, մահու և կենաց

[17] «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախության տրամադրման հռչակագիր»: Ընդունված է 1960 թ. դեկտեմբերի 14-ին Գլխավոր ասամբլեայի 1514(XV)-րդ բանաձևով (http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/colonial.shtml):

[18] *Կ. Քարամյան,* Հայ ժողովրդի ազատագրական պայքարի և ազգային-ազատագրական շարժման օրինաչափության հարցի շուրջ: Ե., 1969, էջ 8:

[*] Մինչ քրիստոնեության ընդունումը հայ ժողովուրդն իր անկախության համար պայքարն սկսել էր դեռ Ք. ա. 1-ին դարում (տես *Ծ. Աղայան*, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից: Ե., 1976, էջ 21):

[19] Տես *Պ. Հովհաննիսյան*, Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես – XVIII դարի վերջ): Ե., 2010, էջ 3:

կռվի ելել հռոմեական լեգեոնների (I դ. մ. թ. ա.), պարսիկների (V դ.), արաբների (VII–IX դդ.) դեմ: Նա վճռական դիմադրություն է ցույց տվել Բյուզանդական կայսրության հայահալած քաղաքականությանը, որի հետևանքով XI դ. վերացվեցին Տարոնի, Տայքի, Վասպուրականի, Անիի, Կարսի հայկական թագավորությունները»[20]:

Այսպիսով՝ Հայ Եկեղեցու ազատագրական պայքարում սկզբնավորողի և առաջնորդողի նպատակը միմիայն իր հավատացյալի համար ապահով, խաղաղ կյանքը և ամենակարևորը՝ անկախ պետականությունը վերականգնելն ու պահպանելն էր, ինչը վստահաբար յուրաքանչյուր ժողովրդի համար արդարացված նպատակ է, եթե չի խախտվում այլ ժողովուրդների հոգևոր և քաղաքական անկախությունների շրջագիծը:

Իշխանության օրինականությունը: Հայությունն իր անկախ պետականությունը կորցրեց 14-րդ դարի վերջին: Նշենք, որ և՛ Հայաստանում, և՛ Կիլիկյան Հայաստանում իշխանական տներից ոչ մեկը չկարողացավ ստանձնել միավորիչի դերը: Մեծ ու փոքր, մանր ու միջին իշխանական տները պառակտված և հյուծված էին նաև ներքնապես: Հայ Եկեղեցին մնաց միակ համազգային կառույցը, որի շուրջ համախմբվեց հայ ժողովուրդը թե՛ պատմական հայրենիքում, թե՛ օտար ափերում: Եկեղեցին ակամայից դարձավ գաղափարախոս, ազատության ռահվիրա և ջահակիր: Հպարտությամբ կարող ենք պնդել, որ դժվարին պայմաններում Հայ Եկեղեցին իր հիմնական առաքելությունը՝ Աստծո Խոսքի քարոզչությունը, նույնիսկ չփոխարինեց ազգային-ազատագրական պայքարով, այլ ազատագրական պայքարն ու ազգապահպանությունն այնքան կարևորեց, որ դրանք հոգեփրկության հետ մեկտեղ ընկալվեցին որպես Հայ Եկեղեցու երկրորդ, բայց նշանակությամբ ոչ պակաս առաքելություն: Եվ քանի որ Հայ Եկեղեցին հոգևոր իշխանության կրողն էր, ակամայից օտար պետությունների հետ հարաբերություններում դարձավ նաև քաղաքական իշխանության կրող և ներկայացուցիչ: Նշենք նաև, որ Հայ Եկեղեցին երբեմն առնում էր իր ուսերին այդ «քաղցր» և «ծանր» բեռը, որովհետև հենց օտարներն էին դա ցանկանում՝ Հայ Եկեղեցին դիտելով որպես հայ ժողովրդի շահերի արտահայտչի:

Վերջին միջոց լինելը: Ակնհայտ է, որ Հայ Եկեղեցին ազատագրական պայքար սկսելու և այն առաջնորդելու համար ուներ արդարացուցիչ հիմնավորում, նպատակ և օրինական իշխանություն: Եկեղեցու համար մի բան հստակ է եղել. պետք է հայ ժողովուրդը ազատագրվեր օտարի լծից և կերտեր իր անկախ պետությունը: Սակայն դարաշրջանից դարաշրջան յուրովի է պատկերացվել և ընկալվել հայ ժողովրդի ազատագրական պայքարի վախճանակետը:

Ըստ Հայ Եկեղեցու՝ հայ ազատագրական պայքարը պետք էր առնչել մեծ և հզոր պետությունների շահերի հետ: Այս գաղափարը երկար ժամանակ եղել է ազատագրական պայքարի բոլոր գործիչների գործունեության առանցքը:

[20] *Ծ. Աղայան*, Նշ. աշխ., էջ 21:

Գլխավոր պատճառն այն էր, որ դեռ չէր ձևավորվել հայ ժողովրդի փրկությունն իր իսկ ուժերով կերտելու գաղափարը, որին Հայ Եկեղեցին և ժողովուրդը վերջնականապես հանգեցին 19-րդ դարի վերջին: Մինչդեռ միջնադարում և նոր շրջանում Հայ Եկեղեցու համար հայ ժողովրդի քաղաքական և հոգևոր անկախության ձեռքբերումը սերտորեն կապված էր այն պետությունների հետ, որոնք հայ ժողովրդին տիրապետող և կեղեքող պետությունների նկատմամբ ունեին թշնամական կեցվածք: Ասել, թե Հայ Եկեղեցին չէր փորձում այլ ճանապարհներով ևս հասնել իր ժողովրդի ազատությանն ու անկախ պետության կերտմանը, թերևս կլիներ սխալ:

Սակայն ի վերջո Հայ Եկեղեցին *ստիպված* էր փարվել ազատագրական պայքարի միջոցով անկախություն ձեռք բերելու՝ որպես միակ իրատեսական գաղափարին:

Բանական ավարտի հավանականությունը: Արդարացի պատերազմի վարման սկզբունքներից է նաև սկսված գործը հաջողությամբ ավարտին հասցնելու դրույթը: Սակայն ասել, թե հայ ազատագրական պայքարի նվիրյալ հոգևորականները տեսնում էին այդ պայքարի հաջող ավարտը, թերևս կլինի չափազանցում: Բայց և չենք կարող պնդել, թե Հայ Եկեղեցին հաշվի չէր առնում ազատագրական պայքարի հնարավոր բացասական և դրական ավարտի դեպքում կորուստներն ու ձեռքբերումները, չէր տեսնում ազատագրական պայքարի միջոցով հայ ժողովրդի խնդիրների կարգավորման հնարավորությունները:

Սակայն երկար դարեր Հայ Եկեղեցին և մի շարք գործիչներ անվերապահորեն այն կարծիքին էին, որ բավական է իրենք սկսեն զինված պայքարը, և անմիջապես Արևմուտքի քրիստոնեական պետությունները, երբեմն նաև որոշ արևելյան տիրակալներ պետք է փութային օգնության: Այս մոլորությանը նպաստում էր նաև այն, որ տարբեր ժամանակներում Օսմանյան կայսրության և Պարսկաստանի նկատմամբ արևմտյան երկրները դրսևորում էին թշնամական վերաբերմունք: Միայն 19-րդ դարի վերջերին պարզ դարձավ, որ հայ ժողովրդին օտարների օժանդակությամբ ազատագրելը ռոմանտիկ մոտեցում է. «Ձեր բարեկամաց և ազգականաց իբրև պարգև մէկմէկ զէնք տարեք, զէնք առեք և դարձեալ զէնք: Ժողովուրդ, ամենէն առաջ քո ազատութեան յոյսը քո վրայ դիր, քո խելքին և բազկին ոյժ տուր, մարդ ինքնիրմէն պէտք է աշխատի, որ փրկուի»[21]:

Զուգաչափությունը: Այս սկզբունքը ևս կարևոր տեղ ունի ազատագրական պայքար սկսող և առաջնորդող կառույցի, իշխանության կամ անհատի համար: Հայ Եկեղեցին ամենայն լրջությամբ գիտակցում էր իր ուսերին առած գործի կարևորությունը և դրանից բխող հետևանքները՝ համարելով, որ պայքարի հետ կապված զրկանքներն ու կորուստները համակշռվում են պայքարի փրկարար նպատակներով: Այդ պայքարում նա երբևէ չխախտեց արդա-

[21] Մեջբերում Խրիմյան Հայրիկի քարոզից (տես «Հայոց պատմություն», հ. III. «Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)», գիրք Ա (XVII դարի երկրորդ կես–XIX դարի վերջ): Ե., 2010, էջ 446:

րացի հիմնավորման սկզբունքը, չշեղվեց իր արդար նպատակից, նույնիսկ պատրաստ էր ի վնաս եկեղեցական շահերի և ի նպաստ անկախ պետականության վերականգնման ու հայ ժողովրդի բարօրության գնալու «դավանական զիջումների»՝ առաջին հարվածը վերցնելով իր վրա*:

Հարկ է նշել, որ թեև Հայ Եկեղեցին ազատագրական պայքարի գաղափարական սկզբունքների մշակողն էր և հիմնական առաջնորդը, սակայն որևէ գործողություն չէր լինում հատկապես առանց իշխանական և առևտրական դասերի մասնակցության: Բացի այդ, Հայ Եկեղեցին մշտապես փորձել է գործել այնպես, որ իր նախաձեռնողական գործողությունների, կատարված քայլերի համար հարվածի տակ չդրվի որևէ անհատ կամ դաս, նույնիսկ երբեմն ամբողջ պատասխանատվությունը վերցրել է իր վրա:

Ուստի պայքարը հաջողությամբ կամ անհաջողությամբ առաջ տանելու պատասխանատվությունը պետք է ստանձնեն նաև իշխանական, առևտրական խավերը:

Եվ այսպես. կարող ենք եզրակացնել, որ նույնիսկ մեր օրերի ուսումնասիրողների և միջազգային կառույցների ընդունելությանն արժանացած՝ արդարացի պատերազմների տեսության չափանիշները այս կամ այն կերպ առկա են հայ ազատագրական պայքարի ձևավորման և ընթացքի մեջ՝ իհարկե, որոշակի ազգային նկարագիր և դիմագիծ հաղորդելով չափանիշներից յուրաքանչյուրին:

* Համոզված ենք, որ դավանափոխության հարցում տրված խոստումները և որոշ փաստաթղթերի ստորագրումը միայն առերես բնույթ էին կրում:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

АРМЯНСКАЯ АПОСТОЛЬСКАЯ ЦЕРКОВЬ В НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ: НЕКОТОРЫЕ ОБЩЕЧЕЛОВЕЧЕСКИЕ ИДЕЙНЫЕ ВОПРОСЫ

Иерей АРАРАТ ПОГОСЯН, соискатель кафедры истории Армении ЕГУ, директор Матенадарана и Издательского отдела Св. Эчмиадзина

РЕЗЮМЕ

Отношение Армянской церкви к кровопролитиям всегда было резко отрицательным, что, однако, не означает, будто Армянская церковь выступает против войн вообще.

Армянская церковь принимала самое активное участие в борьбе за свободу Отечества и за веру еще с начала IV века, вдохновляла на подвиги армянских воинов в Аварайрском сражении, при самообороне западных армян, в Сардарапатской битве, в Арцахских героических сражениях прошлого и настоящего. В этой борьбе Армянская церковь, оставаясь приверженной христианским и общечеловеческим ценностям, в

то же время проявила свою национальную сущность и в условиях отсутствия светской государственной власти подчас подменяла ее, выступая в роли вдохновляющей и предводительствующей общенациональной структуры.

В XIX–XX вв. были научно выработаны и закреплены в нормах международного права шесть критериев для начала справедливой войны *(jus ad bellum):* справедливость мотивов и моральная оправданность цели; ведение войны в соответствии с установленной справедливой целью и выражение «добрых, или правильных намерений»; легитимность власти, начинающей войну; война как последнее (крайнее) средство; наличие разумных шансов на успех; адекватность предполагаемого бремени войны ее целям. Проведенный анализ причин и обстоятельств Армянской национально-освободительной борьбы подтверждает ее полное соответствие современным принципам справедливой войны.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE NATIONAL-LIBERATION STRUGGLE: SOME UNIVERSAL IDEOLOGICAL ISSUES

Priest ARARAT POGHOSYAN, PhD (external) at the Chair of the History of Armenia, YSU, Director, Mother See of Holy Etchmiadzin Matenadaran and Publishing House

SUMMARY

The Armenian Church has always been antagonistic towards bloodsheds, which, nevertheless, does not presume that it comes forward against wars in general.

From the very beginning of the 4th century the Armenian Church has had an active participation in the struggle for freedom of our homeland and faith, inspiring Armenian warriors to feats of arms in the Battle of Avarayr, in the self-defense of Western Armenians, in the Battle of Sardarapat, in the past and present heroic fightings in Artsakh. In this struggle the Armenian Apostolic Church, while remaining loyal to the Christian and universal values, simultaneously manifested its national essence and in terms of the absence of the temporal state power it would often replace it, by assuming the part of an inspiring and leading nationwide structure.

In the 19-20th centuries six criteria for starting a just war (jus ad bellum) were academically developed and enshrined in the norms of international law: the justness of causes and the moral rightfulness of the aim; waging war in accordance with the established just aim and expressing “kind or right intentions”; the legitimacy of the authority starting the war; war as the last (extreme) resort; reasonable chances available for success; the adequacy of the presumed burden of the war to its goals. The analysis of the causes and consequences of the Armenian national-liberation struggle conducted herein is a proof of its full compliance with the contemporary principles of the just war.

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ

Թուրքական պատմագիտության մեջ տիրապետող և չհիմնավորված է այն բացահայտ անհեթեթ ու կեղծ մեղադրանք-արդարացումը, թե Վանի 1915 թ. կոտորածների հիմնական պատճառներից մեկը եղել է 1915 թ. Վանի հայ ազգաբնակչության «ապստամբությունը»[1], որը, ինչպես Կ.Պոլսում գերմանական դեսպան Ֆոն Վանգենհայմն է բնորոշել, «հավանաբար ռուսական խարդավանքների» հետևանք էր[2]:

Թուրք հեղինակները, մասնավորապես, առաջ են քաշում այն «փաստարկը», թե «դաշնակցության կոմիտեն իր բջիջներին տվեց հետևյալ հրամանը. «Հենց որ ռուսներն անցնեն սահմանը, և օսմանյան զորքերն սկսեն նահանջել, ամենուրեք հարկավոր է կազմակերպել ապստամբություններ: Այդպիսով՝ օսմանյան բանակը կհայտնվի երկու կրակի միջև: Իսկ թուրքական զորքերի առաջխաղացման դեպքում հայ զինվորները պետք է իրենց զենքով հանդերձ լքեն իրենց զորամասերը, կազմակերպեն պարտիզանական ջոկատներ, իսկ հետո միանան ռուսներին»... Այս բոլոր հրամանները և հրահանգները ի կատար ածվեցին: Այն բանից հետո, երբ ռուսական զորքերը հայ կամավորական ջոկատների հետ հատեցին թուրքական սահմանը, հայերը, որոնք ծառայում էին թուրքական բանակում, կա՛մ միացան ռուսական զորքերին, կա՛մ կազմեցին պարտիզանական ջոկատներ»[3]:

Այսպիսով՝ թուրքական քարոզչական մեքենան, փորձելով կեղծիքներով ու նենգափոխումներով արդարացնել իթթիհատականների ցեղասպանական քաղաքականությունը, ձգտում է ստեղծելու այնպիսի հասարակական կարծիք, որով «կիիմնավորվեր» հայերին «դավաճան» որակելը:

---

[1] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Rafael de Nogales*. Vier Jahre unter dem Halbmond: Erinnerungen aus dem Weltkriege. Berlin: Verlag Reimar Hobbing, 1925, P. 54:

[2] Տես «Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու»: Հրատարակությունը և ներածությունը՝ Յոհաննես Լեփսիուսի, թարգմանությունը գերմաներենից՝ Վալենտինա Մինալյանի, հ. 1: Ե., 2006, էջ 150:

[3] Տես «Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983)». Е., 1984, с. 73; նաև՝ *F. Kandemir*. Yakın Tarihimiz, c. 1. Istanbul, 1962, s. 81:

Սակայն իրականում Վանի և շրջանի հայերը, որոնք «ինքնազսպողութեան հիանալի ընթացքով շարժեցան»[4], ոչ միայն չեն ապստամբել, այլև բնավ ապստամբելու նպատակ չեն ունեցել: Վանի նահանգի հայությունը, ինչպես նշել է Վահան Փափազյանը, բաղկացած էր ոչ այնքան մոլեռանդ ազգասերներից, որքան գիտակից դաշնակցականներից[5]: Դաշնակցական ղեկավար գործիչների խոստովանությամբ՝ պատերազմի նախօրեին «Հայութիւնն ու Հ.Յ.Դաշնակցութիւնն այսպիսի ձեռնարկ մը գլուխ հանելու համար պատրաստուած չէին: Երկվութիւնը և տատանումը մնացին իրենց ուժին մէջ»[6]:

Իթթիհատ-Դաշնակցություն համագործակցությունը, որը 1908 թ. սահմանադրության ընդունումից ի վեր շարունակվում էր մինչև պատերազմ, «ամլացրել» էր այդ կուսակցությանը և նրան դարձրել նախաձեռնությունից զուրկ և հասունացող իրադարձությունների հետևից գնացող մի խումբ մարդիկ:

Դրա հետ մեկտեղ հայերը հիմնականում անզեն էին, տղամարդկանց մեծ մասն էլ տարբեր վայրերում զինվորական ծառայության մեջ էր: Արամ Անտոնյանը նշել է, որ «եթէ իրապէս ապստամբութեան ծրագիր մըն ալ ունեցած ըլլային, այդ ծրագիրը գործադրելու բացարձակապէս անկարող դարձած էին այն պատճառաւ, որ իրենցմէ 21 տարեկանէն մինչեւ 45 տարեկան այրերը արդէն իսկ դրօշի տակ կանչուած եւ զինուորական իշխանութեանց ձեռքն էին: Ապահովաբար մանուկներով, կիներով, աղջիկներով եւ ծերունիներով չէ, որ Հայերը պիտի կրնային ապստամբիլ»[7]:

Վան-Վասպուրականի գրեթե ամբողջ հայությունը՝ Արամի գլխավորությամբ, դեմ էր անգամ ամենափոքր ապստամբական շարժում հրահրելուն և Արևելյան Հայաստանում՝ Ռուսական կայսրության տարածքում, կամավորական գնդերի պաշտոնական կազմավորմանը[8]: Ա. Վռամյանը և Արամը «առանձին խոհեմութեամբ և հեռատեսութեամբ» գաղտնի պատվիրակներ ու նամակներ էին ուղարկում Ս. Էջմիածին և Թիֆլիս՝ Հայոց կաթողիկոսին և Ազգային բյուրոյի ներկայացուցիչներին, որպեսզի վերջ տան կամավորական շարժմանը, «վերապահ ու խոհեմ ընթացք բռնեն և չգրգռեն ոճրագործ իթթիհատական ոճրածարավ թուրք կառավարութեան»[9]:

Նշենք, որ 1914 թ. սեպտեմբերի 2-ին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշ-

[4] «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնին գաղտնիքները»: Կ.Պոլիս, 1919, էջ 246:

[5] Տես *Վ. Փափազեան,* Համաշխարհային պատերազմը եւ Տարոնի աշխարհը 1914–1915, ա.տ.թ., էջ 18:

[6] *Կ. Սասունի,* Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914–1918). Տաճկահայ գաղթաշարժը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան կազմութեան մէջ: Բոստոն, 1927, էջ 25–26:

[7] *Ա. Անտոնեան,* Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէաթ փաշա. պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ բազմաթիւ պատկերներով: Պօսթըն, 1921, էջ 125:

[8] Տես *Վ. Փափազեան,* Համաշխարհային պատերազմը եւ Տարոնի աշխարհը, էջ 17–18:

[9] *Գ. ծ. վարդ. Պալաքեան,* Հայ գողգոթան: Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տէր-Զօր. 1914–1920, հ. Ա: Վիեննա, 1922, էջ 61, նաև՝ *Հ. ավ. քհ. Հաճյան,* Հայոց տաժանքի ճամբաներով, հ. Ա: Թեհրան, 1965, էջ 374–375:

կովը կաթողիկոս Գևորգ Ե-ին գրած նամակում նշում էր, որ «ծայրահեղ անցանկալի է և նույնիսկ վտանգավոր է ինչ-որ ապստամբություն առաջ բերել թուրքահայերի շրջանում»[10]: Այդ էր հավաստում նաև Ռուսաստանի արտգործնախարար Դ. Սազոնովը, որը 1915 թ. մայիսի 1-ին Լոնդոնում դեսպանին հեռագրում էր, որ հայերի համար իմաստ չուներ մինչև ռուսական զորքերի ժամանումը հանդես գալ թուրքական գերակշիռ ուժերի դեմ[11]:

Արմեն Գարոն (1872–1923)
և Արշակ Վռամյանը (1871–1915)

Արամը «թրքահայ ժողովրդի համար կորստաբեր կը համարեր կամաւորական շարժումներու կազմակերպութիւնը եւ մանաւանդ գործօն մասնակցութիւնը՝ ենթարկուելով ռուսական բանակին»[12]: Այդ ամենը շատ հստակ կերպով երևում է 1915 թ. ապրիլի 2-ին Վանի «Աշխատանք» թերթի խմբագրատանը հրավիրված ժողովում Ա. Վռամյանի ելույթից. «Մենք չի պիտի սկսենք, մենք չի պիտի տանք ազդանշանը, որովհետեւ մենք ապստամբներ չէնք եւ ապստամբութիւն մը ինքնին բաւական է՝ ամբողջ Հայկական բարձրավանդակը հսկայական գերեզմանոցի մը վերածելու: Եվ վերջապէս մենք համզուած ենք ձեզ հետ, որ հակառակ մեր բոլոր զիջումներուն եւ խաղաղասիրական ձգտումներուն, օր մը ահարկու փոթորիկը պիտի պայթի մեր գլխուն: ... Միայն վերջին րոպեին, երբ այլեւս ոչ մէկ ճամբայ կը մնայ եւ թշնամիին սուրը կ'երկարի ամբողջ հայ ազգի պարանոցին առհասարակ, այն ատեն ոչ ոք պիտի մեղադրէ ձեզ, եթէ դուք դիմէք.... ինքնապաշտպանութեան զէնքին եւ պաշտպանէք ինքզինքնիդ եւ ձեր ազգութիւնը»[13]:

Ելույթից պարզ երևում է, որ Ա. Վռամյանը մոլորված էր: Նա, մի կողմից, չէր ցանկանում ապստամբել, մյուս կողմից՝ գիտակցում էր, որ շուտով պիտի կոտորվեն: Արամը և Վռամյանը լավ էին հասկանում, որ կամավորական շարժումը Իթթիհատի ձեռքին լինելու էր մի զենք՝ հայերի հանդեպ իրենց թշնամական վերաբերմունքն իրականացնելու համար: Այդ գիտակցությամբ Վանի դաշնակցական ղեկավարներն արեցին հնարավորը, որպեսզի թուրքական կառավարությանն ապացուցեն, որ «Թիֆլիսում (Ռուսաստանում) տեղի ունեցած հակատաճկական շարժումները ոչ մի կապ չունէին տաճ-

[10] Տես Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1457, ց. 1, գ. 15, թ. 1:

[11] Տես «Геноцид армян в Османской империи». Сборник материалов и документов. Под ред. М. Г. Нерсисяна. Е., 1966, с. 149:

[12] *Վ. Փափազեան,* Իմ Յուշերը, հ. Բ: Բոստոն, 1952, էջ 289–295:

[13] Տես *Պ. Սնապեան,* Երկու սպանդ: Պեյրութ, 2008, էջ 23:

կահայ բուն ժողովրդի հետ, որն ըստ ամենայնի օրինակելի պարտաճանաչ էր իր պետութեան հանդէպ՝ կատարելով պատերազմի հետ կապուած ամենածանր պահանջները»[14]: Սակայն այդ նրանց չհաջողվեց, որովհետև, ինչպես Արամն է նշել, «մեզի հարցնող չեղաւ... մենք այստեղ բոլորովին անտեղեակ էինք եւ հակառակ էինք առնուած քայլին... Ռոստոմ այնտեղ չէ. գործը մնացել է Զամալեանի պես գեադա-գիւղաների ձեռքում»[15]:

Պատրիարքը և Վանի հայ ղեկավար շրջանները ևս չէին խրախուսում այդ երևույթը և տաճկահայությանը կոչ էին անում անշեղորեն կատարելու քաղաքացիական պարտքը, թելադրում էին, որ արևմտահայերը ինչպես գավառներում, այնպես էլ մայրաքաղաքում լինեին զուսպ, շրջահայաց և զգուշավոր, հավատարիմ մնային ու ենթարկվեին թուրքական պետությանը[16]:

Հ. Մորգենտաուի հաղորդմամբ՝ Վանի հայ գործիչները ժողովրդին զգուշացնում էին «հանդարտութիւն պահել, համբերատարօրէն հանդուրժել ամէն անարգանքի եւ նոյն իսկ ծայրայեղութիւններու, ատով չտալու համար թիւրքերուն այն առիթը՝ զոր կը փնտռէին: ...Եթէ նոյն իսկ անոնք մեր մէկ քանի գիւղերը կրակի տան, կ'սէին այդ պետերը. փոխվրէժի մի դիմէք, որովհետեւ աւելի լաւ է որ՝ մէկ քանի գիւղեր ոչնչանան, քան ամբողջ ազգը կոտորուի»[17]:

Հայերի ղեկավար կազմը՝ առաջնորդներն ու դաշնակցական կոմիտեները, որոնք 1914 թ. օգոստոսին էրզրումում գումարել էին ընդհանուր ժողով, հրապարակավ հայտարարեցին Օսմանյան կայսրությանն իրենց հավատարմությունը և համարեցին, որ պետք է կռվել նրա պաշտպանության համար և, եթե պետությունը վճռի մասնակցել պատերազմին, հարազատորեն կատարել հայրենիքի ու կառավարության նկատմամբ «այլասերման» աստիճանի հասած քաղաքացիական պարտքը և խրախուսել ժողովրդին՝ առանց դժգոհելու մուծել հարկերն ու տալ զորակոչիկների: Միևնույն ժամանակ, Վանի ազգային առաջնորդարանը, Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Ա. Վռամյանը, ինչպես նաև 1914 թ. հոկտեմբերի 10–15-ը Վանում կազմված խառը միջկուսակցական խորհրդաժողովը, որը քաղաքային ժողովի հետ վարելու էր գործերը, պետք է ջանային «ամէն հնարաւոր միջոց կիրառելով չխզելու յարաբերութիւնները կառավարութեան եւ հայ ժողովրդի միջեւ»[18]:

Հայերն ու թուրքերը գումարեցին ժողով, որտեղ «որոշուեցաւ, որ երկու դրացի ժողովուրդները իրարու հետ խաղաղութեամբ ապրէին»[19]: Թուրքերն անգամ

[14] «Արամը. մահուան յիսնամեակին առթիւ»: Ե., 1991, էջ 68:

[15] Տես *Ա. Դարբինեան,* Հայ ազատագրական շարժման օրերէն: Յուշեր 1890 էն 1940: Փարիզ, 1947, էջ 154–155:

[16] Տես *Օ. Մխիթարեան,* Վանի հերոսամարտը: Սոֆիա, 1930, էջ 25: Նաև տես *Ս. Ակունի,* Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը: Կ.Պոլիս, 1920, էջ 16:

[17] «Ամերիկեան դեսպան Մր. Մորկընթաուի յիշատակները ...», էջ 246:

[18] *Հ. Կոսոյեան,* Վան-Քաղաքամիջի ապրիլեան կռիւները: Ե., 1992, էջ 16:

[19] Տես *Լ. Պրայս,* Հայկական ջարդերու փաստաթուղթերը, մաս Ա: Կազմեց Վահան Միրագենց: Կ. Պոլիս, 1920, էջ 109:

խոստացան դիմել կառավարությանը, որ նա ընդհարման տեղիք չտա: Երբ Անդրանիկի գլխավորած 1-ին կամավորական ջոկատը պատերազմի սկզբին գրավեց թուրք-պարսկական սահմանին՝ Վանից ոչ հեռու, գտնվող Սարայ գյուղաքաղաքը, Վանում իշխանությունները խուճապի մատնվեցին և պատրաստվեցին տեղափոխվել Բիթլիս: Այդ օրերին Վանում թուրքական ռազմական ուժ չկար, եթե չհաշվենք 400-ի հասնող ոստիկաններին, և ինչպես Արմենակ Եկարյանն է վկայում. «Մերինները կրնային ամեն բան ընել անարգել: Սակայն մեր վրա պարտականություն կծանրանար զգույշ կենալը, եթե քաղաքի մեջ և մերձակայքը մենք կրնայինք մեր ուզածը ընել, չէինք կրնար սակայն պաշտպանել գյուղական շրջանները՝ զուրկ ինքնապաշտպանության ամեն միջոցե, կղզիացած շատ տեղ, քրդական ծովու մեջ»[20]:

Արմենակ Եկարյանը
(1870 – 1925)

Վանի ամերիկյան ուսումնական հաստատության միսիոներուհի օրիորդ Նեպին հաղորդում էր, որ հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները «ցույց տվին գնահատելի խոհեմություն ... արգելեցին ընդհարումները և հրամայեցին գյուղացիներին լռությամբ տանել ամեն բան: Խորհուրդ տվին հրկիզված գյուղերի համար վրեժխնդիր չլինել, որպեսզի իրենց կողմից որևէ փոխադարձությամբ ընդհանուր ջարդ առաջ չբերվեր»[21]:

Իսկ ամերիկուհի Գրեյս Քնապը վկայել է. «մենք կանխագուշակում էինք, որ բախում է լինելու, բայց դաշնակցականները ցուցաբերում էին զարմանալի ինքնատիրապետում ու խոհեմություն, զսպում էին տաքարյուն երիտասարդությանը, հսկում փողոցներում, որպեսզի կանխեն հուզումները և գյուղական բնակչությանը հրամայում էին ավելի շուտ լուռ համբերել, եթե մեկ կամ երկու գյուղ ավերվի, քան թե դիմադրելով առիթ տալ ջարդերի»[22]:

Կար նաև մի կարևոր իրողություն, որի մասին Յ. Լեփսիուսն շտապում է 1915 թ. հունիսի 22-ին հաղորդել Գերմանիայի արտգործնախարարության խոհրդական Ռոզենբերգին: Նա նշում է, որ «Վանի տարածքի հայերը սկզբունքորեն պատրաստ են իրենց հարցը սահմանազատել ռուսների հարցից, քանի որ նրանք թուրքական գերիշխանությունը գերադասում են ռուսականից: Նրանք

[20] «Յուշեր Արմենակ Եկարեանի»: Գահիրե, 1947, էջ 186:

[21] Տես «Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը»: Կ. Պոլիս, 1920, էջ 47:

[22] *Վ. Գուստ*, Հայերի ցեղասպանությունը 1915–1916. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից: Ե., 2005, էջ 159–160:

կռվում են ոչ թե ռուսների, այլ իրենց հայենակիցներին քրդերի հարձակումներից պաշտպանելու համար: Նաև ռուսահայերի առաջնորդներն են այդ տեսակետին, ինչպես հավաստիացնում են ինձ, և ապագայում կարող են հակվել գերմանա-թուրքական շահերին»[23]:

Քլարենս Աշերը
(1870 – 1955)

Մինչդեռ թուրքերը համոզված էին, որ «քրիստոնյաներին պետք է կոտորել»[24]: Այսպես. Զևդետը հայերի ու թուրքերի միջև միջնորդ Իտալիայի փոխհյուպատոս Սպորդոնին և ամերիկացի միսիոներ Աշերին հասցեագրված նամակում նշել է. «Ըսէք հայերուն, թող չկարծեն թէ չենք գիտեր. Թիւրքիոյ հանդէպ իրենց թշնամական դիրքը գաղտնիք մը չէ մեզի համար: …Թող լաւ գիտնան հայերը, երբ ջարդ սկսի հայերու՝ նախորդին նման չպիտի լինի բնաւ: Այս անգամ կիներուն ու երեխաներուն ալ չպիտի խնայենք: Այս երկիրը կամ միւսիլմաններուն պիտի ըլլայ բոլորովին, կամ քրիստոնիաներուն»[25]:

Հ. Մորգենտաուն պետքարտուղարին հասցեագրված 1915 թ. հուլիսի 10-ի հեռագրում ընդհանրացնում է, որ Վանի նահանգում «սարսափելի վրեժ է լուծվում» այն բանի համար, որ որոշ հայեր որպես կամավոր միացել են ռուսական բանակին և օգնել ռուսներին գրավելու Վանը[26]: Սակայն, եթե նկատի առնենք, որ աշխարհի հայերի մոտավորապես կեսն այդ ժամանակ բնակվում էր Կովկասի ռուսական նահանգներում, և որ նրանք՝ ռուսների պես ենթակա էին զինվորական ծառայության, ուստի «այս հայ զինուորագիրները Ցարին (ցարին – *Ա. Հ.*) հաւատարիմ *(bona fide)* հպատակներ էին»[27]:

Տեղական իշխանությունները, ինչպես և բանակում եղած երիտթուրք գործիչները մի քանի անգամ դիմեցին Վանի դաշնակցականներին՝ առաջարկելով նրանց հետ կանգնեցնել կամավորական խմբերի շարժը Պարսկաստանից:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այդ դիմումներից մեկը: Այդ միջոցին Նաջի բեյը, որը Բաջիրկանեում ղեկավարում էր չեթեական խմբերը և դրանց միջոցով Պարսկաստանում կազմակերպում էր ռուսների դեմ խռովություններ, 1914 թ. դեկտեմբերի 4-ին Բաջիրկանեից «իր բարեկամ» Ա. Վռամյանին ուղղված հեռագրում նշում է, որ հայերը, մասնավորապես՝

[23] Տես նույն տեղում, էջ 82:

[24] Տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 10, թ. 22:

[25] «Վան-Տոսպ»: Թիֆլիս, 1916, հմ. 16, էջ 5, նաև՝ *Ե. Գեղամեան,* Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը, մաս 2: Բաքու, 1915–1917, էջ 624–625:

[26] Տես «Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին»: Կազմող և ներածության հեղինակ՝ Տիգրան Զաքարյան: Ե., 2002, էջ 36:

[27] «Ամերիկեան դեսպան Մր. Մորկընթաուի յիշատակները …», էջ 245:

Սմբատն իր ընկերներով, համագործակցում են ռուսների հետ. «Ձեզմէ վերջին և կտրուկ պատասխան մը չստանալու պարագայիս, Պարսկաստանի մէջ եղող մէկ քանի հարիւրնոց ձեր ընկերներուն հանդէպ իբր ռուսների պիտի վարուիմ»[28]:



Վանա Իշխանը
(Նիկոլ Պողոսյան, 1883 – 1915)

Ա. Վռամյանը պատասխան հեռագրում նշում է. որ «կընա ըլլալ, որ Սմբատը ինքն իր գլխու բան մը գրած ըլլայ, և ամեն պարագայի մէջ Սմբատի իրաւասու ըլլալը ինձ անծանօթ է ...: Անոնց ամենամեծ մտահոգութիւնը այս երկրի հայերուն վտանգի մը ենթարկուիլը կրնա ըլլալ: Վերջին օրերուն Բաշկալէի ջարդերը, Մանդան, Հերեսան գիւղերուն չէթաներուն կողմէ բնաջնջուիլը, ժանդարմներու կողմէ հայերու հանդէպ ամեն տեսակ անպատշաճութիւններն ու սպանութիւնները և ոճրագործներու անպատիժ մնալը, համիդիէներու կողմէ անցած գիւղերու մէջ ըրած թալանը և կառավարութեան եղած բողոքներուն անլսելի մնալը, ասկէ զատ կամաւորներու կողմէ հայ գիւղերու մէջ և հայերու դէմ կարգ մը անպատշաճութիւնները, և վերջապէս բոլոր հայ ժանդարմներուն զինաթափուիլը և Պիթլիս ղրկուիլը իմացանք: Բոլոր այս գործողութիւնները մեծ մտահոգութիւններ պատճառած են, և կրնա ըլլալ, որ ասոնք իմանալով, օգնութեան գալու մտադրութիւն ունեցած են»[29]:

Այդպիսի առաջարկություն արել է նաև Վանի կուսակալ Ձևդետը: 1914 թ. դեկտեմբերի կեսին Ձևդետը Սարայից իր փոխանորդի միջոցով Վռամյանին ու Արամին առաջարկում է, որ նրանք ձի նստեն, գնան Սալմաստ և ցրեն կամավորական խմբերը: Այս առաջարկին Վռամյանն ու Արամը պատասխանում են, որ իրենք պատրաստ են ճանապարհ ընկնելու միայն մի պայմանով, այն է՝ թույլատրվի, որ արևմտահայ կամավորներն իրենց զենքերով վերադառնան հայրենիք: Այս առաջարկությունը Ձևդետը չի ընդունում, իսկ Ա. Վռամյանն ու Արամն էլ իրենց տեղերից չեն շարժվում[30]:

Փաստ է, որ Թուրքիայի դեմ ռուսական բանակի կազմում կռվելու պատրաստակամ հայ կամավորների հիմնական մասը ոչ միայն Ռուսաստանի, այլև եվրոպական և հյուսիսամերիկյան տարբեր երկրների քաղաքացիներ ու հպատակներ էին: Ըստ գերմանացի մայոր Լանգեի տեղեկությունների՝ ռուսական զորքերի կողմում կռվել են հիմնականում հրեաներ, լեհեր, վրացի-

[28] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Ա-Դօ,* Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թվականներին: Ե., 1917, էջ 97:

[29] Տես նույն տեղում, էջ 98:

[30] Տես «Оборона Вана, 7 апреля – 4 мая 1915 г.». М., 1917, с. 15:

ներ, հույներ և նույնիսկ գերմանացիներ[31]: Ինչպե՞ս կարող էին թուրքերը կամավորների շարքերում նախկինում օսմանյան հպատակ հայերի առկայությունը անվերապահորեն դարձնել բոլոր օսմանահպատակ հայերին ուղղված մեղադրանք: «Դավաճան որակվածների թիվը այնքան ճղճիմ էր,– գրում է Ս. Ակունին,– որ որևէ պարագայի տակ, հավաքական պատասխանատվություն մը չէր կրնար հրավիրել երկու միլիոն Թուրքիո հայերու վրա»[32]:

Կատարելով միանգամայն ճիշտ հարցադրում՝ Վ. Տատրյանը նշում է. «ինչո՞ւ է անտեսվում այն փաստը, որ Թուրքիայի դեմ ռուսական բանակում կռվում էին հազարավոր ազերիներ և քրդեր: Նույնը կարելի է ասել Ռուսաստանից և Եվրոպայից ժամանած հազարավոր հրեա կամավորների մասին, ովքեր 1915 թ. Դարդանելում Բրիտանական Արշավային ուժերի կազմում, իսկ 1918 թ.՝ բրիտանական գեներալ Ալլենբիի բանակում կռվում էին այդ նույն թուրքերի դեմ, նաև Պաղեստինի ճակատում: Չի՞ ենթադրվում արդյոք այս ամենով, որ հայերին թիրախ դարձնելու և ցեղասպանության ենթարկելու որոշման հիմքում ոչ թե թուրքերի դեմ ռուսական բանակում կռվող մի քանի հազար հայ կամավորի առկայությունը, այլ սկզբունքային ու ռազմավարական տարաբնույթ նկատառումներն էին»[33]:

Իսկ արաբ հեղինակ Ֆուադ Հասան Հաֆիզը արձանագրում է. «Ինչ վերաբերում է հայերին, որոնք կռվել են օսմանյան պետության դեմ 1915 թ. սկզբին, ապա նրանք եղել են իրանական և ռուսական հայեր, որոնք որևէ պարտավորվածություն չունեին օսմանյան պետության հանդեպ»[34]: Ըստ Ն. Հովհաննիսյանի՝ դա տրամաբանական է, քանի որ թուրքահպատակ արևմտահայերը չէին կարող պատասխանատվություն կրել այլ պետություններում, տվյալ դեպքում՝ Ռուսաստանում և Իրանում, բնակվող հայերի գործողությունների համար: Նրանք հանդես չեն եկել Ռուսաստանի կողմում, և որպես օսմանյան պետության հպատակներ, բարեխղճորեն կատարել են Թուրքիայի նկատմամբ իրենց ունեցած պարտականությունները[35]:

Չմոռանանք նաև, որ դեռ 1914 թ. օգոստոսին իթթիհատականները Վանի ու Կարինի հայ ղեկավարներին կոչ էին անում տեղափոխվելու Արևելյան Հայաստան և ռուսական կառավարության դեմ «յեղափոխութիւն յուրացանելու փորձ կատարել»[36]: Այսպես. «Միության և առաջադիմության» անդամ Նաջի բեյն ու Վանի գեներալ-նահանգապետ Թահսիմ բեյը հայերին համոզում էին

[31] Տես *Վ. Գուստ,* Հայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը: Ե., 2002, էջ 148:

[32] *Ս. Ակունի,* Նշ. աշխ., էջ 17:

[33] *Վ. Տատրյան,* Հայոց ցեղասպանության հերքման հիմնական փաստարկները: Աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն: Ե., 2005, էջ 22:

[34] Տես *Ն. Հովհաննիսյան,* Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո: Ե., 2004, էջ 143:

[35] Տես նույն տեղում:

[36] Տես ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 76, թ. 37:

միանալ թուրքերին՝ կազմելով թեկուզ մի քանի հարյուր մարդուց բաղկացած կամավորական ջոկատներ, և զինվելով Թուրքիայի հաշվին: Ընդ որում, նրանք չէին էլ թաքցնում, թե ինչ քաղաքական և բարոյական նշանակություն կունենար հայերի հանդես գալը՝ թուրքերի հետ ձեռք ձեռքի տված: Երիտթուրքերը, վստահ լինելով իրենց հաղթանակում, մտադիր էին Ռուսաստանի սահմանը հեռացնելու մինչև Կովկասյան լեռներ և Այսրկովկասում ստեղծելու հայկական, վրացական և թաթարական ինքնավար շրջաններ[37]: Սակայն էրզրումի 1914 թ. սեպտեմբերի համագումարը մերժեց առաջարկությունը[38]:

Արևելահայերի ղեկավարներին էլ նրանք առաջարկում էին մոտ 120 ձերբակալված արևմտահայ առաջնորդների ու մտավորականների ազատ արձակելու և հետագա տեղահանումներից հրաժարվելու դիմաց դադարեցնել իրենց գործունեությունը Վանի տարածքում և սահմանազատվել Ռուսաստանի ձեռնարկումներից[39]: Ավելին. ըստ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանն ուղղված 1915 թ. նոյեմբերի 11-ի Ե. Տեր-Մինասյանի զեկուցագրի՝ երիտթուրքերի ներկայացուցիչներ Բեհաէդդին Շաքիրը, Հաջի (Նաջի) բեյը և Հիլմի բեյը հայերին կամավորական շարժման վերացման դիմաց խոստանում էին ինքնավար Հայաստան՝ կազմված Երևանի ու Կարսի նահանգներից, Ելիզավետպոլի նահանգի արևմտյան մասից և դրանց միացված Վանի, էրզրումի ու Բիթլիսի վիլայեթների հարակից մասերից[40]:

Եվ քանի որ արևմտահայերը մերժեցին այդ առաջարկությունը, այն ավելի սաստկացրեց առկա լարվածությունը: «Թիւրք Կառավարութիւնը չափազանցեց Վանի Հայերուն «դաւաճանական» ընթացքը եւ մինչեւ իսկ զայն իբր չքմեղանք ծառայեցուց ամբողջ ցեղին հանդէպ իր վարմունքին»[41]:

Եվ այսպես. չնայած բոլոր դժվարություններին՝ թուրքահպատակ հայերը կատարում էին իրենց քաղաքացիական պարտքն ու փորձում էին խուսափել անախորժություններից և աղետներից:

Ձ. Կիրակոսյանի կարծիքով՝ Վանում գործած ազգային կուսակցությունների մեղքը ոչ թե ապստամբական նախապատրաստություններն էին, այլ ընդհակառակը՝ այդ ամենին պատրաստ չլինելը, նրանց աննպատակ դեգերումները, իրենց կոնկրետ ծրագիրն ու անելիքները չիմանալը, մոտալուտ գալիքի աղոտ պատկերացումը: Վերջին հաշվով նրանք անտեղյակ էին, թե վաղն ինչ է անելու կառավարությունը և դրան համապատասխան՝ որը պետք է

[37] Տես «Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության մասին»: Կազմող, առաջաբանի, թարգմանության հեղինակ՝ Արմեն Մարուքյան: Ե., 2001, էջ 69:

[38] Տես ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 76, թ. 37:

[39] Տես *Վ. Գուստ,* Հայերի ցեղասպանությունը 1915–1916. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, էջ 81–82:

[40] Տես «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Խմբագրությունը՝ Մ. Գ. Ներսիսյանի: Ե., 1991, էջ 400:

[41] Տես «Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները …», էջ 245:

լինի իրենց դիրքը[42]: Նրանց այդ գործելակերպը, երիտթուրքական կառավարությունից ակնկալությունները փաստորեն շարունակվեցին մինչև Վանի ինքնապաշտպանությունը:

Եվ այսպես. Վանի հայ հասարակական-քաղաքական շրջանները, մասնավորապես՝ Դաշնակցությունը, որը 1914 թ. օգոստոսին Էրզրումում ընդհանուր ժողով էր գումարել և հայտարարել օսմանյան (թուրքական) պետության նկատմամբ իր հավատարմության մասին, ոչ միայն դեմ էին անգամ ամենափոքր ապստամբական շարժում հրահրելուն և պաշտոնապես կամավորական գնդեր կազմավորելուն, այլև հայությանը խրախուսում էին կատարելու հայրենիքի նկատմամբ իր ունեցած քաղաքացիական պարտքը:

Հայ ինքնապաշտպանները թուրքերից գրաված թնդանոթներով. 1915 թ.

Ուստի Վանի ինքնապաշտպանությունն ընդամենը պատրվակ էր կոտորածներ սկսելու համար: Այդ առումով Ատրպետը 1916 թ. գրում էր, որ Վանի ինքնապաշտպանությունը, հայերի և ռուսների համերաշխ և միասնական գործողությունները լոկ առիթ դարձան ջարդերի կազմակերպման համար[43]:

Յոհաննես Լեփսիուսը, բերելով երիտթուրքերի հայտարարության մեջ թվարկված «մեղադրանքները», նշում է, որ դրանք ամենևին էլ բավարար չեն հայերին հեղափոխության ձգտման մեջ մեղադրելու համար: Հակառակը, պատրիարքարանը և Դաշնակցությունը ուժերի գերլարմամբ աշխատում էին բացառել որևէ անխոհեմ քայլ, որը կարող էր երիտթուրքերին առիթ տալ «սխալ հասկանալու» հայերին, և ամենայն պատասխանատվությամբ կատարում էին իրենց պարտականությունները: «Միակ բացատրությունը, որը թույլ չի տալիս իշխանությունների ձեռնարկած միջոցները համարել ոչ բանական,

[42] Տես *Ջ. Կիրակոսյան,* Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914–1916 թթ.: Ե., 1965, էջ 265:

[43] Տես «Армянскій въстникъ» еженедъльный журналь. Москва, 1916 г., № 14:

այն է, որ խոսքը մի այնպիսի ներքաղաքական ծրագրի իրագործման մասին է, որի նպատակն էր սառը դատողականությամբ հաշվարկված հայկական ազգային տարրի բնաջնջումը»[52]:

Պոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչի 1917 թ. մայիսի զեկույցից երևում է, որ «Արևմտահայության կոտորածներն առաջացել են բացառապես թուրքական կառավարության կողմից, որն առաջնորդվելով Բալկանյան պատերազմների փորձով՝ զգուշանում էր, որ հայերը կդավաճանեն Թուրքիային... Այդ պլանի իրականացումը հետաձգվեց անգլիական նավատորմից ունեցած վախի պատճառով: Երբ դաշնակիցները հետ շպրտվեցին Դարդանելից, թուրքական կառավարությունը դադարեց վախենալուց և որոշեց կազմակերպել հայկական կոտորածներ, որպեսզի զերծ մնան վախից, որը թուրքական կառավարությանը ներշնչում են հայ հեղափոխական կազմակերպությունները»[53]:

Այսպիսով՝ իրականում բուն պատճառը պանթուրքականության այն ծրագիրն էր, որ թելադրում էր բնաջնջման տվյալ ռազմարշավը, որը 1914–1915 թթ. ձմռանը թուրքական և քրդական զորքերին առաջնորդեց Ուրմիայի ու Սալմաստի խաղաղ հայ և ասորի բնակչության դեմ: Այդ ծրագիրն էր, որ Դիարբեքիրի ու Մոսուլի նահանգներում առաջացրեց համընդհանուր հալածանք, որին զոհ գնացին հակոբյանները, քաղկեդոնականները, նեստորականները և հայերը: Հետևաբար՝ առանց «Վանի ապստամբության» էլ կոտորածի այդ հրեշավոր ծրագիրը իրականացվելու էր:

---

[52] *Johannes Lepsius.* Der Todesgang des armenischen Volkes. Bericht über das Schicksal des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges. Potsdam 1919 (Reprint Bremen 1986), SS. 215–217 (https://ia802308.us.archive.org/30/items/bub_gb_1XPUAAAAMAAJ/bub_gb_1XPUAAAAMAAJ.pdf).

[53] Տես *Ս. Ալեքսանյան, Վ. Էվոյան, Ա. Սարգսյան,* Մարդկությունը չպետք է ների (փաստաթղթեր հայ ժողովրդի բնաջնջման թուրքական հրեշավոր պլանների և Մեծ Եղեռնի մասին): «ԲՀԱ», 1965, հմ. 1, էջ 70:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

К ВОПРОСУ О ПОЗИЦИИ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИХ КРУГОВ ВАНА В ОТНОШЕНИИ ПОВСТАНЧЕСКИХ НАСТРОЕНИЙ И ДОБРОВОЛЬЧЕСКОГО ДВИЖЕНИЯ

А. А. АРУТЮНЯН, кандидат исторических наук, доцент кафедры истории Армении АГПУ

РЕЗЮМЕ

Турецкая пропагандистская машина пытается оправдать политику Геноцида армян в начале XX в. путем фальсификации исторических реалий. В частности, в качестве одной из основных причин резни армян в

Ванском вилайете в 1915 г. представляется антитурецкое восстание армянского населения. Однако факты, приводимые в свидетельствах иностранных представителей (Лепсиус, Розенберг, Моргентау и другие), а также деятелей армянских политических партий, подтверждают, что армяне Вана до антиармянских акций правительства младотурок не рассматривали вопрос о возможности антитурецких выступлений. К этому их склоняла и позиция социально-политических кругов Вана, в частности, АРФ «Дашнакцутюн», призывавших население Вана к «благоразумию, самоконтролю, смирению и верности Оттоманскому государству и выполнению своего гражданского долга» в Первой мировой войне.

Лишь провокации и насилие со стороны правительственных сил в отношении беззащитного населения побудили армян Вана перейти к самообороне, чем воспользовались младотурки для претворения в жизнь своей политики насильственной тюркизации населения с уничтожением армян и других христианских народов, отказавшихся от добровольного принятия ислама и турецкой идентичности.

MILITARY HISTORY

TO THE ISSUE OF THE STANCE OF THE SOCIO-POLITICAL CIRCLES IN VAN ON INSURGENT MOODS AND VOLUNTEER MOVEMENT

A.H. HARUTYUNYAN, PhD in History, Associate Professor,
Chair of the History of Armenia, ASPU

SUMMARY

The Turkish propaganda machine tries to justify the policy of the Armenian Genocide at the beginning of the 20th century by falsifying historical realities. In particular, the anti-Turkish uprising of the Armenian population is considered one of the main causes of the Armenian massacre in the Villayet of Van in 1915. However, the facts mentioned in the testimonies of foreign representatives (Lepsius, Rosenberg, Morgenthau and others), as well as figures of Armenian political parties, confirm that Armenians of Van did not consider the possibility of anti-Turkish marches until the Young Turk government's anti-Armenian actions. They were also inclined to that due to the stance of the socio-political circles in Van, in particular the ARF Dashnaktsutyun, which called the population of Van "to keep prudence, self-control, humility and loyalty to the Ottoman state and fulfill its civic duty" in the World War I.

Only provocations and violence by the government forces against the defenseless population impelled the Armenians of Van to go over to self-defense, which the Young Turks speculated in order to implement their policy of violent Turkification of the population via exterminating Armenians and other Christian peoples who rejected to voluntarily accept Islam and the Turkish identity.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր

ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազատականացում – либерализация – liberalization

անկյունաքարային փաստաթուղթ – основополагающий документ – key document

ապագաղութացում – деколонизация – decolonization

ապաձևական կրթություն – информальное образование – informal education, informal learning

ավանդական հասարակություն – традиционное общество, закрытое общество – traditional society, closed society

արագացումաչափ – акселерометр – accelerometer

արդիական հասարակություն – современное общество, открытое общество – contemporary society, open society

արևմտացում – вестернизация – westernization

բաց հասարակություն – տես *արդիական հասարակություն*

բնաշխարհիկացում – индигенизация – indigenization

գաղտնագրային մեթոդ – шифровальный метод – encryption technique, cryptographic technique

գիտահետազոտական բաղադրիչ – научно-исследовательский компонент – academic-research component

գիտութենահենք տեխնոլոգիա – наукоемкая технология, высокая технология – science-based technology, high technology

գործակցական տեղեկութային միջավայր – интерактивная информационная среда – interacting information environment

գործառութային վերածածկում – наложение функций – functional overlapping

եզրահանում – маргинализация – marginalization

երկճյուղում – дихотомия – dichotomy

երևակայական իրականություն – виртуальная реальность – virtual reality

զինղեկ – военрук – military instructor

զորավարժարան – полигон (учебный) – training ground

զորէջք – 1. десантирование, 2. выброска десанта – 1. landing, 2. insertion of troops

զսպման գործիքարան – инструментарий сдерживания *1, 2* – 1. containment toolkit, 2. տես *սաստման գործիքարան*

էլեկտրոնակրակային հարված – электронно-огневой удар – electron-firing stroke

ընթացակարգային վարժանք – процедурный тренинг – procedural training

ընկղմում – погружение – immersion

ընտելացում – привыкание – 1. addiction, 2. habituation

ընտրանի – элита – elite

ժամանակակցություն – актуальность – contemporaneity

ինքնավարականություն – автономность – autonomness
իրազեկույց – донесение – dispatch
լայն հասարակայնություն – широкая общественность – general public
լրացված իրականություն – дополненная реальность – augmented reality
խելացի ուժ–умная сила–smart power
ծագվածություն – порожденность – origination
կադրային հոսունություն – текучесть кадров – staff turnover, wastage rate
կազմակերպվածք – организационное устройство – organizational structure
կայանքակենտրոն պատերազմ – платформоцентричная война – platform-centric warfare
կեղծ լուրեր – фальшивые новости – fake news
կերպափոխում – трансформация – transformation
կիբեռանվտանգություն – кибербезопасность – cybersecurity
կիբեռհարձակում – кибератака – cyberattack
կիբեռտարածություն – киберпространство – cyberspace
կրթական բաղադրիչ – образовательный компонент – educational component
հակընտրանի – контрэлита – counter-elite
համարժեքություն – эквивалентность, равноценность – equivalence, equivalency
համընդհանրացում – глобализация – globalization
հաստատութենական բարեփոխում – институциональная реформа – institutional reform
հասցեական լսարան – целевая аудитория – target audience
հավաստագրում – сертификация – certification
հարացույց – парадигма – paradigm
հարմարվողականություն – приспособляемость – adaptiveness
հարմարունակ գործակցություն – удобное сотрудничество – convenient collaboration
հենակետային դպրոց – опорная школа – basic school
հեռահար հրթիռահրետանային միջոց – дальнобойное ракетно-артиллерийское средство – long-range rocket-artillery means
հետազոտահենք կրթություն – образование на базе исследований – research-based education
հոգեբանական պատրաստում – психологическая подготовка – psychological preparation, psychological training
հոլակ – гироскоп – gyroscope
հրահանգիչ – инструктор – instructor
ձևական կրթություն – формальное образование – formal education, formal learning
ճգնաժամների կառավարման վարժանք – тренинг по управлению кризисами – crisis management exercise
մասնագիտական իրազեկվածություն – профессиональная компетентность – professional awareness
մարտական պատրաստականություն – боевая выучка – warfare skills
մարտական պատրաստություն – боевая готовность – combat readiness
մարտական պատրաստում – боевая подготовка – combat training
միջնորդավորված օգուտ – опосредованная польза – mediated interests
մոդելարկիչ – моделирующее устройство – simulator
մոնումենտալ համայնապատկեր – монументальная панорама – monu-

mental panorama
մտահայեցողություն – умозрительность – speculativeness
նախատիպ – прообраз, прототип – prototype
նախնական զինվորական պատրաստություն – տես *նախնական զինվորական պատրաստում*
նախնական զինվորական պատրաստում – начальная военная подготовка – basic military training
«ներդրված ժուռնալիստ» – «внедренный журналист» – embed, embedded journalist
նորամուծական գործունեության հայեցակարգ – концепция инновационной деятельности – concept of innovation
նպատակակենտրոն կառավարում – целеориентированное управление – goal-based management
ոչ կանոնավոր պատերազմ – нерегулярная война – irregular warfare
ոչ ձևական կրթություն – неформальное образование – non-formal education, non-formal learning
պակասուրդ – дефицит – 1. deficiency, 2. short supply
պետութենաշինություն – государственное строительство – state-building
պլաստիկ ոսպնյակ – пластиковая линза – plastic lenses
պրոֆիլային համալսարան – профильный университет – specialized university
ռազմամասնագիտական կողմնորոշում – военно-профессиональная ориентация – military-vocational orientation, military professional orientation
սահմանակարգային բարեփոխում – институциональная реформа – institutional reform
սաստման գործիքարան – инструментарий сдерживания, инструментарий устрашения – deterrence toolkit
սոցիալական շարժունակություն – социальная мобильность, социальная подвижность – social mobility, social locomotion
ստվարաթղթե ակնոց – картонные очки – cardboard glasses
ստրեսակայունություն – стрессоустойчивость – stress resilience
վարքային որոշում – поведенческое решение – behavioral decision
տարաշարժուն պաշտպանություն – маневренная оборона, подвижная оборона – maneuver defense
տեղեկատվական գերազանցություն – информационное превосходство – information superiority
տեղեկատվական ենթակառուցվածք – информационная инфраструктура – information infrastructure
տեղեկատվական հոսք – информационный поток – information flow, data stream
տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաներ – информационно-коммуникационные технологии – information-communication technologies
տեղեկութային հասարակություն – информационное общество – information society
տեղեկութային ուղեցուցորդ – информационный проводник – information guide
տեղեկութացում – информатизация – informationalization
տեղեկույթի փոխանակում – обмен информацией – change of information
տիեզերական հեռադիտական միջոցներ – космические средства дистанционного наблюдения – space sensing technologies
ցանցակենտրոն պատերազմ – сете-

центричная война – network-centric warfare
ցանցային ժուռնալիստ – сетевой журналист – online journalist, cyber-journalist
ուսումնական սարքավորանք – учебное оборудование – training equipment
ուսումնամեթոդական ղեկավարում – учебно-методическое управление – teaching and methodological management
ուսումնանյութական բազա – учебно-материальная база – educational and material base
ուսումնավարժեցում – обучение – training
փակ հասարակություն – տես *ավանդական հասարակություն*
փոխգործականություն – интерактивность – interactiveness
օդածովային գերազանցություն – превосходство в воздухе и на море – air and maritime superiority

ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

автономность – ինքնավարականություն
акселерометр – արագացումաչափ
актуальность – ժամանակակցություն
боевая выучка – մարտական պատրաստականություն
боевая готовность – մարտական պատրաստություն
боевая подготовка – մարտական պատրաստում
вестернизация – արևմտացում
виртуальная реальность – երևակայական իրականություն
«внедренный журналист» – «ներդրված ժուռնալիստ»
военно-профессиональная ориентация – ռազմամասնագիտական կողմնորոշում
военрук – զինղեկ
выброска десанта – զորէջք
высокая технология – см. *наукоемкая технология*
гироскоп – հոլակ
глобализация – համընդհանրացում
государственное строительство – պետութենաշինություն
дальнобойное ракетно-артиллерийское средство – հեռահար հրթիռահրետանային միջոց
деколонизация – ապագաղութացում
десантирование – զորէջք
дефицит – պակասուրդ
дихотомия – երկճյուղում
донесение – իրազեկույց
дополненная рельность – լրացված իրականություն
закрытое общество – см. *традиционное общество*
индигенизация – բնաշխարհիկացում
институциональная реформа – 1. հաստատութենական բարեփոխում, 2. սահմանակարգային բարեփոխում
инструктор – հրահանգիչ
инструментарий сдерживания – 1. զսպման գործիքարան, 2. սաստման գործիքարան, զսպման գործիքարան
инструментарий устрашения – см. *инструментарий сдерживания 2*
интерактивная информационная среда – գործակցական տեղեկութային միջավայր
интерактивность – փոխգործականություն
информальное образование – ապաձևական կրթություն
информатизация – տեղեկութացում

информационная инфраструктура – տեղեկատվական ենթակառուցվածք
информационное общество – տեղեկութային հասարակություն
информационное превосходство – տեղեկատվական գերազանցություն
информационно-коммуникационные технологии – տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաներ
информационный поток – տեղեկատվական հոսք
информационный проводник – տեղեկութային ուղեցուցորդ
картонные очки – ստվարաթղթե ակնոց
кибератака – կիբեռհարձակում
кибербезопасность – կիբեռանվտանգություն
киберпространство – կիբեռտարածություն
контрэлита – հակընտրանի
концепция инновационной деятельности – նորամուծական գործունեության հայեցակարգ
космические средства дистанционного наблюдения – տիեզերական հեռադիտական միջոցներ
либерализация – ազատականացում
маневренная оборона – տարաշարժուն պաշտպանություն
маргинализация – եզրահանում
моделирующее устройство – մոդելարկիչ
монументальная панорама – մոնումենտալ համայնապատկեր
наукоемкая технология – գիտութենահեղ տեխնոլոգիա
научно-исследовательский компонент – գիտահետազոտական բաղադրիչ
наложение функций – գործառութային վերածածկում
начальная военная подготовка – նախնական զինվորական պատրաստում, նախնական զինվորական պատրաստություն
нерегулярная война – ոչ կանոնավոր պատերազմ
неформальное образование – ոչ ձևական կրթություն
обмен информацией – տեղեկույթի փոխանակում
образовательный компонент – կրթական բաղադրիչ
обучение – ուսումնավարժեցում
опорная школа – հենակետային դպրոց
опосредованная польза – միջնորդավորված օգուտ
организационное устройство – կազմակերպվածք
основополагающий документ – անկյունաքարային փաստաթուղթ
открытое общество – см. *современное общество*
парадигма – հարացույց
пластиковая линза – պլաստիկ ոսպնյակ
платформоцентричная война – կայանքակենտրոն պատերազմ
поведенческое решение – վարքային որոշում
погружение – ընկղմում
подвижная оборона – см. *маневренная оборона*
полигон (учебный) – զորավարժարան
порожденность – ծագվածություն
превосходство в воздухе и на море – օդածավային գերազանցություն
привыкание – ընտելացում
приспособляемость – հարմարվողականություն
прообраз – նախատիպ
прототип – см. *прообраз*
профессиональная компетентность – մասնագիտական իրազեկվածություն
профильный университет – պրոֆիլային համալսարան

процедурный тренинг – ընթացակարգային վարժանք
психологическая подготовка – հոգեբանական պատրաստում
равноценность – см. *эквивалентность*
сертификация – հավաստագրում
сетевой журналист – ցանցային ժուռնալիստ
сетецентричная война – ցանցակենտրոն պատերազմ
современное общество – արդիական հասարակություն, բաց հասարակություն
социальная мобильность – սոցիալական շարժունակություն
социальная подвижность – см. *социальная мобильность*
стрессоустойчивость – ստրեսակայունություն
текучесть кадров – կադրային հոսունություն
традиционное общество – ավանդական հասարակություն, փակ հասարակություն
трансформация – կերպափոխում
тренинг по управлению кризисами – ճգնաժամների կառավարման վարժանք
удобное сотрудничество – հարմարունակ գործակցություն
умная сила – խելացի ուժ
умозрительность – մտահայեցողություն
учебное оборудование – ուսումնական սարքավորանք
учебно-материальная база – ուսումնանյութական բազա
учебно-методическое управление – ուսումնամեթոդական ղեկավարում
фальшивые новости – կեղծ լուրեր
формальное образование – ձևական կրթություն
целевая аудитория – հասցեական լսարան
целеориентированное управление – նպատակակենտրոն կառավարում
широкая общественность – լայն հասարակայնություն
шифровальный метод – գաղտնագրային մեթոդ
эквивалентность – համարժեքություն
электронно-огневой удар – էլեկտրոնակրակային հարված
элита – ընտրանի

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

academic-research component – գիտահետազոտական բաղադրիչ
accelerometer – արագացումաչափ
adaptiveness – հարմարվողականություն
addiction – ընտելացում
air and maritime superiority – օդածովային գերազանցություն
augmented reality – լրացված իրականություն
autonomness – ինքնավարականություն
basic military training – նախնական զինվորական պատրաստում, նախնական զինվորական պատրաստություն
basic school – հենակետային դպրոց
behavioral decision – վարքային որոշում
cardboard glasses – ստվարաթղթե ակնոց
certification – հավաստագրում
change of information – տեղեկույթի փոխանակում
closed society – see *traditional society*
combat readiness – մարտական պատրաստություն
combat training – մարտական պատրաստում
concept of innovation – նորամուծական գործունեության հայեցակարգ

containment toolkit – see *deterrence toolkit*
contemporaneity – ժամանակակցություն
contemporary society – արդիական հասարակություն, բաց հասարակություն
convenient collaboration – հարմարունակ գործակցություն
counter-elite – հակընտրանի
crisis management exercise – ճգնաժամների կառավարման վարժանք
cryptographic technique – see *encryption technique*
cyberattack – կիբեռհարձակում
cyberjournalist – see *online journalist*
cybersecurity – կիբեռանվտանգություն
cyberspace – կիբեռտարածություն
data stream – see *information flow*
decolonization – ապագաղութացում
deficiency – պակասուրդ
deterrence toolkit – զսպման գործիքարան, սաստման գործիքարան
dichotomy – երկճյուղում
dispatch – իրազեկույց
educational and material base – ուսումնանյութական բազա
educational component – կրթական բաղադրիչ
electron-firing stroke – էլեկտրոնակրակային հարված
elite – ընտրանի
embed – «ներդրված ժուռնալիստ»
embedded journalist – see *embed*
encryption technique – գաղտնագրային մեթոդ
equivalence – համարժեքություն
equivalency – see *equivalence*
fake news – կեղծ լուրեր
formal education – ձևական կրթություն
formal learning – see *formal education*
functional overlapping – գործառութային վերածածկում
general public – լայն հասարակայնություն
globalization – համընդհանրացում
goal-based management – նպատակակենտրոն կառավարում
gyroscope – հոլակ
habituation – ընտելացում
high technology – see *science-based technology*
immersion – ընկղմում
indigenization – բնաշխարհիկացում
informal education – ապաձևական կրթություն
informal learning – see *informal education*
informationalization – տեղեկութացում
information-communication technologies – տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաներ
information flow – տեղեկատվական հոսք
information guide – տեղեկութային ուղեցուցորդ
information infrastructure – տեղեկատվական ենթակառուցվածք
information society – տեղեկութային հասարակություն
information superiority – տեղեկատվական գերազանցություն
insertion of troops – զորէջք
institutional reform – 1. հաստատութենական բարեփոխում, 2. սահմանակարգային բարեփոխում
instructor – հրահանգիչ
interacting information environment – գործակցական տեղեկութային միջավայր
interactivenesss – փոխգործականություն
irregular warfare – ոչ կանոնավոր պատերազմ
key document – անկյունաքարային փաստաթուղթ
landing – զորէջք
liberalization – ազատականացում
long-range rocket-artillery means – հե-

ռահար հրթիռահրետանային միջոց
maneuver defense – տարաշարժուն պաշտպանություն
marginalization – եզրահանում
mediated interests – միջնորդավորված օգուտ
military instructor – զինղեկ
military professional orientation – see *military-vocational orientation*
military-vocational orientation – ռազմամասնագիտական կողմնորոշում
monumental panorama – մոնումենտալ համայնապատկեր
network-centric warfare – ցանցակենտրոն պատերազմ
non-formal education – ոչ ձևական կրթություն
non-formal learning – see *non-formal education*
online journalist – ցանցային ժուռնալիստ
open society – see *contemporary society*
organizational structure – կազմակերպվածք
origination – ծագվածություն
paradigm – հարացույց
plastic lenses – պլաստիկ ոսպնյակ
platform-centric warfare – կայանքակենտրոն պատերազմ
procedural training – ընթացակարգային վարժանք
professional awareness – մասնագիտական իրազեկվածություն
prototype – նախատիպ
psychological preparation – հոգեբանական պատրաստում
psychological training – see *psychological preparation*
research-based education – հետազոտահենք կրթություն
science-based technology – գիտութենահենք տեխնոլոգիա
short supply – պակասուրդ
simulator – մոդելարկիչ
smart power – խելացի ուժ
social locomotion – see *social mobility*
social mobility – սոցիալական շարժունակություն
space sensing technologies – տիեզերական հեռադիտական միջոցներ
specialized university – պրոֆիլային համալսարան
speculativeness – մտահայեցողություն
staff turnover – կադրային հոսունություն
state-building – պետութենաշինություն
stress resilience – ստրեսակայունություն
target audience – հասցեական լսարան
teaching and methodological management – ուսումնամեթոդական ղեկավարում
traditional society – ավանդական հասարակություն, փակ հասարակություն
training – ուսումնավարժեցում
training equipment – ուսումնական սարքավորանք
training ground – զորավարժարան
transformation – կերպափոխում
virtual reality – երևակայական իրականություն
warfare skills – մարտական պատրաստականություն
wastage rate – see *staff turnover*
westernization – արևմտացում

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ.
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Խմբագրման բաժնի պետ՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանչության խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Ձևավորող նկարիչներ՝ *Գ. Վ. Իսկանդարյան, Դ. Ա. Փարվանյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Մ. Ա. Ավետիսյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Դ. Ս. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի, Ք. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի*
և համացանցային

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2017 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,25 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica», «Times» և «Times New Roman»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

Մի դրվագ զորավարժություններից.
աջից ձախ՝ Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը,
Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը,
ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը
և ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը.

Արցախ, 2017 թ. դեկտեմբերի 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК НАІКАКАN ВАNАК 4 (94). 2017